ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

ՁԵԿՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԵՏԱՁՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՊԱՏՐԱՍՏԵՑ ԱՐՏԱԿ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2024 Թ

HELSINKI CITIZENS ASSEMBLY

Democracy Development Foundation

www.hcav.am

Սույն հետազոտությունն իրականացվել է Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի օժանդակության շնորհիվ «Արդարացի դատաիրավական բարեփոխումներ» ծրագրի շրջանակներում:

Զեկույցում տեղ գտած տեսակետները և վերլուծությունները արտահայտում են հեղինակների կարծիքը և կարող են չհամընկնել Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի տեսակետների և դիրքորոշումների հետ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն 3
Ամփոփագիր 4
Ներածություն 10
Մեթոդաբանական նշում 13
Գնումների օրենսդրությունը 16
Գնումների պլանավորումը 18
2.1. Հաստատված գնումների պլաններ 20
2.2. Գնումների պլանները համաձայն Armeps համակարգի 26
2.3. Գնումների պլանների համեմատական վերլուծություն 28
Գնումների կատարումը 33
3.1. Տեխնիկական բնութագրերը և պայմանագրերի այլ պահանջները 33
3.2. Գնումների քանակական և ֆինանսական ցուցանիշների վերլուծություն 34
3.3. Հրատապ բաց մրցույթ ընթացակարգի հետազոտություն 40
3.4. Էլեկտրոնային աճուրդ ընթացակարգերի հետազոտություն 43
3.5. Կնքված պայմանագրերի վերաբերյալ տեղեկատվության հրապարակում 46
3.6. Պայմանագրի լուծում 47
3.7. Գնում չհանդիսացող ծախս 52
3.8. Չկայացած ընթացակարգեր 56
3.9. Պայմանագրի կատարման ընդունումը 58
4. Գնումների թափանցիկություն 71
4.1. www.armeps.am 71
4.2. www.gnumner.minfin.am 72
5. Արտաքին հսկողություն 74
5.1. ՀՀ հաշվեքննիչ պալատ 74
5.2. Պետական վերահսկողական ծառայություն 75
6. Բողոքարկումներ 76
7. Եզրակացություններ 78
8. Առաջարկություններ 85
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԴԵՊՔԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ 88
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՀՀ ՆԳՆ-ԻՆ ՀՂՎԱԾ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ և ՍՏԱՑԱԾ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ 119
Օգտագործված աղբյուրներ 136

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության Ոստիկանության գնումների գործընթացի հետազոտության և դրա հիման վրա պատրաստված զեկույցի նպատակն է ՀՀ ոստիկանության բարեփոխումների համատեքստում ներկայացնել ՀՀ Ոստիկանության կողմից կատարված գնումների և գնումների գործընթացների հետ կապված կոռուպցիոն ռիսկերը: Հետազոտության կատարման հիմնական շարժառիթ են հանդիսացել 2020թ. ապրիլի 23-ին, 2018թ. հասարակության լայն շերտերն ընդգրկող ընդվզումից երկու տարի հետո, ՀՀ կառավարության №638-Լ որոշմամբ հաստատված ոստիկանության բարեփոխումների ռազմավարության և դրանից բխող 2020-22թթ. գործողությունների ծրագրի կյանքի կոչման շրջանում փոփոխությունների ենթարկվող ոստիկանության կարիքների համար կատարվող գնումների դեպքում պետական ֆինանսական միջոցների նպատակային, արդյունավետ և խնայողաբար օգտագործման հետ կապված հանրության մի մասի մոտ առկա մտահոգությունները:

Հետազոտության շրջանակներում անդրադարձ է կատարվել գնումների պլանավորմանը, գնման ընթացակարգերի ընտրությանը, գնումների կատարմանը, գնումների հետ կապված փաստաթղթերի հրապարակայնությանն ու հասանելիությանը, գնումների գործընթացների բողոքարկմանը և արտաքին վերահսկողությանը: Հետազոտության արդյունքում արձանագրված իրողություններն ամփոփ կերպով ներկայացված են ստորև: Մանրամասներին կամ կոնկրետ օրինակներին ծանոթանալու համար անհրաժեշտ է ծանոթանալ հաշվետվության համապատասխան բաժիններին:

Գնումների պլանավորումը կրում է ձևական բնույթ և կապված չէ Ոստիկանության ռազմավարական նպատակների և կարիքների հետ: Արդեն իսկ պլանավորման փուլում ՀՀ Ոստիկանությունը մեծ թվով և ծավալով ոչ մրցակցային եղանակով գնումներ է պլանավորում: 2022թ. ՀՀ կառավարության որոշման համաձայն 2022թ. Ոստիկանությունը նախատեսում էր մեկ անձից 58 ընթացակարգով (բոլոր նախատեսված ընթացակարգերի 5.2%) 5,437.7 մլն դրամի գնումներ կատարել (նախատեսված գնումների 33.9%): Վերջին տարիներին Ոստիկանությունն ավելի հաճախ է օգտագործում էլեկտրոնային աճուրդ ընթացակարգը: Սակայն e-AUCTION համակարգը հաճախ խափանվում է և հայտնի չէ, թե ով է երաշխավորում վերջինիս աշխատանքի անվտանգությունը:

Կարիքների գնահատման վերաբերյալ փաստաթղթի բացակայության պատճառով հասկանալի չէ, թե ինչպես է Ոստիկանությունը պատրաստում գնման առարկայի բնութագիրը և ինչու են միանման գնման առարկայի տեխնիկական բնութագրերը

տարբերվում (ինչո՞ւ է Լոռու մարզում հարկավոր մեկ տեխնիկական բնութագրով մեքենա, իսկ հարևան Տավուշի մարզում այլ բնութագրով մեքենա) :

Գնումների պլանները մշտապես և շարունակաբար ենթարկվում են մեծածավալ և մեծաքանակ փոփոխությունների: Պլանների փոփոխության գործընթացի նկատմամբ ներքին հսկողություն և վերահսկողություն գոյություն չունի: Արդյունքում, պլանավորողների մոտ վերանում են որակյալ պլաններ մշակելու խթանները (ինչու լրացուցիչ ջանք գործադրել որակյալ պլան կազմելու համար, եթե հետագայում այն կարելի է հեշտությամբ փոփոխության ենթարկել), ինչն ազդում է բյուջետային կարգապահության, ռեսուրսների բաշխման և ծառայությունների մատուցման արդյունավետության վրա: ***Գնումների պլաններում հաճախակի կատարվող, պարբերաբական և մեծածավալ փոփոխությունները կոռուպցիոն ռիսկերի առկայության մասին նախազգուշացնող կարմիր դրոշակ է***: 🚩

«Առկա ֆինանսական միջոցներ»-ով չապահովված պայմանագրեր: ՀՀ ոստիկանությունն առանց ֆինանսական միջոցների առկայության գնումների հրավեր և հայտարարություն է հրապարակում, էլեկտրոնային աճուրդ է կազմակերպում, հաղթող է ճանաչում և վերջինիս հետ կնքում է պայմանագիր, հրապարակում է հանձնաժողովի անդամների շահերի բախման բացակայության և հաղթող ընկերության իրական շահառուների վերաբերյալ հայտարարություններ և վերջում, լուծում է կնքված պայմանագիրը, քանի որ «2022 թվականի գնումների պլանով չհաստատվեց ֆինանսական միջոցներ պայմանագրով նախատեսված թվով 6 հատ մարդատար մեքենաները ձեռք բերելու համար»: Ոստիկանության ղեկավարությունը ոչ նպատակային, անարդյունավետ և ոչ խնայողաբար է օգտագործում ոստիկանության մարդկային, նյութական և տեխնոլոգիական ռեսուրսները:

Մի շարք դեպքերում Ոստիկանությունը գնումների պլանով նախատեսվածից ավելի մեծ գումարով պայմանագրեր է կնքել մատակարարների հետ, ապա հետագայում համաձայնագրերի օգնությամբ վերանայել է պայմանագրի գումարի մեծությունը[1]:

2019թ. ՏՀՁԿ և SIGMA-ի զեկույցի համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքը և 2017թ. №526-Ն որոշումը պայմաններ են ստեղծում, որպեսզի ոչ մի պայմանագիր ուժի մեջ չմտնի առանց բավարար ֆինանսավորման: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասն իսկապես կարգավորում է այն դեպքերը, երբ պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը, կամ եթե գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է: Սակայն օրենքը չի նախատեսում, որ կարելի է արդեն իսկ պլանով նախատեսված գումարից մեծ գումարով պայմանագիր կնքել, քանի որ գնումների պլանում

[1] Առկա ֆինանսական միջոցների հետ կապված հարցմանը ՀՀ ՆԳՆ-ն նոյեմբերի 30-ի դրությամբ չի պատասխանել:

կոնկրետ գումարի նախատեսումը նշանակում է, որ պատվիրատուն արդեն իսկ կանխատեսել և հաշվարկել է գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը և դրանք արդեն իսկ տարվա սկզբին նախատեսված են գնումների պլանով, ինչը նշանակում է, որ գնման մրցակցային ձևի կիրառումը ժամկետի առումով հնարավոր է:

Անհասկանալի է, թե (1) ինչպիսի՞ հսկողություն և վերահսկողություն գոյություն ունի աշխատանքի այսպիսի կազմակերպման նկատմամբ, (2) ինչո՞ւ է հարկավոր գնումների պլանը, եթե այն գնումների պլանով չնախատեսված պարտավորությունների ստանձնումը սահմանափակող, զսպող դեր չի կատարում, (3) գոյություն ունի՞ պայմանագրի գումարի մեծությունը ընտրելու որևէ ընթացակարգ այն դեպքերի համար, երբ պայմանագրի գումարի մեծությունը չի համընկնում գնումների պլանում ներառված մեծության հետ:

Այն հանգամանքը, որ Ոստիկանությունը նախ ավելի մեծ գումարով պայմանագիր է կնքել, ապա պայմանագրի գումարի մեծությունը նվազեցրել է մինչև գնումների պլանով նախատեսված մեծությունը, նշանակում է, Ոստիկանությունն այդ լրացուցիչ գումարների դիմաց ապրանքի, աշխատանքի կամ ծառայության կարիքն ըստ էության չի ունեցել և ավելի մեծ գումարով պայմանագիր կնքել է հենց այնպես, հույս ունենալով, որ կկարողանա ՀՀ կառավարությունից լրացուցիչ ֆինանսավորում ստանալ պայմանագրի այդ լրացուցիչ մասի համար: ***Գնման համար պլանավորված մեծությունը գերազանցող գումարով պայմանագրի կնքումը կոռուպցիոն ռիսկերի առկայության մասին նախազգուշացնող կարմիր դրոշակ է***: 🚩

Գնում չհանդիսացող ծախս «ընթացակարգ»: Ոստիկանությունն օգտագործում է «Գնումների մասին» օրենքով չնախատեսված գնում չհանդիսացող ծախս (այսուհետ՝ ԳՉԾ) «ընթացակարգ»: ԳՉԾ «ընթացակարգով» Ոստիկանությունը ձեռք է բերել թարգմանչական ծառայություններ, փորձաքննություն, սնունդ, սննդի մատակարարման ծառայություններ, ընթացիկ նորոգման աշխատանքներ, դատանյութագիտական փորձաքննություն և այլն: ԳՉԾ-երի գծով կատարված վճարումները թափանցիկ չեն և հասկանալի չէ, թե ինչու է Ոստիկանությունը սննդի մատակարարումը կամ ընթացիկ նորոգման աշխատանքները մի դեպքում համարում գնում հանդիսացող, մեկ ուրիշ դեպքում՝ չհանդիսացող ծախս: Հասկանալի չէ, թե ինչու է Ոստիկանությունը թարգմանչական ծառայությունների ձեռքբերումը համարում ԳՉԾ:[2] ***Օրենքով չնախատեսված «ընթացակարգի» օգտագործումը կոռուպցիոն ռիսկերի առկայության մասին նախազգուշացնող կարմիր դրոշակ է***: 🚩

[2] Գնում չհանդիսացող ծախս «ընթացակարգի» հետ կապված հարցմանը ՀՀ ՆԳՆ-ն նոյեմբերի 30-ի դրությամբ չի պատասխանել:

ՀՀ ֆինանսների նախարարության 2023թ. մարտի 16-ի №03/26-1/4820-2023 գրության համաձայն ԳՉԾ հասկացությունը գնումների համակարգ է ներմուծվել 2018թ. հետո իշխանության եկած կառավարության կողմից: Իր 2018թ. հունիսի 15 «Բյուջեների կատարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» №706-Ն որոշման մեջ Ն. Փաշինյանի կառավարությունն է առաջին անգամ նորմատիվ իրավական փաստաթղթում սահմանել է «գնում չհանդիսացող ծախս» հասկացությունը:

Պայմանագրի կատարման արդյունքների ընդունումը: Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի և գնման պայմանագիր կնքած անձի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ: Եթե կնքված պայմանագրի գինը գերազանցում է մեկ միլիոն դրամը, ապա կնքված պայմանագրի մասին հայտարարությունում նշվում է նաև, որ դրանով սահմանված ժամկետում գնման տվյալ գործընթացին կարող են մասնակցել ՀՀ պետական գրանցում ստացած ՀԿ-ները և լրատվական գործունեություն իրականացնող անձինք: Չի հաջողվել 2020-22թթ. ի հայտ բերել գեթ մեկ դեպք, երբ ՀԿ-ների և (կամ) լրատվամիջոցների ներկայացուցիչները մասնակցել են պայմանագրի կատարման արդյունքների ընդունմանը: Հաշվի առնելով ոստիկանության գործունեության և բարեփոխումների նկատմամբ հանրային մեծ հետաքրքրությունը, այս զեկույցը բացառում է, որ ՀԿ-ները և լրատվամիջոցները հետաքրքված չեն կատարվող գնումներով: Այս հաշվետվությունը ենթադրում է, որ Ոստիկանությունը չի ցուցաբերել կամք, չի ցանկացել գործել բաց և թափանցիկ և խոչընդոտներ է ստեղծել պայմանագրի կատարման արդյունքների ընդունմանը ՀԿ-ների և լրատվամիջոցների ներկայացուցիչների մասնակցության համար: ՀՀ հաշվեքննիչ պալատը պարեկային ծառայության համար մեքենաների ձեռքբերման և դրանց կահավորման գործընթացներում բացահայտել է մի շարք դեպքեր, երբ Ոստիկանության պաշտոնյաներն ընդունել են տեխնիկական բնութագրերի պահանջներին չհամապատասխանող ապրանքներ և ծառայություններ: ***Պայմանագրի կատարման արդյունքների ընդունման գործընթացներում տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ընդունումը և երկու տարվա ընթացքում (2021-22թթ.) ՀԿ-ների և լրատվամիջոցների ներկայացուցիչների պայմանագրի կատարման ընդունմանը չմասնակցելու հանգամանքը հիմք է տալիս ենթադրելու, որ ՀՀ Ոստիկանությունը ջանքեր չի գործադրել իր կողմից կատարվող գնումներն***

ավելի թափանցիկ դարձնելու ուղղությամբ, ինչը կոռուպցիոն ռիսկերի առկայության մասին նախազգուշացնող կարմիր դրոշակ է:

Այս հետազոտության շրջանակներում չեն հայտաբերվել Ոստիկանությունում ներքին ֆինանսական հսկողության համակարգի առկայության և դրա աշխատանքի վկայություններ: Դրանց բացակայությունը փաստել է նաև ՀՀ հաշվեքննիչ պալատը, արձանագրելով, որ «Ոստիկանությունում հաշվեքննությամբ ընդգրկված ժամանակահատվածում ներքին աուդիտ չի իրականացվել, որի արդյունքում չի ապահովվել «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված նպատակներին հասնելու ուղղված արդյունքները»[3]: ***Ներքին ֆինանսական հսկողության համակարգի բացակայությունը կամ դրա թույլ աշխատանքը կոռուպցիոն ռիսկերի առկայության մասին նախազգուշացնող կարմիր դրոշակ է***:

«Գնումների մասին» ՀՀ օրենքը նախատեսում է դրույթներ, որպեսզի պատվիրատուներին թույլ տա անհրաժեշտության դեպքում ճկուն լինել և պետական ֆինանսական միջոցներն օգտագործել նպատակային, արդյունավետ և խնայողաբար: Սակայն մի շարք պատվիրատուների, այդ թվում Ոստիկանության կողմից այդ կարգավորումների ոչ նպատակային և անհարկի օգտագործումը, երբ դրանք օգտագործվում են ոչ թե առանձին իրավիճակներում ճկունություն ունենալու, այլ օրենքի կարգավորումները շրջանցելու համար, կասկածի տակ են դնում ինչպես նման կարգավորումների նպատակայնությունն ու արդյունավետությունը, այնպես էլ ՀՀ կառավարության, առանձին նախարարությունների և գերատեսչությունների բաց, թափանցիկ, հաշվետու, պատասխանատու և մասնակցային կառավարմանը հավատարմությունը:

2023թ. հունվարի 3-ից մինչև ապրիլի 30-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանությունում 2022թ. պետական բյուջեի կատարման հաշվետքննության արդյունքում ՀՀ հաշվեքննիչ պալատը եզրակացրել է, որ 2022թ. ՀՀ պետական բյուջեի կատարման նկատմամբ հաշվեքննության տեսակետից հիմնական ռիսկերը կապված են ***գնումների ոլորտը կանոնակարգող ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ գնման գործընթացների, այդ թվում՝ գնումների պլանավորման, գնման գործընթացների կազմակերպման (ներառյալ գնման առարկաների բնութագրերի հաստատումը), պայմանագրերի կնքման, կատարման և կառավարման հետ***: ***ՀՀ հաշվեքննիչ պալատի համաձայն խոցելի են գնումների գործընթացի գրեթե բոլոր փուլերը, ինչը կոռուպցիոն ռիսկերի առկայության մասին նախազգուշացնող կարմիր դրոշակ է***:

[3] ՀՀ հաշվեքննիչ պալատի 2023թ. ապրիլի 26-ի թիվ 69-Ա որոշման հավելված. «Ընթացիկ եզրակացություն Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանությունում 2022 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ»: Հասանելի է https://armsai.am/hy/current-conclusions էջում:

ՀՀ ոստիկանության գնումների հայտարարությունների և այլ հարցերի հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու նպատակով 2021-22թթ. ՀՀ ոստիկանությունը սովորաբար առաջարկել է դիմել Policetv.gnumner@mail.ru հասցեով: Պետական մարմնի կողմից հաղորդակցության և տեղեկատվության փոխանակման նպատակով օտարերկրյա առևտրային կազմակերպության կողմից ստեղծված «mail.ru» հասցեի օգտագործումը խնդրահարույց է և ռիսկային:[4] ՀՀ ՆԳՆ-ն պետք է ձևավորի պաշտոնական էլեկտրոնային հասցեներ և հանրության հետ շփվի դրանց օգնությամբ:

[4] 2023թ. հետազոտված մի քանի հայտարարություններում հասցեն փոխվել է:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2018թ. ապրիլին Հայաստանի հասարակության լայն շերտերն ըմբոստացան գործող իշխանությունների դեմ և ապակենտրոն շարժման միջոցով վերջիններիս ստիպեցին հեռանալ և իշխանությունը փոխանցել հանրության արդարության, ազատության և հավասարության ծարավը հագեցնելու խոստում տվող ուժերին:

2020թ. ապրիլի 23-ին, 2018թ. հասարակության լայն շերտերն ընդգրկող ընդվզումից երկու տարի հետո, ՀՀ կառավարությունն իր №638-Լ որոշմամբ հաստատեց ՀՀ ոստիկանության բարեփոխումների ռազմավարությունը և դրանից բխող 2020-22թթ. գործողությունների ծրագիրը: Ռազմավարությունն ընդգծում է ՀՀ-ում հանցավորության աստիճանի համեմատաբար ցածր մակարդակը և Հայաստանում ոստիկանության բարեփոխումների անհրաժեշտությունը հիմնավորում է ժողովրդավարական պետությանն ու հասարակությանը բնորոշ ոստիկանության ծառայություն ունենալու իրական անհրաժեշտությամբ, ոստիկանության գործունեության արդյունավետության բարձրացմամբ, տարիներ ի վեր բարձրաձայնված հանրային պահանջով և անկեղծ քաղաքական կամքի առկայությամբ: Ժամանակակից մարտահրավերներին դիմակայող, մասնագիտացված ու տեխնիկապես հագեցած, բարեվարք և հարգանքի արժանի ոստիկանության վերափոխումն ու ժողովրդավարական իրավակարգին բնորոշ նոր ոստիկանի կերպարի ստեղծումը սահմանվում է որպես բարեփոխումների նպատակ: Չնայած ռազմավարության մատնանշած 7 խնդիրների թվում ՀՀ կառավարությունը նշել է ոլորտի քաղաքականություն մշակող և իրականացնող, հաշվետվողականության ու քաղաքացիական վերահսկողության մեխանիզմներ ունեցող գործադիր իշխանության մարմնի ստեղծման մասին, սակայն այն չի անդրադառնում ոստիկանության կողմից պետական ֆինանսական միջոցների նպատակային, արդյունավետ և խնայողաբար օգտագործմանը: Ռազմավարությունը հանրային ռեսուրսների կառավարման արդյունավետությանն անդրադառնում է գործառույթների կրկնության, մեկ կենտրոնից ռեսուրսների կառավարման, քրեական վարույթի ընթացքում ոստիկանության միջոցների կիրառման, հավելյալ մարդկանց կարիքի համատեքստում: Ռազմավարությունը չի անդրադառնում ոստիկանության կողմից պետական ֆինանսական միջոցների նպատակային, արդյունավետ և խնայողաբար օգտագործմանը:

Որպես պաշտոնական ռազմավարական փաստաթուղթ ՀՀ ոստիկանության բարեփոխումների ռազմավարության վերաբերյալ ՀՀ կառավարության որոշումը չի համապատասխանում ոչ ՀՀ կառավարության 2017թ. հոկտեմբերի 5 նիստի №42 արձանագրության քաղվածքի համաձայն հավանության արժանացած պետական եկամուտների և ծախսերի վրա ազդեցություն ունեցող ռազմավարական փաստաթղթերի

մշակման, ներկայացման և հսկողության իրականացման մեթոդական հրահանգի, ոչ էլ դրան փոխարինած ՀՀ վարչապետի 2021թ. դեկտեմբերի 30-ի №1508-Լ որոշմամբ հաստատված նույնանուն փաստաթղթի պահանջներին:

Ոստիկանության բարեփոխումների, գործունեության և գործողությունների հետ կապված 2023թ. արդեն իսկ առկա են մի շարք մտահոգություններ: 2023թ. հուլիսի 3-ին հայաստանյան հասարակական կազմակերպությունների (այսուհետ՝ ՀԿ) մի խումբ հայտարարություն տարածեց այն մասին, որ ոստիկանական բռնությունները համակարգային բնույթ են ստանում:[5]

Հետազոտությունը հատկապես կարևոր է հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջին տարիներին ավելացել է ինչպես ՀՀ կառավարության առընթեր ոստիկանության ֆինանսավորումը (պատկեր 1), այնպես էլ ոստիկանության կարիքների համար կատարվող գնումների քանակներն ու ծավալները (հաշվետվությունը հետագայում ներկայացնում է հետազոտության շրջանակներում հավաքված տվյալները): 2022թ. դեկտեմբերին ՀՀ կառավարության կառուցվածքում ստեղծվել է ներքին գործերի նախարարություն (այսուհետ՝ ՀՀ ՆԳՆ) և ոստիկանությունը դարձել է ՀՀ ՆԳՆ հիմնական կառույցներից մեկը: Այս հետազոտությունն անդրադառնում է մինչև 2023թ. ոստիկանության կարիքների համար կատարված գնումների պլանավորման և կատարման հետ կապված գործընթացներին:

Պատկեր 1. ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության փաստացի ֆինանսավորումը 2008-22թթ., 2023-24թթ. բյուջեով ՀՀ Ազգային ժողովի կողմից կատարված հատկացումը (ՀՀ դրամ)



[5] ՀԿ-ների հայտարարություն: 2023թ.: Ոստիկանական բռնությունները դառնում են համակարգային. ՀԿ-ների հայտարարություն: 3 հուլիսի 2023թ. Հասանելի է https://hcav.am/ngos-statement03-07-2023/ էջում:

Աղբյուր. տարբեր տարիների ՀՀ պետական բյուջեների կատարման վերաբերյալ հաշվետվություններ

Հաջորդ բաժնում նախ ներկայացվում է հետազոտության մեթոդաբանությունը: Այնուհետև ներկայացվում են գնումների ոլորտը կանոնակարգող ՀՀ օրենսդրությունը և գնման գործընթացի փուլերը:

Հետազոտությունն անդրադառնում է գնումների գործընթացի բոլոր փուլերին, սակայն կենտրոնանում է հատկապես դրանցից մի քանիսի վրա, մասնավորապես գնումների պլանավորման, գնման առարկայի բնութագրի, պայմանագրի կատարման և կառավարման, պայմանագրի կատարման արդյունքների ընդունման վրա:

ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՆՇՈՒՄ

Հետազոտությունն իրականացվել է մի քանի փուլերով:

Նախ հետազոտվել են գնումների ոլորտը կարգավորող իրավական ակտերը՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքը և հիմնական ենթաօրենսդրական ակտերը: Այնուհետև հետազոտվել են ՀՀ Ոստկանության գնումների պլանները: Մասնավորապես, հետազոտվել են տարբեր տարիների պետական բյուջեների կատարումն ապահովող միջոցառումների մասին ՀՀ կառավարության որոշումներն ու մասնավորապես վերջիններիս հավելված հանդիսացող (սովորաբար հավելված 10) տվյալ տարվա պետական բյուջեի մասին ՀՀ օրենքով սահմանված բյուջետային հատկացումների հաշվին պետության կարիքների համար տվյալ տարում իրականացվող գնումների պլանը, որը սովորաբար հաստատվում է ըստ բյուջետային ծախսերի ծրագրային և գործառական դասակարգման և ըստ ծրագրերի միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմինների: Հետազոտվել են Armeps համակարգում առկա գնումների պլանները, ապա դրանք համեմատվել են ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված գնումների պլանների հետ: Այնուհետև Armeps համակարգում հետազոտվել են կատարված գնումների պայմանագրերը, e-AUCTION համակարգում առկա տեղեկատվությունը:

Այս հետազոտությունը հիմնվում է այն ենթադրության վրա, որ ՀՀ կառավարության կողմից էլեկտրոնային համակարգերի միջոցով հանրությանը տրամարդվող տեղեկատվությունը կարող է արժանահավատ չլինել, քանի որ ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ 10 և ավելի տարիների ընթացքում գնումների էլեկտրոնային համակարգը տեխնոլոգիական աուդիտի չի ենթարկվել[6]:

ՀՀ ֆինանսների նախարարության գնումների համակարգի վերաբերյալ էջում հետազոտվել է «Հանձնաժողովի նիստերի արձանագրություններ»-ին վերաբերող բաժինը, ժամանակագրական առումով հետ գնալով մինչև 2022թ. հունվարի 1: Հայտերի բացման նիստի արձանագրությունների էջում 2023թ. հոկտեմբերի 6-ին այդ տվյալները ներկայացվել են էջ 269-ում[7]:

Հետազոտվել են կատարված գնումների հետ կապված Ոստիկանության դեմ դատարան ներկայացված բողոքները: Հետազոտվել են նաև միջազգային գործընկերների կողմից ՀՀ գնումների վերաբերյալ հրապարակումները, տրված գնահատականները, ներկայացված դիտարկումներն ու առաջարկությունները:

Կուտակված տեղեկատվությունը վերլուծվել է ինչպես ընթացակարգերի և պայմանագրերի քանակի, այնպես էլ գործարքների ծավալների առումով: Չնայած

[6] ՀՀ ֆինանսների նախարարության 2023թ. մարտի 15-ի 03/26-1/4820-2023 գրություն:
[7] https://procurement.minfin.am/hy/page/petakan_karavarman_marminner_1/270 : Հաշվի առնելով այն հանգամանքը, որ էջը մշտապես լրացվում է և ենթակա է փոփոխությունների, 2022թ. հունվարի 1-ի տվյալները կարող են այլևս լինել այլ էջում:

վերլուծության շրջանակներում հատուկ ուշադրության են արժանացել ոստիկանության բարեփոխումների հետ կապված առանձին գնումներ (օրինակ, ավտոմեքենաների և հանդերձանքի ձեռքբերում), ուշադրությունից չեն վրիպել նաև խնդրահարույց մի շարք այլ գործարքներ և ընթացակարգերի օգտագործում:

Տեղեկատվության սակավությունը և բացերը լրացնելու նպատակով հարցումներ են ուղարկվել ՀՀ ՆԳՆ: Ստացած պատասխաններն օգնել են լրացնել տեղեկատվության պակասը կամ ճշգրտել առանձին հանգամանքներ:

Հետազոտվել նաև ՀՀ հաշվեքննիչ պալատի ընթացիկ եզրակացությունները, որոնք արժեքավոր տեղեկատվություն են տրամադրել Ոստիկանության գնումների վերաբերյալ և լրացրել են արդեն իսկ հավաքված տեղեկատվությունը:

Կուտակված տեղեկատվությունը վերլուծվել է: Վերլուծությունների արդյունքներով արվել են եզրակացություններ: Եզրակացությունների հիման վրա ՀՀ ՆԳՆ (ոստիկանության) կողմից կատարվող աշխատանքի վերաբերյալ արվել են առաջարկություններ, որոնք միտված են բարելավել ՀՀ ՆԳՆ (ոստիկանության) կողմից կատարվող գնումները, գնումների պլանավորումը, ընթացակարգերի ընտրության վերաբերյալ որոշումների կայացման գործընթացը (օրենքով չնախատեսված ընթացակարգերի օգտագործումը), պայմանագրերի կատարումը և դրանց ՀԿ-ների և լրատվամիջոցների ներկայացուցիչներին մասնակից դարձնելը, կայացած և չկայացած գնումների, լուծված պայմանագրերի վերաբերյալ հանրությանը իրազեկումը:

Հետազոտվող ժամանակաշրջանում փոխվել է հետազոտության օբյեկտի իրավական կարգավիճակը և ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության փոխարեն ձևավորվել է ՀՀ ներքին գործերի նախարարություն:

Հետազոտությունն առերեսել է մի շարք սահմանափակումներ, որոնցից ամենակարևորը ժամանակն է: Մասնավորապես, հետազոտությանը հատկացված խիստ սահմանափակ ժամանակի պատճառով այն հիմնականում կենտրոնացել է փաստաթղթերի հետազոտության վրա: Մի քանի դիտարկումների հետ կապված պարզաբանումներ, բացատրություններ և լրացուցիչ փաստաթղթեր ստանալու նպատակով հարցումներ են ուղարկվել ՀՀ ՆԳՆ: ՀՀ ՆԳՆ-ից ստացված պատասխանները ներկայացված են հավելված 2-ում:

Ժամանակի սղության պատճառով այս հետազոտության շրջանակներում հնարավոր չի եղել խորությամբ անդրադառնալ տեխնիկական բնութագրերի հետ կապված խնդիրներին և անդրադարձ կատարվել է մի քանի օրինակով: Տեխնիկական բնութագրերի հետ կապված խնդիրների հետազոտությունն ավելի համակարգային մոտեցում է պահանջում, որը պետք է իրականացվի ոչ թե անհատ հետազոտողի, այլ աշխատանքային խմբի կողմից:

Հետազոտությանը սահմանափակող գործոն է Armeps համակարգը, որտեղից ներբեռնած տեղեկատվությունն առանձին դեպքերում վստահություն չի ներշնչում: Սակայն համակարգված տեղեկատվության այլ աղբյուրների բացակայության պատճառով այս հետազոտությունն ստիպված է հենվել Armeps-ում առկա տեղեկատվության վրա, արձանագրելով, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի համաձայն հանրությանը հավաստի և լրիվ տվյալներ պարունակող տեղեկատվության տրամադրման համար պատասխանատու են այն տրամադրող մարմինները:

Հետազոտվել են առանձին ընթացակարգի հետ կապված բոլոր փաստաթղթերը (օրինակ՝ վարորդական վկայականների և տրանսպորտային միջոցների հաշվառման վկայագրերի տպագրման համար անհրաժեշտ ապրանքների և նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՎԿԱՅԱԿԱՆ/2023/Հ-17 ծածկագրով գնման ընթացակարգի):

Հետազոտությունը չի անդրադառնում պետական գաղտնիք պարունակող գնումների հետ կապված հարաբերություններին:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Գնումների օրեսնդրությունը բաղկացած է ՀՀ քաղաքացիական օրենսգրքից, «Գնումների մասին» ՀՀ օրենքից, ՀՀ կառավարության մի շարք որոշումներից և ՀՀ ֆինանսների նախարարի հրամաններից: Գնման գործընթացը ներառում է գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, գնման ընթացակարգի ընտրությունը, ապրանքներ մատակարարող, ծառայություններ մատուցող, աշխատանք-ներ կատարող անձի կամ կազմակերպության ընտրությունը, պայմանագրի կնքումը, կառավարումը և կատարումը: ՀՀ գնումների համակարգի նպատակը գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեքի ապահովումն է: Գնումների գործընթացի հիմնական սկզբունքներից մեկը պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնումը և նրանց միջև մրցակցության խրախուսումն է:

Պայմանագրի կատարման և կառավարման շրջանակում հանրային հսկողություն իրականացնելու իրավունք ունեն գնման տվյալ գործընթացին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած մասնակիցները և Հայաստանում պետական գրանցում ստացած ՀԿ-ները և լրատվական գործունեություն իրականացնող անձինք: Պայմանագրի կատարման և կառավարման շրջանակում հանրային հսկողությունը պարտադիր է մեկ միլիոն ՀՀ դրամը գերազանցող գին ունեցող պայմանագրերի դեպքում: Եթե գնման գինը չի գերազանցում մեկ միլիոն ՀՀ դրամը, պատվիրատուն ապահովում է կատարված գործողությունների և դրանց հիմքերի մասին համապատասխան փաստաթղթերի կամ էլեկտրոնային փաստաթղթերի առկայությունը և դրանց պահպանումը:

Գնման առարկայի բնութագիրը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրի ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունները: Գնման առարկայի բնութագիրը ընդգրկվում է պայմանագրում: Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի հոդված 18-ի 1-րդ մասի համաձայն գնում կատարելու ընթացակարգերն են (1) էլեկտրոնային աճուրդը, (2) մրցույթը, (3) գնանշման հարցումը, (4) մեկ անձից գնումը: Գնումների կատարման նախընտրելի ձևը մրցույթն է: Մրցույթը լինում է բաց և փակ: Փակ մրցույթը լինում է նպատակային կամ պարբերական: Այս հետազոտությունը վերաբերում է կոնկրետ ՀՀ Ոստիկանության գնումներին և չի

հետապնդում առանձին ընթացակարգերի հետ կապված խնդիրները վերհանելու նպատակ: Ընթացակարգերի հետ կապված խնդիրներին անդրադարձ կատարվել է միայն եթե դա անհրաժեշտ է Ոստիկանության կատարած գնումների տեսակետից:

Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատվել է ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի №526-Ն, Էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգը 2017թ. ապրիլի 6-ի №386-Ն, Էլեկտրոնային աճուրդների իրականացման կարգը և էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակը՝ 2017թ. մայիսի 18-ի №534-Ն որոշմամբ:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ

Պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող գնումների պլանը հաստատվում է բյուջետային ծախսերի գերատեսչական և գործառնական դասակարգմամբ: «Գնումների պլանը, ներառյալ՝ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի»: ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի №526-Ն որոշման համաձայն գնման գործընթացն սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում:

Գնման պահանջի ծագման օրը հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում: Գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված և հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

Յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին ՀՀ կառավարության որոշման հավելվածով (սովորաբար հավելված 10) հաստատվում է այդ տարվա պետական բյուջեի մասին ՀՀ օրենքով սահմանված բյուջետային հատկացումների հաշվին պետության կարիքների համար տվյալ տարում իրականացվող գնումների պլանը: Գնումների պլանը սովորաբար հաստատվում է ըստ բյուջետային ծախսերի ծրագրային և գործառական դասակարգման և ըստ ծրագրերի միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմինների:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն «Մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում»: Նման պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել: Առանց ֆինանսական միջոցներ նախատեսելու պայմանագիր կարող է կնքվել, եթե (1) պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը, կամ (2) ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է[8]:

[8] Այս կարգավորմանն առանձին անդրադարձ կա «առկա ֆինանսական միջոցներ» հասկացության օգտագործման վերլուծության կոնտեքստում:

2017թ. ապրիլի 13-ի №390-Ն որոշմամբ ՀՀ կառավարությունը հաստատել է գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը: ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին կատարվելիք գնումների պլանը հաստատվում է յուրաքանչյուր տարվա ՀՀ պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումները հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշմամբ՝ առանձին հավելվածով: Գնումների պլանը պատվիրատուի ղեկավարի կողմից հաստատվում է մինչև փետրվարի 1-ը: ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին կատարվելիք գնումների պլանում փոփոխություններ և լրացումներ կատարվելու դեպքում պատվիրատուն դրանցում ներառվող գնման ձևերը նախապես համաձայնեցնում է ՀՀ ֆինանսների նախարարության հետ: Գնումների պլանը, ներառյալ դրանում կատարված փոփոխությունները և լրացումները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն սահմանված կարգով հրապարակում է տեղեկագրում: Գնումների պլանում կատարված փոփոխությունը և լրացումները տեղեկագրում հրապարակվում են գնումների պլանի ամբողջական տեսքով[9]: «Գնումների մասին» ՀՀ օրենքի հոդված 3-ը շեշտում է լիազորությունների կատարման համար անհրաժեշտ, կարիքին համապատասխան, տնտեսող, արդյունավետ և օգտավետ, հատուցման դիմաց արժեք ապահովող գնումների իրականացման անհրաժեշտությունը:

ՏՀՁԿ և SIGMA-ի 2019թ. «Հանրային կառավարման սկզբունքները. ելակետային գնահատման զեկույց»-ը նշում է , որ «Գնումների մասին» օրենքի և թիվ 526-Ն որոշման՝ պետական գնումների պլանավորմանն առնչվող դրույթները հիմնականում կարգավորում են ֆինանսական հարցեր՝ նպատակ ունենալով ապահովել, որ ոչ մի պայմանագիր առանց բավարար ֆինանսավորման արդյունավետ չլինի: Անհրաժեշտ է, որպեսզի պատվիրատուները նախապատրաստեն և հրապարակեն իրենց գնումների պլանները: Այնուհանդերձ, թեև ենթադրվում է, որ ՖՆ-ի կայքէջը պետք է լինի այդ պլանների հասանելիությունն ապահովող մուտքի մեկ կետը, իսկ էլեկտրոնային գնումների կայքէջն ունի որոնման համապատասխան ֆունկցիա, ՖՆ-ի կայքէջի հղումները չեն գործում, իսկ էլեկտրոնային գնումների կայքէջը սովորաբար անդրադառնում է ավելի շատ գնման ենթակա առանձին կետերի, քան որևէ ամբողջական գնումների պլանի»: ***2019թ. ՏՀՁԿ և SIGMA-ի հետազոտությունը «Պատշաճ ուշադրություն է դարձվում պլանավորման գործընթացին» չափորոշչին հնարավոր 5 միավորից շնորհել է «0»***:

[9] ՀՀ ֆինանսների նախարարն իր 2017թ. մայիսի 20-ի №231-Ն հրամանով հաստատել է գնումների պլանում փոփոխություններ և լրացումներ կատարելու ծանուցման օրինակելի ձևը, դրա լրացման կարգը:

2.1. ՀԱՍՏԱՏՎԱԾ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆՆԵՐ

Գնումների պլանը հանդիսանում է ՀՀ կառավարության կողմից հաստատվող պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին որոշման հավելվածներից մեկը[10]: Կառավարության որոշումներով հաստատված Ոստիկանության 2020-23թթ. գնումների պլանների ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 1-ում: Ներկայացված տվյալները վկայում են, որ արդեն պլանավորման փուլում Ոստիկանությունը մեկ անձով մեծ թվով և ծավալով գնումներ է նախատեսում:

2022թ. և 2023թ. նվազել են գնանշման հարցման (այսուհետ՝ ԳՀ) եղանակով գնում կատարելու ՀՀ ՆԳՆ ծրագրերը: Եթե 2020թ. և 2021թ. Ոստիկանությունը նախատեսում էր գնումների համապատասխանաբար 93.3% և 85.1% կատարել ԳՀ ընթացակարգով (դրամային արտահայտությամբ համապատասխանաբար 19.1% և 13.5%), ապա 2022-23թթ. դրանց տեսակարար կշիռները զգալիորեն նվազել են (համապատասխանաբար 11.0% և 8.1%, իսկ դրամային արտահայտությամբ՝ 3.0% և 6.3%):

2022թ. ի վեր ՀՀ ՆԳՆ-ն սկսել է ավելի շատ տեղ հատկացնել էլեկտրոնային աճուրդ ընթացակարգին (այսուհետ՝ ԷԱ): ՀՀ կառավարության որոշման հավելվածի համաձայն ՀՀ ՆԳՆ-ն նախատեսում էր 2022թ. և 2023թ. իր կողմից կատարվելիք գնումների համապատասխանաբոր 83.4% և 73.4%, կամ դրամային արտահայտությամբ համապատասխանաբար 52.3% և 66.5% կատարել է ԷԱ ընթացակարգով:

Գնումների պլանը նախատեսում է փոքր թվով բաց մրցույթներ (այսուհետ՝ ԲՄ): 2022թ. ՀՀ ՆԳՆ-ն նախատեսում էր ԲՄ ընթացակարգ կազմակերպել 1104 դեպքերից 4-ում, կամ 0.36% դեպքում, իսկ 2023թ. 1165 ընթացակարգերից 5-ի, կամ 0.4% դեպքում:

[10] 2020թ. գնումների պլանը հաստատվել է ՀՀ կառավարության 2019թ. դեկտեմբերի 26-ի №1919-Ն, 2021թ.՝ 2020թ. դեկտեմբերի 30-ի №2215-Ն, 2022թ.՝ 2021թ. դեկտեմբերի 23-ի №2121-Ն, 2023թ.՝ 2022թ. դեկտեմբերի 29-ի №2111-Ն որոշումով (սովորաբար հավելված 10):

Աղյուսակ 1. ՀՀ կառավարության որոշումներով հաստատված ՀՀ Ոստիկանության 2020-22թթ. գնումների պլաններն ըստ ընթացակարգերի քանակների և ծավալների

Ընթա-ցակարգ		2020թ.				2021թ.				2022թ.				2023թ.			
		Գնում	%	Մլն դրամ	%	Գնում	%	Մլն դրամ	%	Գնում	%	Մլն դրամ	%	Գնում	%	Մլն դրամ	%
1	ԲՄ	5	0.3	606.8	4.2	90	7.7	4,057.6	29.1	4	0.4	1,740.4	10.8	5	0.4	1,575.6	9.3
2	ՀԲՄ	26	1.8	5,844.8	40.2	19	1.6	2,769.3	19.9	-	-	-	-	1	0.1	60.0	0.4
3	ԷԱ	-	-	-	-	-	-	-	-	921	83.4	8,403.6	52.3	877	75.3	11,276.0	66.5
4	ԳՀ	1376	93.3	2,783.0	19.1	989	85.1	1,888.2	13.5	121	11.0	487.6	3.0	216	18.5	1,074.3	6.3
5	ՄԱ	68	4.6	5,321.9	36.6	64	5.5	5,233.8	37.5	58	5.2	5,437.7	33.9	65	5.6	2,173.0	12.8
6	ՀՄԱ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	1	0.1	793.8	4.7
Ընդամենը		**1475**	**100.0**	**14,556.5**	**100.0**	**1,162**	**100.0**	**13,948.9**	**100.0**	**1104**	**100.0**	**16,069.3**	**100.0**	**1165**	**100.0**	**16,952.7**	**100.0**

Աղբյուր. ՀՀ կառավարության համապատասխան որոշումների 10-րդ հավելվածներ

Ծանոթություն. ԲՄ՝ բաց մրցույթ, ՀԲՄ՝ հրատապ բաց մրցույթ, ԷԱ՝ էլեկտրոնային աճուրդ ԳՀ՝ գնանշման հարցում, ՄԱ՝ մեկ անձ, ՀՄԱ՝ հրատապ մեկ անձ:

Դրամային արտահայտությամբ Ոստիկանությունը նախատեսում էր 2022թ. ԲՄ ընթացակարգով կատարել գնումների 10.8%, 2023թ.՝ 9.3%: Հաշվի առնելով ընթացա-կարգերի քանակի փոքր տեսակարար կշիռները և դրամային արտահայտությամբ համեմատաբար ավելի մեծ տեսակարար կշիռները կարելի է ենթադրել, որ Ոստիկանությունը նախատեսում էր խոշոր գնումների մի մասը կատարել ԲՄ-ով:

Առանձին ուշադրության է արժանի «առկա ֆինանսական միջոցներ» հասկացությունը և դրա օրգտագործումը: 2019թ. ՏՀԶԿ և SIGMA-ի զեկույցի համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքը և 2017թ. №526-Ն որոշումը պայմաններ են ստեղծում, որպեսզի ոչ մի պայմանագիր առանց բավարար ֆինանսավորման ուժի մեջ չմտնի: Վերևում արդեն նշվել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասը կարգավորում է մինչև ֆինանսական միջոցներ նախատեսելը պայմանագրերի կնքումը: Սակայն օրենքը չի նախատեսում, որ կարելի է արդեն իսկ պլանով նախատեսված գումարից մեծ գումարով պայմանագիր կնքել, քանի որ գնումների պլանում կոնկրետ գումարի նախատեսումը նշանակում է, որ պատվիրատուն արդեն իսկ կանխատեսել է գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը և ֆինանսական միջոցներն արդեն իսկ տարվա սկզբին նախատեսված են գնումների պլանով, ինչը նշանակում է, որ գնման մրցակցային ձևի կիրառումը ժամկետի առումով հնարավոր է:

Armpes-ի համաձայն 2022թ. հունիսի 7-ին Ոստիկանությունը 1,275,000,000.0 դրամ գումարով շինարարական աշխատանքներ ձեռք բերելու վերաբերյալ համաձայնագիր է կնքել «Բիդեք» ՍՊԸ-ի հետ: «Բիդեք» ՍՊԸ-ի հետ պայմանագիրը կնքվել է ոչ թե 2022թ. հունիսի 7-ին, այլ 2021թ. սեպտեմբերի 3-ին (աղյուսակ 2):

Աղյուսակ 2. «Բիդեք» ՍՊԸ-ի հետ կնքված «ՀՀ Ո ԲՄԱՇՁԲ-2021-ՇԻՆ/ՕԿԿ-47» պայմանագրին կից համաձայնագրերը

	Համաձայնա-գրի օրը	**Հիմնական բովանդակություն**
1	29 նոյեմբերի 2021թ.	Պայմանագրով սահմանված 2,192,419,599 . 74 դրամը կսահմանվի 250,191,100 . 0 դրամ, մնացած 1,942,288,499 . 74 դրամը կիրականացվի ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո լրացուցիչ համաձայնագրի միջոցով
2	17 դեկտեմբերի 2021թ.	Աշխատանքների կատարման ժամկետի ավարտը 930 օրացույցային օրվա փոխարեն 150 օրացուցային օր
3	27 հունվարի 2022թ.	Հավելված 1-ը շարադրել նոր խմբագրությամբ (53 էջ աղյուսակ)
4	7 հունիսի 2022թ.	Պայմանագրի 2,192,419,599 . 74 դրամը սահմանել 1,275,000,000 . 0 դրամ, մնացած 667,288,499 . 74 դրամը կիրականացվի ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո լրացուցիչ համաձայնագրի կնքման միջոցով
5	2022թ . նոյեմբերի 1	№4 համաձայնագրով սահմանված 1,275,000,000 . 0 դրամը նվազեցնել 875,000,000 . 0 դրամ, «որի վճարումը պատվիրատուի կիրականավի սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ին համապատասխան»:

2022թ. հունիսի 7-ին կնվել է ոչ թե «ՀՀ Ո ԲՄԱՇՁԲ-2021-ՇԻՆ/ՕԿԿ-47» գնման պայմանագիրը, այլ դրա համաձայնագիր №4-ը, որի համաձայն պայմանագրի 2,192,419,599 . 74 դրամը նվազեցվել է մինչև 1,275,000,000 . 0 դրամ (պատկեր 2): Այսինքն պայմանագրի գումարը եղել է շատ ավելի մեծ:

Պատկեր 2. Ոստիկանության և «Բիդեք» ՍՊԸ-ի միջև 2021թ. սեպտեմբերի 3-ին կնքված «ՀՀ Ո ԲՄԱՇՁԲ-2021-ՇԻՆ/ՕԿԿ-47» գնման պայմանագրի շրջանակներում կնքված №4 համաձայնագրի պատճենը



ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N4

N ՀՀ Ո ԲՄԱՇՁԲ-2021-ՇԻՆ/ՕԿԿ-47 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան «07» 06 2022թ.

ՀՀ ոստիկանություն, ի դեմս ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Վ.Մովսիսյանի, որը գործում է ոստիկանության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Բիդեք» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Ավետիսյանի (այսուհետ՝ Կատարող), հիմք ընդունելով 03.09.2021թ.-ին կնքված ՀՀ Ո ԲՄԱՇՁԲ-2021-ՇԻՆ/ՕԿԿ-47 գնման Պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 8.5 և 8.13 կետերը, ֆոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը /այսուհետև՝ Համաձայնագիր/ հետևյալ մասին.

1.Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 28 ապրիլի 2022 թվականի թիվ 598-Ն որոշումը՝ սույն Համաձայնագրով Կողմերը համաձայնության եկան և հաստատեցին ՀՀ Ո ԲՄԱՇՁԲ-2021-ՇԻՆ/ՕԿԿ-47 ծածկագրով գնման պայմանագրի 5.1 կետով սահմանված 2 192 419 599,74 (երկու միլիարդ մեկ հարյուր հինսուներկու միլիոն չորս հարյուր տասնինը հազար հինգ հարյուր հինսունինը և թթսնասունչորս լումա) ՀՀ դրամից սահմանել 1 275 000 000 (մեկ միլիարդ երկու հարյուր յոթանասունհինգ միլիոն) ՀՀ դրամ, որը պատվիրատուի կողմից կիրականացվի սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ին համապատասխան և աշխատանքների կատարման օրացույցային գրաֆիկը Հավելված 2-ին համապատասխան, իսկ մնացած 667 288 499.74 /վեց հարյուր վաթսունյոթ միլիոն երկու հարյուր ութսունութ հազար չորս հարյուր հինսունինը և թթսնասունչորս լումա/ ՀՀ դրամ գումարը կիրականացվի ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո լրացուցիչ համաձայնագրի կնքման միջոցով: Գումարը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, ինչպես նաև Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

1.2 Սույն համաձայնագրով կողմերը համաձայնության եկան և հաստատեցին ՀՀ Ո ԲՄԱՇՁԲ-2021-ՇԻՆ/ՕԿԿ-47 ծածկագրով պայմանագրի 900011021947 հաշվեհամարը փոխարինել 900011037000 հաշվեհամարով:

1.3 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

1.4 Համաձայնագրի պայմանները կիրառվում են նաև կից աշխատանքային գրաֆիկին համապատասխան մինչև սույն համաձայնագրի կնքելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, աշխատանքի կատարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է (3) երեք էջից, կնքվում է հարերեն լեզվով՝ երկու. բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

2.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ոստիկանությունը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ոստիկանություն
ք.Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
Աշխատակազմի գործառնական վարչություն
2/2-900011037000
ՀՎՀՀ 01533334
Հեռ՝ 010 596857, 010 596039
Էլ. Փոստ: policetv.gnumner@mail.ru
Վ. Մովսիսյան
/ՀՀ ոստիկանության գնումների տեղակալ/
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Բիդեք» ՍՊԸ
գործ. հասցե՝ ՀՀ, ք. Երևան Սասունցի Դավիթ 87ա
իրավ. հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Նելբասովի 86
Բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 15700 15 55 99 20 100
ՀՎՀՀ՝ 00450801
հեռ. 011 57 55 22
Էլ. Հասցե՝ bedeck.llc@mail.ru, info@bedeck.am
Գ. Ավետիսյան
/«Բիդեք» ՍՊԸ տնօրեն/
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 2
«07» 06 2022թ.
ՀՀ Ո ԲՄԱՇՁԲ-2021-ՇԻՆ/ՕԿԿ-47 ծածկագրով գնման պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ՀՀ ոստիկանության ք. Երևան, Էրեբունի համայնք, Խորենացի 158 հասցեում տեղակայված շենք-շինությունների հիմնանորոգման-վերակառուցման (կառուցման) ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ք/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը*	
		Սկիզբը	Ավարտը
1	ՀՀ ոստիկանության ք. Երևան, Էրեբունի համայնք, Խորենացի 158 հասցեում տեղակայված շենք-շինությունների հիմնանորոգման-վերակառուցման (կառուցման) աշխատանքներ	01.02.2022թ.	20.12.2022թ.
ԸՆԴԱՄԵՆԸ			

* Շինարարական աշխատանքների տեխնոլոգիական հաջորդականությանն առնչվող բոլոր փոփոխությունները անհրաժեշտ է նախօրոք համաձայնեցնել Պատվիրատուի հետ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ոստիկանություն
ք.Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
Աշխատակազմի գործառնական վարչություն
2/2 900011037000
ՀՎՀՀ 01533334
Հեռ. 010 596857, 010 596039
Էլ. Փոստ:policetv.gnumner@mail.ru
Վ. Մովսիսյան
/ՀՀ ոստիկանության գնումների տեղակալ/
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Բիդեք» ՍՊԸ
գործ. հասցե՝ ՀՀ, ք. Երևան Սասունցի Դավիթ 87ա
իրավ. հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Նելբասովի 86
Բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 15700 15 55 99 20 100
ՀՎՀՀ՝ 00450801
հեռ. 011 57 55 22
Էլ. Հասցե՝ bedeck.llc@mail.ru, info@bedeck.am
Գ. Ավետիսյան
/«Բիդեք» ՍՊԸ տնօրեն/
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1
«07» 06 2022թ.
ՀՀ Ո ԲՄԱՇՁԲ-2021-ՇԻՆ/ՕԿԿ-47 ծածկագրով գնման պայմանագրի

Վճարման ժամանակացույց

N	աշխատանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2022թ. ընթացքում											Ընդամենը տարի
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	Ընդհանուր շինարարական աշխատանքներ 45221142/3						637 500 000	956 250 000	956 250 000	956 250 000	1 275 000 000	1 275 000 000	1 275 000 000	1 275 000 000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ոստիկանություն
ք.Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
Աշխատակազմի գործառնական վարչություն
2/2 900011037000
ՀՎՀՀ 01533334
Հեռ. 010 596857, 010 596039
Էլ. Փոստ:policetv.gnumner@mail.ru
Վ. Մովսիսյան
/ՀՀ ոստիկանության գնումների տեղակալ/
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Բիդեք» ՍՊԸ
գործ. հասցե՝ ՀՀ, ք. Երևան Սասունցի Դավիթ 87ա
իրավ. հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Նելբասովի 86
Բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 15700 15 55 99 20 100
ՀՎՀՀ՝ 00450801
հեռ. 011 57 55 22
Էլ. Հասցե՝ bedeck.llc@mail.ru, info@bedeck.am
Գ. Ավետիսյան
/«Բիդեք» ՍՊԸ տնօրեն/
(ստորագրություն)
Կ.Տ.

Առկա ֆինանսական միջոցներով պայմանագրի գումարը կազմել է 875,000,000 դրամ: ՀՀ կառավարության կողմից հաստատված գնումների պլանում նախատեսված

է եղել 875,000,000 դրամ (ԳՄԱ կոդ 45221142/3): Առկա ֆինանսական միջոցներով չապահովված պայմանագրի մասը կազմել է 400,000,000.0 դրամ:

2022թ. հունվարի 19-ին Ոստիկանությունը 450,000,000 դրամ ընդհանուր գումարով ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ ձեռք բերելու վերաբերյալ պայմանագիր է կնքել «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ի հետ: ՀՀ կառավարության կողմից հաստատված գնումների պլանում նախատեսված է եղել 293,262,700 դրամ (ԳՄԱ կոդ 50111130/524): Առկա ֆինանսական միջոցներով պայմանագրի գումարը կազմել է 293,262,700 դրամ: Առկա ֆինանսական միջոցներով չապահովված պայմանագրի մասը կազմել է 156,737,300.0 դրամ:

2022թ. հունվարի 19-ին կնքված պայմանագիրը փոփոխության է ենթարկվել այն կնքելուց մոտավորապես երկու շաբաթ հետո՝ փետրվարի 3-ի համաձայնագիր №1-ով: Դրանով կողմերը եկել են համաձայնության որ պայմանագրով սահմանված 450,000,000.0 դրամը կսահմանվի 293,262,700.0 դրամ:

Այն հանգամանքը, որ Ոստիկանությունը նախ ավելի մեծ գումարով պայմանագիր է կնքել, ապա պայմանագրի գումարի մեծությունը նվազեցրել է մինչև գնումների պլանով նախատեսված մեծությունը, նշանակում է, որ Ոստիկանությունն այդ լրացուցիչ գումարների դիմաց ապրանքի, աշխատանքի կամ ծառայության կարիքն ըստ էության չի ունեցել և ավելի մեծ գումարով պայմանագիր կնքել է ***հենց այնպես***, հույս ունենալով, որ կկարողանա ՀՀ կառավարությունից լրացուցիչ ֆինանսավորում ստանալ պայմանագրի այդ լրացուցիչ մասի համար: 2022թ. հունվարին, ոստիկանության մեքենաների ձեռք բերման ժամանակ եղել է այդպիսի դեպք, երբ Ոստիկանությունը լրացուցիչ ֆինանսավորում ստացել է[11]: Ժամանակի սղության պատճառով այս հետազոտության շրջանակներում հնարավոր չի եղել պարզել, թե արդյոք պայմանագրի ընդհանուր գումարի փոփոխության հետևանքով ինչ փոփոխություններ են կատարվել տեխնիկական բնութագրում և աշխատանքների ծավալները բնութագրող փաստաթղթերում: Եթե ՀՀ Ոստիկանությունը կարողացել է լիարժեք կատարել իր գործառույթները 875.0 մլն կամ 293.26 մլն դրամ գնում կատարելով, ապա ինչու է ավելի մեծ գումարով՝ 1,275.0 մլն կամ 450.0 մլն դրամ գումարով պայմանագիր կնքել: Եթե ՀՀ ՆԳՆ-ն չի կարողացել լիարժեք կատարել իր պարտականությունները, քանի որ չի կարողացել գնումներ կատարել ամբողջ անհրաժեշտ ծավալով (1,275.0 մլն դրամ կամ 450.0 մլն դրամ), ապա ՀՀ ՆԳՆ-ն պետք է նշի, թե որ գործառույթները չի կարողացել կատարել ավելի փոքր գնումների պատճառով: ***Գնումների պլանով նախատեսված գումարից ավելի մեծ***

[11] ՀՀ կառավարությունը լրացուցիչ միջոցներ է հատկացրել ՀՀ ՆԳՆ-ին մեքենաները ձեռք բերելու համար (դա ներկայացված է ստորև, մեքենաների ձեռքբերման դեպքի նկարագրությունում)

գումարով պայմանագիր կնքելու պրակտիկան զգալի կոռուպցիոն ռիսկեր է պարունակում:

ՀՀ կառավարության էլեկտրոնային ռեգիստրի համաձայն «Բիդեք» ՍՊԸ-ի իրական շահառուներն են Գառնիկ Ավետիսյանը (25%, 2009թ. ապրիլի 15-ից) և Դավիդ Սեդրակյանը (75%, 2019թ. փետրվրի 14-ից)[12]: «Ֆլեշ մոթորս» ՍՊԸ-ի դեպքում իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի չէ[13]:

Առանց ֆինանսական ապահովման և գնումների պլանում նախատեսելու գնման մեկ այլ օրինակ է 6 մարդատար մեքենա մատակարարելու վերաբերյալ «Մուրան» ՍՊԸ-ի հետ 2022թ. հոկտեմբերի 13-ին կնքած պայմանագիրը (ծածկագիր «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-60-ԷԼ-2022/ԱՎՏՈ»): 2023թ. փետրվարի 6-ին Ոստիկանությունը լուծել է պայմանագիրը, քանի որ «գնումների պլանով չհաստատվեց ֆինանսական միջոցներ պայմանագրով նախատեսված թվով 6 հատ մարդատար մեքենաները ձեռք բերելու համար»:

2.2. ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆՆԵՐԸ ՀԱՄԱՁԱՅՆ ARMEPS ՀԱՄԱԿԱՐԳԻ

Բյուջետային տարվա ընթացքում գնումների պլանում կատարվում են փոփոխություններ: ՀՀ կառավարության կողմից հաստատվող պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին որոշումներով վերջին տարիներին նախատեսվում է, որ տարվա ընթացքում պետության կարիքների համար իրականացվող գնումների պլանում փոփոխություններ և լրացումներ կատարելիս գնման ձևերը նախապես չեն համաձայնեցվում ՀՀ ֆինանսների նախարարության հետ: Ընդ որում, էլեկտրոնային աճուրդների համակարգի վերագործարկման դեպքում այն գնումները, որոնք գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն ենթակա են կատարման էլեկտրոնային աճուրդների համակարգի միջոցով, և համակարգը գործարկելու դրությամբ հաստատված չեն դրանց կազմակերպման համար անհրաժեշտ հայտարարության և հրավերի տեքստերը, իրականացվում են e-AUCTION համակարգի միջոցով՝ գնումների պլանում կատարելով դրանից բխող փոփոխություններ, հաշվի առնելով ՀՀ ֆինանսների նախարարի կողմից ըստ պատվիրատուների, համակարգի վերագործարկման համար սահմանված

[12] ՀՀ էլեկտրոնային ռեգիստր: Հասանելի է https://www.e-register.am/am/companies/1447125/declaration/e0b858a1-be9f-4371-8bc0-0ee7d6e7a6d4 էջում:
[13] ՀՀ էլեկտրոնային ռեգիստր: Հասանելի է https://www.e-register.am/am/companies/1464394 էջում:

ժամանակացույցը: ՀՀ կառավարությունը հաստատում է գնումների պլանը՝ ըստ բյուջետային ծախսերի ծրագրային և գործառական դասակարգման և ըստ ծրագրերի միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմինների և թիվս պետական բյուջեում կատարվող այլ փոփոխությունների և լրացումների, հաստատում է գնումների պլանում փոփոխությունների և լրացումների կատարման կարգը: ՀՀ կառավարության կողմից հաստատվող պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին որոշումների հավելված №12-ում նշվում է, որ առանձին դեպքերում «պետական բյուջեով նախատեսված հատկացումների վերաբաշխումներ, միջոցառումները կատարող պետական մարմինների ցանկերում փոփոխություններ և (կամ) լրացումներ, միջեռամսյակային տեղաշարժեր, ինչպես նաև տվյալ տարվա պետական բյուջեով նախատեսված հատկացումների հաշվին պետության կարիքների համար իրականացվող գնումների պլանում փոփոխություններ և լրացումներ կատարելու նպատակով գլխավոր կարգադրիչները սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը ներկայացնում են համապատասխան որոշման նախագիծ»:

Գնումների պլաններում կատարվող փոփոխությունները պետք է արտացոլեն Armeps համակարգում: Armeps համակարգում առկա տվյալների համաձայն Ոստիկանության (2023թ.՝ ՆԳՆ) գնումների պլանում կատարված փոփոխությունների արդյունքում առաջանում են մեծ թվով «0» մեծությամբ գնում նախատեսող տողեր (աղյուսակ 3): Ենթադրաբար, դրանք այն տողերն են, որոնց գծով նախատեսված գնումները դադարեցվել են և դրանց փոխարեն նախատեսվել է կատարել այլ գնում:

Աղյուսակ 3. Armpes համակարգի գնումների պլանի Ոստիկանության էջում գնումների քանակի և ծավալի վերաբերյալ առկա տեղեկատվություն

		2020թ.	2021թ.	2022թ.	2023թ.
	Տողերի թիվը	3,289	2,631	3,317	2,380
	«0»-ական տողեր	1,136	653	1,846	564
	Նախատեսված գնում (հատ)	2,153	1,978	1,469	1,816
	Գնման գումար (մլն դրամ)	13,572.7	15,888.3	25,467.4	17,939.1

Աղբյուր. Armeps

Ծանոթություն. Տողերի թիվը՝ գնումների պլանում առկա տողերի թիվը, «0»-ական տողեր՝ տողեր, որոնց գծով «ընդհանուր գումար»-ի մեծությունը «0» էր տվյալները ստուգելու օրը (ենթադրաբար, ինչ որ գումար նախատեսված է եղել, սակայն հետագայում գնումների պլանում կատարվել է փոփոխություն և տվյալ գնման համար հատկացված գումարը 0-ացվել է), Նախատեսված գնում՝ տվյալները ստուգելու օրը գնումների պլանի համաձայն նախատեսված

գնում: Գնման գումար՝ գնումների ընդամենը գումարը համաձայն գնումների պլանի: 2023թ. տվյալները հիմնված են Armeps համակարգից հոկտեմբերի 6-ին ներբեռնված ֆայլի վրա: 2023թ. Ոստիկանությունը դարձել է ՀՀ ՆԳՆ մաս:

Վերը ներկայացված տվյալները բյուջետային տարվա ընթացքում գնումների պլանում կատարվող ծավալուն փոփոխությունների վկայությունն են: Armeps համակարգում նշվում են նաև փոփոխությունների կատարման օրերը: Armeps համակարգում առկա 2020-23թթ. Ոստիկանության գնումների պլանների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. ՀՀ Ոստիկանության գնումների 2020-22թթ. պլաններն ըստ Armeps-ի

		2020թ.				2021թ.				2022թ.				2023թ.			
		Գնում	%	Մլն դրամ	%	Գնում	%	Մլն դրամ	%	Գնում	%	Մլն դրամ	%	Գնում	%	Մլն դրամ	%
1	ԲՄ	5	0.2	83.3	0.6	90	4.6	1,634.6	10.3	5	0.3	1,274.1	5.0	6	0.3	1,391.8	7.8
2	ԳՀ	1772	82.3	2,498.1	18.4	1195	60.4	1,714.3	10.8	242	16.5	1,332.6	5.2	399	22.0	2,410.0	13.4
3	ԵՄ									2	0.1	2.3	0.0	3	0.2	68.6	0.4
4	ԷԱ					539	27.2	1,655.7	10.4	1093	74.3	12,271.3	48.2	1241	68.3	8,341.2	46.5
5	ՀԲՄ	42	2.0	5,237.6	38.6	27	1.4	4,104.9	25.8	3	0.2	407.9	1.6	6	0.3	946.4	5.3
6	ՀՄԱ	37	1.7	55.2	0.4	35	1.8	211.5	1.3	11	0.7	1,216.9	4.8	26	1.4	1,416.4	7.9
7	ՄԱ	297	13.8	5698.5	42.0	92	4.7	6,567.3	41.3	115	7.8	8,962.5	35.2	135	7.4	3,364.8	18.8
		2153		**13,572.7**		**1978**		**15,888.3**		**1471**		**25,467.5**		**1816**		**17,939.1**	

Աղբյուր. Armeps

2.3. ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարության որոշումների հավելվածներով հաստատված գնումների պլանների, Armeps համակարգի գնումների պլանների Ոստիկանության էջում կատարված փոփոխությունները և փաստացի գնումների ցուցանիշների համադրությունը վկայում է, որ գնումները կապված չեն նախարարության ռազմավարական ծրագրերի և կարիքների գնահատումների հետ և տարվա ընթացքում ենթարկվում են էական փոփոխությունների:

2023թ. նոյեմբերի 10-ի գրությամբ Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը Ոստիկանությանը խնդրել տեղեկատվություն տրամադրել գնումների պլանում կատարվող մեծաքանակ և մեծածավալ փոփոխությունների և դրանց պատճառների վերաբերյալ[14]: 2023թ. դեկտեմբերի 13-ի պատասխան գրությամբ ՆԳՆ գլխավոր քարտուղարը պատասխանել է, որ գնումների պլանում փոփոխությունն են կատարվել ՀՀ կառավարության 2022թ. №337-Ն, №418-Ն, №598-Ն, №883-Ն, №1088-Ն, №1129-Ն, №1567-Ն, №1598-Ն, №1667-Ն, №1700-Ն և 1814-Ն

[14] Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի 2023թ. նոյեմբերի 10-ի Ե/2023-10.11/762 գրություն:

որոշումներով, «ինչպես նաև մի շարք վերաբաշխումներ և գնումների պլանի փոփոխություններ (գնման առարկաների միավոր գների, քանակների, գնման ձևերի փոփոխություններ, որոնք իրականացվել են PPCM էլեկտրոնային համակարգով)»: Գրությունից մեջբերվող հատվածը հիմք է տալիս ենթադրելու, որ առանձին դեպքերում ՀՀ կառավարության կողմից հաստատված գնումների պլանում փոփոխություններ են կատարվում առանց ՀՀ կառավարության հետ այդ փոփոխությունները համաձայնեցնելու («PPCM էլեկտրոնային համակարգով»):

Գնումների պլանում կատարվող փոփոխությունների արդյունքում Armeps համակարգում անհասկանալի արդյունքներ են գրանցվում: Armeps համակարգի գնումների պլանի համաձայն 2020թ. մարտի 19-ին կատարված փոփոխությունների արդյունքում ՀՀ Ոստիկանությունը նախատեսում էր 10 դրամ ընդամենը գումարով մեկ միավորը «0» դրամով ձեռք բերել 0 հատ վերնաշապիկ (ԳՄԱ կոդ՝ 18331200/537) և մեկ միավորը «0» դրամով ձեռք բերել 0 հատ գլխարկ (ԳՄԱ կոդ՝ 18441100/526): 2020թ. դեկտեմբերի 18-ին կատարված փոփոխության արդյուքնում Ոստիկանությունը նախատեսում էր 10 դրամով մեկ միավորը «0» դրամով ձեռք բերել 0 հատ վերնաշապիկ (ԳՄԱ կոդ՝ 18331200/538): ***Մեծ թվաքանակով և ծավալներով փոփոխությունների և սխալների պատճառով Armeps համակարգը չի ապահովում գնումների պլանների վերաբերյալ տեղեկատվության թափանցիկություն և հաշվետվողականություն***:

Աղյուսակ 4-ում ներկայացված են Armeps համակարգում առկա 2020-2023թթ. ՀՀ Ոստիկանության (2023թ.՝ ՆԳՆ) գնումների պլանների ենթադրաբար վերջնական տարբերակը: Ներկայացված տվյալներից ակնհայտ է, որ 2021-22թթ. փոփոխված պլանում ավելացել է ՄԱ ընթացակարգով գնումների թիվը: Այսպես, եթե ՀՀ կառավարության հաստատած պլանով 2021թ. Ոստիկանություն պետք է ՄԱ ընթացակարգի արդյունքում կնքեր 5,233.8 մլն դրամ գումարով 64 պայմանագիր, ապա փոփոխված պլանով արդեն նախատեսվում էր կնքել 6,567.3 մլն դրամ ծավալով 92 պայմանագիր: Նմանապես, եթե ՀՀ կառավարության հաստատած պլանով 2022թ. Ոստիկանությունը պետք է ՄԱ ընթացակարգի արդյունքում կնքեր 2,173.0 մլն դրամ գումարով 65 պայմանագիր, ապա փոփոխված պլանով արդեն նախատեսվում էր կնքել 8,962.5 մլն դրամ ծավալով 115 պայմանագիր: Այսինքն, մի շարք դեպքերում ՄԱ կիրառումը պայմանավորված է ոչ թե գնում կատարելու հրատապ անհրաժեշտությամբ, հեղինակային կամ հարակից իրավունքներով, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությամբ, այլ որովհետև արդեն

պլանավորման փուլում Ոստիկանությունը նախատեսում է գնումը կատարել այդ ձևով:

2019թ. ՏՀԶԿ և SIGMA-ի զեկույցի համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքը չի կարգավորում կարիքների գնահատման, շուկայի վերաբերյալ խորհրդակցությունների և նախապատրաստական այլ աշխատանքների հետ կապված հարցերը:

Գնումների պլաններում կատարվող մեծածավալ փոփոխությունները պլանավորման գործընթացում համակարգային խնդիրների առկայության վկայություն են: Մի քանի փոփոխություն կարելի է կատարել իրավիճակային փոփոխություններին արձագանքելու և պլանավորման ժամանակ թույլ տված փոքր վրիպակների հետևանքները վերացնելու նպատակով: Սակայն երբ փոփոխությունները շատ մեծ քանակ և ծավալ են կազմում և կրկնվում են ամեն տարի, նշանակում է պլանավորման գործընթացում խնդիրները համակարգային են: Խնդրահարույց է նաև այն հանգամանքը, որ ՀՀ կառավարության կողմից հաստատված գնումների պլանում ՀՀ ՆԳՆ-ն փոփոխություններ է կատարում առանց ՀՀ կառավարության հետ այդ փոփոխությունները համաձայնեցնելու («PPCM էլեկտրոնային համակարգով»):

ՀՀ ոստիկանությունը գնումներ է կատարում պլանում տվյալ գնումը նախատեսված չլինելու պայմաններում: 2022թ. սեպտեմբերի 9-ին ՀՀ ոստիկանությունն իր կարիքների համար «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-60-ԷԼ-2022/ԱՎՏՈ» ծածկագրով մարդատար մեքենաների ձեռքբերման հայտարարություն և հրավեր է տարածել: Հոկտեմբերի 5-ին արդեն հայտարարել է պայմանագիր կնքելու մասին: 2022թ. հոկտեմբերի 7-ին ոստիկանությունը հրապարակել է շահերի բախման բացակայության և հաղթող մասնակցի՝ «Մուրան» ՍՊԸ-ի իրական շահառուների մասին հայտարարությունը: Նույն օրը ՀՀ ոստիկանությունը հրապարակել է նաև գնահատող հանձնաժողովի արձանագրությունը: Հոկտեմբերի 13-ին ոստիկանությունը հրապարակել է կնքված պայմանագրի մասին հայտարարություն, իսկ հոկտեմբերի 19 իրական շահառուների վերաբերյալ տվյալներ: Այս ամենը առանց գնումների պլանում ֆինանսավորում նախատեսված լինելու: 2023թ. փետրվարի 6-ին ՀՀ ոստիկանությունը հայտարարել է «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-60-ԷԼ-2022/ԱՎՏՈ» ծածկագրով պայմանագիրը լուծելու մասին, քանի որ «2022 թվականի գնումների պլանով չհաստատվեց ֆինանսական միջոցներ պայմանագրով նախատեսված թվով 6 հատ մարդատար մեքենաները ձեռք բերելու համար:»

Եզրակացություն

Այս հետազոտությունը եզրակացնում է, որ 2020-22թթ. Ոստիկանությունը գնումները կատարել է ոչ թե ոստիկանության բարեփոխումների ռազմավարության հիման վրա մշակված գնումների պլանի համաձայն, այլ տվյալ պահին առաջացած կարիքից ելնելով, ինչը չի համապատասխանում օրենսդրության և պետական ֆինանսական կառավարման բնագավառում գոյություն ունեցող լավագույն փորձին:

Ըստ էության գնումների պլանը որևէ կերպ Ոստիկանությանը չի պարտադրել գնումները կատարել համաձայն այդ պլանի: Ոստիկանությունը կնքել է գնումների պլանում նշված մեծությունները գերազանցող պայմանագրեր, մեծ քանակով և ծավալով փոփոխություններ է կատարել գնումների պլանում: Անհասկանալի է, կա արդյոք որևէ օրենսդրական կարգավորում, որը Ոստիկանության (ներկայում՝ ՆԳՆ) թույլ չի տալիս գնումների պլանում նշված մեծությունից մեծ ծավալով պայմանագիր կնքել: Ինչպե՞ս է ՀՀ ՆԳՆ-ն «Բիդեք» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրի դեպքում որոշել 1,275.0 մլն դրամ կամ «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ի դեպքում 450 մլն դրամ մեծությամբ պայմանագիր կնքել, եթե գնումների պլանով ավելի փոքր մեծություն է նախատեսվել, համապատասխանաբար 875.0 մլն դրամ կամ 293.26 մլն դրամ:

Առանց ֆինանսական միջոցների ապահովման գնումների գործընթացը պետական ռեսուրսների վատնում է: Ոստիկանության աշխատակիցները պատրաստում են գնման առարկայի տեխնիկական բնութագիրը, ձևավորում են հանձնաժողով և կազմակերպում են հանձնաժողովի նիստեր, տարածում են մրցույթի հրավերը և հայտարարությունը, ընդունում և գնահատում են ներկայացված հայտերը, պատրաստում և տարածում են շահերի բախման բացակայության վերաբերյալ հայտարարություն, ուսումնասիրում և գնահատում են ներկայացված հայտերը, ուսումնասիրում են իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը, պատրաստում են պայմանագիր և կնքում են այն, ապա Ոստիկանությունը լուծում է պայմանագիրը քանի որ «գնումների պլանով չհաստատվեց ֆինանսական միջոցներ պայմանագրով նախատեսված» գնումը կատարելու համար: Սա Ոստիկանության մարդկային և նյութական ռեսուրսների վատնում է:

Առաջարկություն

Ոստիկանությունը պետք է էականորեն բարելավի գնումների պլանավորման գործընթացը, այն կապելով ոստիկանության զարգացման ռազմավարության հետ և

հիմնելով կարիքների գնահատման վրա:

ՀՀ ՆԳՆ-ին առաջարկում ենք.

- Էականորեն բարելավել գնումների պլանավորումը և շեշտակի նվազեցնել գնումների պլանում կատարվող փոփոխությունների քանակը և ծավալը: Գնումների պլանում փոփոխություններ կարելի է և անհրաժեշտ է կատարել միայն այն դեպքում, եթե արտաքին միջավայրում կատարվել են այնպիսի էական փոփոխություններ, որ հնարավոր չէր կանխատեսել պլանավորման ժամանակ:
- ներկայացնել 2020-22թթ. գնումների պլաններում կատարված փոփոխությունների պատճառների վերլուծություն և ներկայացնել, թե ինչպիսի դասեր է քաղել նախորդ տարիներին գնումների պլաններում կատարված փոփոխություններից:

Հասկանալի չէ, թե ինչպես է ՀՀ Ոստիկանությանը որոշել այն գնումների քանակը և ծավալը, որոնք նախատեսված չեն գնումների պլանով: ՀՀ Ոստիկանությունը պետք է հաշվետվություն հրապարակի այն ընթացակարգերի քանակի և ծավալի վերաբերյալ, որոնք նախատեսված չեն եղել գնումների պլանով կամ ապահովված չեն եղել առկա ֆինանսական միջոցներով: Հաշվետվությունը պետք է տեղեկատվություն ներառի ծածկագրի, գնումների պլանում ներառված չլինելու պատճառների, ընթացակարգի, գնման մեծության, մատակարարի, պայմանագիրը կատարելու կամ լուծելու և դրա պատճառների վերաբերյալ, ինչպես նաև տեղեկատվություն այն մասին, թե քանի մարդ-ժամ են Ոստիկանության աշխատակիցները ծախսել այդ անարդյունավետ գործունեության վրա: Եթե կնքվել է գնումների պլանով նախատեսված միջոցները գերազանցող մեծությամբ պայմանագիր, Ոստիկանությունը պետք է հաշվետվություն հրապարակի պլանից շեղումների վերաբերյալ, ինչպես նաև այն մասին, թե ինչպես է որոշվել գնումների պլանի մեծությունը գերազանցող ծավալը:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

3.1. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԱՅԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Գնումները պետք է հիմնվեն երկարաժամկետ (ռազմավարական) կարիքների գնահատման վրա և կատարվեն հաստատված տեխնիկական բնութագրերին համապատասխան: Տեխնիկական բնութագրերի հետազոտությունը ինքնին առանձին ծավալուն աշխատանք է: Այս հետազոտության համատեքստում կարևոր է ընդգծել, որ Ոստիկանության կողմից հրապարակվող փաստաթղթերից պարզ չէ, թե ինչպես են որոշվում ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները: Դա կարող է նշանակել, որ գործընթացը համակարգված չէ և կապված չէ կարիքների հետ: 2023թ. մայիսի 23-ին Ոստիկանությունը մրցույթ է հայտարարել Արագածոտնի, Գեղարքունիքի, Կոտայքի և Տավուշի մարզերում 2023թ. հունվարից նոր պարեկային ծառայության համար անհրաժեշտ մեքենաների ձեռքբերման համար և հրապարակել է մեքենաներին ներկայացվող տեխնիկական պահանջները (աղյուսակ 5):

Աղյուսակ 5. ՀՀ Ոստիկանության կողմից ձեռք բերվելիք մեքենաների որոշ բնութագրեր

2022թ. հունվարին կայացած ԷԱ		**2022թ. մայիսին հայտարարված ԲՄ**	
(սեղան)	(ամենագնաց)	(սեղան)	(ամենագնաց)
Շարժիչի աշխատանքային ծավալ (լիտր)			
1.6-3.6	2.0-3.6	2.0-3.6	2.4-3.6
Վառելիքի ծախսը 100 կմ ոչ ավել քան (լիտր)			
15	18	15	18
Փոխանցմանը տուփը			
Ավտոմատ, ոչ պակաս 5 աստիճան		Հիդրոմեխանիկական ոչ պակաս 5 աստիճան կամ վարիատոր	
Երկարությունը			
4600-5050	4590-5105	4250-5050	4350-5105
Լայնությունը			
1518-1910	1820-2175	1750-1950	1800-2175

Բարձրությունը			
1425-1490	1650-1855	1400-1600	1600-1855
Անվային բազա, ոչ պակաս			
-	-	2800-ից	2690-ից
Լուսածերպ (կլիռենս), ոչ պակաս			
130	180	130	180
Քաշը (կգ), ոչ պակաս			
1280	1650	1250	1400
Բակի տարողությունը (լիտր), ոչ պակաս			
45	50	45	50

Եթե 2022թ. հունվարին ԷԱ-ի ժամանակ ներկայացված բնութագրի համաձայն բավական էր, որ ամենագնացի շարժիչի աշխատանքային ծավալը կազմեր նվազագույնը 2.0 լիտր, ապա 2022թ. մայիսին, Արագածոտնի, Գեղարքունիքի, Կոտայքի և Տավուշի մարզերի պարեկային ծառայությունների դեպքում Ոստիկանությունը կարծում էր, որ ամենագնացի շարժիչի աշխատանքային ծավալը պետք է պակաս չլինի 2.4 լիտրից: Ոստիկանության կողմից հրապարակված որևէ փաստաթուղթ չի բացատրում, թե Արագածոտնի, Գեղարքունիքի, Կոտայքի և Տավուշի մարզերի որ առանձնահատկությունն է պահանջում շարժիչի հավելյալ աշխատանքային ծավալ: Նմանապես, հասկանալի չէ, թե կարիքի ինչ գնահատման հիման վրա են փոխվել գնման առարկայի չափսերին և քաշին ներկայացվող պահանջները[15]:

3.2. ԳՆՈՒՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Աղյուսակ 6-ում ներկայացված են 2020-22թթ. Ոստիկանության կողմից կատարված գնումների վերաբերյալ փաստացի տեղեկատվությունը: Armeps համակարգի համաձայն 2020-22թթ. ավելացել են Ոստիկանության կողմից կատարվող գնումների ծավալները:

2022թ. Ոստիկանությունը կազմակերպել է 4 ԲՄ, որոնցից խոշորագույնի ծավալը կազմել է 1,275,000,000.0, ամենափոքրինը՝ 60,000,000.0 դրամ: ԲՄ ընթացակարգով 1.67 մլրդ դրամ ծավալով գնումների արդյունքում Ոստիկանությունը հաշվարկային տնտեսում չի ունեցել և գնումը կատարել է ճիշտ այն գնով, որը

[15] Տարբեր տեխնիկական բնութագրերով մեքենաների ձեռքբերման պատճառների և հիմնավորումների վերաբերյալ ՀՔԱՎ հարցմանը (2023թ. նոյեմբերի 8-ի Ե/2023-08.11/754 գրություն) ՀՀ ՆԳՆ-ն չի պատասխանել:

ծրագրավորել էր: Դա կարող է նշանակել, որ կամ Ոստիկանությունը կարողանում է շատ լավ հաշվարկել (կանխատեսել) առաջարկվող գները, կամ ԲՄ արդյունքները կանխորոշված են:

Ոստիկանությունը 875,000,000.0 դրամ էր նախատեսել ընդհանուր շինարարական աշխատանքներ ձեռք բերելու համար (ԳՄԱ կոդ 45221142/3): ԲՄ արդյունքում «Բիդեք» ՍՊԸ-ն 1,275,000,000.0 ընդհանուր գումարով և 875,000,000 դրամ առկա ֆինանսական միջոցներով պայմանագիր է կնքել Ոստիկանության հետ: Ոչինչ տնտեսել չի հաջողվել:

Ոստիկանությունը 293,262,700 դրամ էր նախատեսել ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ ձեռք բերելու համար (ԳՄԱ կոդ 50111130/524): Հրատապ բաց մրցույթի (այսուհետ՝ ՀԲՄ) արդյունքում «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ն 450,000,000.0 դրամ ընդհանուր գումարով և 293,262,700 դրամ առկա ֆինանսական միջոցներով պայմանագիր է կնքել Ոստիկանության հետ: Ոչինչ տնտեսել չի հաջողվել:

ՄԱ ընթացակարգով կատարված 5.5 մլրդ ծավալով 188 գնումների միջին մեծությունը կազմել է 29.3 մլն դրամ: Եթե 2022թ. բոլոր գնումների դեպքում հաշվարկային տնտեսումը կազմել է 0.3%, ապա ԷԱ դեպքում հաշվարկային տնտեսումը կազմել է 0.4%, ԳՀ դեպքում՝ 1.9%: Եթե պետական միջոցների տնտեսումը կարևոր է, ապա այս տվյալների համաձայն նպատակահարմար է, որպեսզի ՀՀ ՆԳՆ-ն ավելի շատ օգտագործի ԳՀ ընթացակարգը, ինչն իհարկե տրամաբանական չէ:

Հստակեցման կարիք ունի առկա ֆինանսական միջոցների հարցը: 2023թ. նոյեմբերի 8-ին ՀՔԱՎ-ը հարցում է ուղարկել ՀՀ ՆԳՆ խնդրելով պարզաբանել, թե ինչպես է Ոստիկանությունը որոշում գնման ծավալն այն պայմանագրերի դեպքում, երբ այդ ծավալը գերազանցում է պլանավորված մեծությունը: ՀՀ ՆԳՆ-ն չի պատասխանել:

Պատկեր 3-8-ում ներկայացված են 2020-22թթ. ՀՀ կառավարության որոշումներով հաստատված Ոստիկանության գնումների պլանների, Armeps համակարգի գնումների պլանների էջում առկա ցուցանիշները և Armeps համակարգի պայմանագրերի էջի ցուցանիշները: Ներկայացված են ինչպես պայմանագրերի թվաքանակի վերաբերյալ տվյալները (հատ պայմանագիր), այնպես էլ պայմանագրերի մեծությունները (մլն դրամ):

Աղյուսակ 6. Ոստիկանության կողմից 2020-22թթ. կատարված գնումներն ըստ ընթացակարգերի

	2020թ.				2021թ.				2022թ.			
	Գնում	**%**	**AMD մլն**	**%**	**Գնում**	**%**	**AMD մլն**	**%**	**Գնում**	**%**	**AMD մլն**	**%**
ԲՄ	11	1.3	387.8	2.9	38	4.1	2,297.9	13.8	4	0.5	1,673.1	8.9
ՀԲՄ	37	4.4	6,579.2	48.6	19	2.0	3,974.9	23.9	3	0.3	579.6	3.1
ԵՄ	1	0.1	1.8	0.0					1	0.1	0,5	0.0
ԷԱ					163	17.6	5,928.0	35.6	377	43.2	8,222.0	43.8
ԳՀ	443	52.9	1,759.9	13.0	374	40.3	1,852.6	11.1	148	17.0	1,286.4	6.8
ՄԱ	156	18.6	4,689.0	34.6	132	14.2	2,257.2	13.6	188	21.6	5,511.9	29.3
ՀՄԱ	10	1.2	45.4	0.3	22	2.4	267.9	1.6	5	0.6	1,451.4	3.1
ԳՉԾ	179	21.4	79.9	0.6	179	19.3	75.7	0.5	146	16.7	61.2	0.3
	837		**13,543.0**		**927**		**16,654.2**		**872**		**18,786.1**	
ԱՖՄ			**11,272.3**				**16,371.6**				**17,945.8**	
ՀՏ			**249.3**				**696.7**				**64.9**	
ՀՏՏ			**1.8%**				**4.2%**				**0.3%**	

Աղբյուր. Armeps

Ծանոթություն. ԲՄ՝ բաց մրցույթ, ՀԲՄ՝ հրատապ բաց մրցույթ, ԵՄ՝ երկփուլ մրցույթ, ԷԱ՝ էլեկտրոնային աճուրդ ԳՀ՝ գնանշման հարցում, ՄԱ՝ մեկ անձ, ՀՄԱ՝ հրատապ մեկ անձ, ԳՉԾ՝ գնում չհանդիսացող : ԱՖՄ՝ պայմանագրի գումարը առկա ֆինանսական միջոցներով, ՀՏ՝ հաշվարկային տնտեսում, ՀՏՏ՝ հաշվարկային տնտեսումը որպես ընդհանուր գումարի տոկոս:

Պատկեր 3. 2022թ. Ոստիկանության կողմից կատարված գնումների պլանային և փաստացի ցուցանիշներն ըստ ընթացակարգերի (հատ պայմանագիր)



ՀՀ կառավարության հաստատած 2022թ. գնումների պլանի համաձայն նախատեսվել է, որ Ոստիկանությունը ԷԱ ընթացակարգով պետք է կատարի 921 գնում: Armeps համակարգի համաձայն, գնումների պլանում կատարված փոփոխություններից հետո ԷԱ ընթացակարգով նախատեսվում էր կատարել 1093 գնում: Փաստացի ԷԱ ընթացակարգով կատարվել է 377 գնում: ԳՀ ընթացակարգով նախատեսվել է կատարել 121 գնում, փոփոխությունների արդյունքում պլանը կազմել է 242 գնում, փաստացի ԳՀ ընթացակարգով Ոստիկանությունը կատարել է 147 գնում:

Պատկեր 4. 2022թ. Ոստիկանությունը կողմից կատարված գնումների պլանային և փաստացի ցուցանիշներն ըստ ընթացակարգերի (մլն դրամ)



2022թ. ՀՀ կառավարության որոշումով նախատեսվում էր, որ Ոստիկանությունը ԲՄ ընթացակարգով պետք է կատարեր 1,740.4 մլն դրամի գնում: Armeps-ի համաձայն, կատարված փոփոխությունների արդյունքում ԲՄ-ով գնումների ծավալը նվազեցվել է մինչև 1,274.1 մլն դրամ: Փաստացի Ոստիկանությունը ԲՄ ընթացակարգով կատարել է 1,673.1 մլն դրամի գնում, կամ ՀՀ կառավարության որոշմամբ նախատեսվածից 67.3 մլն դրամով պակաս: ԷԱ ընթացակարգով, ՀՀ կառավարության որոշմամբ նախատեսած 8,403.6 մլն դրամի փոխարեն Ոստիկանությունը կատարել է 8,222.0 մլն դրամի գնում, կամ 181.6 մլն դրամով պակաս: ՄԱ ընթացակարգով ՀՀ կառավարության որոշմամբ նախատեսված 5,437.7 մլն դրամի փոխարեն Ոստիկանությունը կատարել է 5,511.9 մլն դրամի գնում, կամ 74.2 մլն ավել:

Պատկեր 5. 2021թ. Ոստիկանության կողմից կատարված գնումների պլանային և փաստացի ցուցանիշներն ըստ ընթացակարգերի (հատ պայմանագիր)



Պատկեր 6. 2021թ. Ոստիկանության կողմից կատարված գնումների պլանային և փաստացի ցուցանիշներն ըստ ընթացակարգերի (մլն դրամ)



Պատկեր 7. 2020թ. Ոստիկանության կողմից կատարված գնումների պլանային և փաստացի ցուցանիշներն ըստ ընթացակարգերի (հատ պայմանագիր)



Ներկայացված տվյալները վկայում են, որ Ոստիկանությունը հաճախ պլանավորվածից ավելի շատ է օգտագործում ՄԱ ընթացակարգը: Եթե ՀՀ կառավարության որոշումներով 2020թ., 2021թ. և 2022թ. նախատեսված է եղել

համապատասխանաբար 68, 64 և 58, տարվա ընթացքում գնումների պլանում կատարված փոփոխությունների արդյունքում ՄԱ ընթացարկարգի ցուցանիշներն ավելացվել են համապատասխանաբար 297, 92 և 115: 2021թ. և 2022թ. ՄԱ փաստացի դեպքերը գերազանցել են նաև ավելացված պլանը կազմելով համապատասխանաբար 132 և 188 դեպք: Ընդ որում, չնայած ՄԱ ընթացակարգի պլանային դեպքերը նվազում են, փաստացի դեպքերն ավելանում են, ինչը նշանակում է, որ Ոստիկանությունը հաճախ է օգտագործում այդ ընթացակարգը:

Պատկեր 8. 2020թ. Ոստիկանության կողմից կատարված գնումների պլանային և փաստացի ցուցանիշներն ըստ ընթացակարգերի (մլն դրամ)



2021-22թթ. ՀՀ ոստիկանությունն սկսել է հաճախ օգտագործել ԷԱ ընթացակարգը:

3.3. ՀՐԱՏԱՊ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության շրջանակներում հետազոտվել են www.gnumner.minfin.am կայքում առկա, վարորդական վկայականների և տրանսպորտային միջոցների հաշվառման վկայագրերի տպագրման համար անհրաժեշտ ապրանքների և նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՎԿԱՅԱԿԱՆ/2023/Հ-17» ծածկագրով գնման ընթացակարգի փաստաթղթերը: ՀԲՄ հրավերը հրապարակվել է 2022թ. դեկտեմբերի 1-ին: 2022թ. դեկտեմբերի 2-ին Ոստիկանությունը հարցեր է ստացել հրավերի վերաբերյալ: 2022թ. դեկտեմբերի 6-ին գնահատող հանձնաժողովը հայտարարություն է տարածել պարզաբանման մասին, որը հաստատվել է

գնահատող հանձնաժողովի 2022թ. դեկտեմբերի 6-ի թիվ 2 որոշմամբ: Միևնույն պարզաբանումը Ոստիկանությունը www.gnumner.minfin.am կայք է մուտքագրել 2 անգամ՝ 16:01:54-ին և 16:03:25-ին: Դեկտեմբերի 7-ին գնահատող հանձնաժողովը հայտարարություն է տարածել ևս մեկ պարզաբանման մասին, որը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 2022թ. դեկտեմբերի 7-ի թիվ 3 որոշմամբ:

Դեկտեմբերի 12-ին հանձնաժողովը հրապարակել է «ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՎԿԱՅԱԿԱՆ/2023/Հ-17» ծածկագրով ՀԲՄ միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի №4 արձանագրությունը: Հանձնաժողովը որոշել է համակարգի միջոցով մասնակիցներին առաջարկել շտկել անհամապատասխանությունները[16]: 2022թ. դեկտեմբերի 13-ին հանձնաժողովը հրապարակել է շահերի բախման բացակայության մասին հայտարարություն: Դեկտեմբերի 14-ին հանձնաժողովը կայքում հրապարակել է «ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՎԿԱՅԱԿԱՆ/2023/Հ-17» ծածկագրով ՀԲՄ միջոցով գնում կատարելու ընթացակագրի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի №5 արձանագրությունը: Հանձնաժողովը որոշել է ընտրված մասնակից ճանաչել Shenzhen Rockaudio Technology Co Ltd-ին և անգործության ժամկետի ավարտից հետո[17] Shenzen Rockaudio Technology Co Ltd-ին առաջարկել կնքել պայմանագիր:

Դեկեմբերի 15-ին ՀՀ ոստիկանությունը հայտարարություն է տարածել վարորդական վկայականների և տրանսպորտային միջոցների հաշվառման վկայագրերի տպագրության համար ապրանքների և նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՎԿԱՅԱԿԱՆ/2023/Հ-17» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին: 2022թ. դեկտեմբերի 23-ին ոստիկանությունը հրապարակել է «ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՎԿԱՅԱԿԱՆ/2023/Հ-17» ծածկագրով գնման ընթացակարգի իրական շահառուների վերաբերյալ տվյալները:

2023թ. հունվարի 10-ին ՀՀ ոստիկանությունը հայտարարություն է տարածել 2023թ. հունվարի 9-ին Shenzen Rockaudio Technology Co Ltd-ի հետ վարորդական վկայականների և տրանսպորտային միջոցների հաշվառման վկայագրերի տպագրման համար անհրաժեշտ ապրանքների և նյութերի ձեռքբերման պայմանագիր կնքելու վերաբերյալ:

[16] Shenzhen Rockaudio Technology Co Ltd-ն չի ներկայացրել ապրանքների տեխնիկական բնութագրերը, արտադրողի անվանումը, ֆիրմայի անվանումը: «Ինֆորմատիկ Սոլուշն» ՍՊԸ-ից գնահատող հանձնաժողովը ցանկացել է ստանալ հինավորում, թե արդյո՞ք «Ամազոն» և «Ալիբաբա» ֆիրմային անվանումով վարորդական վկայականների և տրանսպորտային միջոցների հաշվառման վկայագրերի տպագրման համար անհրաժեշտ ապրանքներ և նյութեր արտադրող «Ամազոն», «Ալիբաբա» անվանումով արտադրողներ գոյություն ունեն:
[17] Պայմանագիր կնքելու մասին որոշման հրապարակման օրվան հաջորդող օրվա մինչև 10-րդ օրացուցային օրը:

2023թ. փետրվարի 3-ին ՀՀ ոստիկանությունը Shenzen Rockaudio Technology Co Ltd-ին ծանուցել է պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին, քանի որ Shenzen Rockaudio Technology Co Ltd-ն սահմանված ժակետում չի ներկայացրել «ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՎԿԱՅԱԿԱՆ/2023/Հ-17» ծածկագրով պայմանագրի համաձայնագիր 1-ը, որով սահմանվելու էր Shenzen Rockaudio Technology Co Ltd-ի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման նպատակով ֆինանսական միջոցների առկայությունը: Նույն օրը ՀՀ ոստիկանությունը հայտարարություն է տարածել գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին, քանի որ «Ֆինանսական միջոցները նախատեսվելուց հետո մասնակցին ուղարկվել է համաձայնագրի նախագիծը, որը Մասնակցի կողմից 15 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրվել»:

2023թ. փետրվարի 20-ին ՀՀ ՆԳՆ ոստիկանությունը որոշում է կայացրել «ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՎԿԱՅԱԿԱՆ/2023/Հ-17» ծածկագրով ***սանհանգույցների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով*** հայտարարված գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակից Shenzen Rockaudio Technology Co Ltd-ին ներառել գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (պատկեր 9):

Պատկեր 9. Ոստիկանության որոշումը վարորդական վկայականների և տրանսպորտային միջոցների հաշվառման վկայագրերի տպագրման համար անհրաժեշտ ապրանքների և նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՎԿԱՅԱԿԱՆ/2023/Հ-17» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացված մասնակցին գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու մասին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԳՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑ ՆԱԽԱՁԵՌՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6–րդ հոդվածի 6–րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության ՆԳՆ Ոստիկանությունը որոշեց.

«ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՎԿԱՅԱԿԱՆ/2023/Հ-17» ծածկագրով սանհանգույցների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակից Shenzhen Rockaudio Technology Co Ltd -ին ներառել գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀՀ ՆԳՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ, ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

« 18 » « 02 » 2023թ.

Ներկայացված օրինակը, երբ մրցույթ են հայտարարում վարորդական վկայականների և տրանսպորտային միջոցների հաշվառման վկայագրերի տպագրման համար անհրաժեշտ ապրանքների և նյութերի ձեռքբերման նպատակով , ապա գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու վերաբերյալ որոշման մեջ նշում են, որ որոշել են վերը նշված ցուցակում ներառել «սանիտարական ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված գնման ընթացակարգի մասնակից» ընկերությանը, Ոստիկանությունում ներքին հսկողության համակարգի թույլ աշխատանքի վկայություն է (պատրաստված և ղեկավարի հաստատմանը ներկայացված փաստաթուղթը չի անցնում կրկնակի ստուգում):

3.4. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Ինչպես արդեն նշվել է, վերջին տարիներին ավելացել են ԷԱ ընթացակարգի օգտագործման դեպքերը: Դրանով պայմանավորված կատարվել է e-AUCTION համակարգում ԷԱ մի շարք ընթացակարգերի հետազոտություն, որոնց արդյունքում ի հայտ են եկել որոշակի միտումներ:

Չնայած հանդերձանքի գնման ԷԱ-երին առերևույթ առկա է մրցակցություն, սակայն հաղթողների շրջանակը սովորաբար սահմանափակվում է «Քանաքեռի կարի ֆաբրիկա», «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա», «Տեքսուորլդ», «ԱՐՄՏԵՔՍՏԻԼ» և «ԱՆԳԱ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ներով և մի քանի ԱՁ-երով:

2022թ. հունվարի 11-ին «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՊՊԳՎ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/Ա-47»[18] ծածկագրով հանդերձանքի ձեռքբերման ԷԱ-ին, որի շրջանակներում նախատեսվում էր ձեռք բերել վերնաշապիկներ և փողկապներ, մասնակցել են «Տեքսուորլդ» և «ԱՆԳԱ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ները և Գայանե Հակոբյան Գևորգի Ա/Ձ-ն: «ԱՆԳԱ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ն հաղթել է պատրաստակամություն հայտնելով հրավերով նախատեսված 2686 վերնաշապիկը մատակարարել 8,750,000.0 ՀՀ դրամով (CPV 18331200/530, մեկ վերնաշապիկի արժեքը 3,257.63 դրամ), իսկ 1500 փողկապը 694,000.0 դրամով (CPV 18421120/513, մեկ փողկապի արժեքը 462.67 դրամ):

2022թ. հունվարի 12-ին կայացած «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՏՎ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/Ա-46»[19] ծածկագրով հանդերձանքի ձեռքբերման էլեկտրոնային աճուրդին, որի շրջանակներում նախատեսվում էր ձեռք բերել գլխարկներ, կոստյումներ, տաբատներ,

[18] «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՊՊԳՎ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/Ա-47» ծածկագրով հանդերձանքի ձեռքբերման ԷԱ-ի վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է https://eauction.armeps.am/hy/public/tender_details/tid/16233/ հղմամբ:
[19] «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՏՎ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/Ա-46» ծածկագրով հանդերձանքի ձեռքբերման վերաբերյալ ԷԱ-ի տեղեկատվությունը հասանելի է https://eauction.armeps.am/hy/public/tender_details/tid/16219/ հղմամբ:

արտացոլող բաճկոնակներ, մասնակցել են «Քանաքեռի կարի ֆաբրիկա» և «ԱՆԳԱ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ները, Գայանե Հակոբյան Գևորգի Ա/Ձ-ն: «ԱՆԳԱ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ն հաղթել է պատրաստակամություն հայտնելով հրավերով նախատեսված 3000 գլխարկը մատակարարել 6,900,000.0 դրամով (CPV 18441100/529, մեկ գլխարկի արժեքը 2,300.0 դրամ), 602 կոստյումը՝ 15,700,000.0 դրամով (CPV 18221600/545, մեկ կոստյումի արժեքը 26,079.73 դրամ), 500 արտացոլող բաճկոնակները՝ 1,920,000 դրամով (CPV 35111340/509, մեկ արտացոլող բաճկոնակի արժեքը 3,840.0 դրամ) և 50 արտացոլող բաճկոնակները՝ 195,625 դրամով (CPV 35111340/510, մեկ արտացոլող բաճկոնակի արժեքը 3,912.5 դրամ): Գայանե Հակոբյան Գևորգի Ա/Ձ-ն հաղթել է տաբատների էլեկտրոնային աճուրդում պարտավորվելով 2000 տաբատը մատակարարել 24,500,000.0 դրամով (CPV 18231400/509, մեկ տաբատի արժեքը 12,250.0 դրամ): Հայտարարությամբ նախատեսված են եղել ներքնաշապիկներ (CPV 18311210/513), աստղ (CPV 35811200/509), աստղ (CPV 35811200/510), նշանաքուղ (CPV 35811220/503), նշանաքուղ (CPV 35811220/504), որոնց հետ կապված էլեկտրոնային աճուրդի վերաբերյալ e-AUCTION համակարգում տեղեկավություն առկա չէ:

2022թ. հունվարի 12-ին կայացած «35111340/507» CPV-ով արտացոլող բաճկոնների գնման ԷԱ-ին մասնակցել են «Քանաքեռի կարի ֆաբրիկա», «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա», «Տեքսուորլդ» և «ԱՆԳԱ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ները, իսկ «18421130/508» CPV-ով ձեռնոցների գնման ԷԱ-ին «ԱՐՄՏԵՔՍԻԼ», «ԱՆԳԱ ՏՐԱՆՍ» և «Տեքսուորլդ» ՍՊԸ-ները: Նույն օրը պարեկային ծառայության համար «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՀԱՆԴԵՐՁ/ՊԱՐԵԿ/15»[20] ծածկագրով հանդերձանքի ձեռքբերման ԷԱ-ին, որի շրջանակներում ձեռք են բերվել արտացոլվող բաճկոնակներ, ձեռնոցներ, փողկապներ, թևքանշան և այլ պարագաներ, մասնակցել է «ԱՆԳԱ ՏՐԱՆՍ», «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա», «Տեքսուորլդ», «Տեքստիլարտ», «ՌԻՄՆԱ», «ԳԴԱԿ» և «ՄԱԷ» ՍՊԸ-ները:

2022թ. փետրվարի 1-ին պարեկային ծառայության համար հանդերձանքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՏԱԲԱՏ/ՊԱՐԵԿ/16»[21] ծածկագրով տաբատների ձեռքբերման ԷԱ-ին մասնակցել են «Քանաքեռի կարի ֆաբրիկա», «Տեքսուորլդ» և «ԱՆԳԱ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ները:

ԷԱ ընթացակարգով մի շարք այլ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման ժամանակ ընդհանրապես չկա մրցակցություն:

[20] «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՀԱՆԴԵՐՁ/ՊԱՐԵԿ/15» ծածկագրով հանդերձանքի ձեռքբերման վերաբերյալ ԷԱ-ի տեղեկատվությունը հասանելի է https://eauction.armeps.am/hy/public/tender_details/tid/16259/ հղմամբ:
[21] «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՏԱԲԱՏ/ՊԱՐԵԿ/16» ծածկագրով տաբաջների ձեռքբերման վերաբերյալ ԷԱ-ի տեղեկատվությունը հասանելի է https://eauction.armeps.am/hy/public/tender_details/tid/16475/ հղմամբ:

2021թ. դեկտեմբերի 28-ին և 29-ին Ոստիկանությունը հրապարակել է համապատասխանաբար «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ԿՔՎ/ՄԵԴԱԼ/Ա-51» և «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ԳԱԲ/ՄԵԴԱԼ/Ա-53» ծածկագրերով մեդալների և կրծքանշանների ձեռքբերման ԷԱ հայտարարություններ: Հայտերի ընդունման վերջնաժամկետ է նշանակել համապատասխանաբար 2022թ. հունվարի 11-ը 10:00:00-ն և 2022թ. հունվարի 13-ը 10:00:00-ն: Հակադարձ աճուրդի ժամը նշանակել է համապատասխանաբար 2022թ. հունվարի 12-ը 10:00:00-ն և 2022թ. հունվարի 14-ը 10:00:00-ն: Այս երկու ԷԱ-երին մասնակցել է միայն «Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան» ԲԲԸ-ն, որն էլ երկու ԷԱ-երում էլ հաղթել է:

Նմանապես, 2021թ. դեկտեմբերի 24-ին Ոստիկանության հրապարակած «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-43-2022-ԱՎՏՈ»[22] ծածկագրով ՀՀ ոստիկանության կարիքների համար ոստիկանական մեքենաների ձեռքբերման ԷԱ-ին 2022թ. հունվարի 10-ին հայտ է ներկայացրել միայն «Տոյոտա Երևան» ՍՊԸ-ն, որն էլ այդ ԷԱ-ի հաղթող է ճանաչվել:

Էլեկտրոնային գնումների համակարգում պարբերաբար տեղի են ունենում խափանումներ, որոնց արդյունքում որոշ ընթացակարգեր հայտարարվում են չկայացած: Էլեկտրոնային գնումների համակարգի խափանման արդյունքում չկայացած հայտարարված ընթացակարգերի վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է ՀՀ ֆինանսների նախարարության գնումների ինտերնետային կայքում:[23] Էլեկտրոնային գնումների համակարգի խափանման արդյունքում չկայացած են հայտարարվել ՀՀ ոստիկանության մի քանի ընթացակարգ: 2022թ. հունվարի 10-ին ժամը 10-ից մինչև 11:00-ներառյալ խափանման ժամանակ, չկայացած են հայտարարվել «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-42-ՁՈՒՐ-2022/ԿԾԲ», «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ԱՎ/Ա-41», «ՀՀ ՈՁ ԷԱՃԱՊՁԲ-22/6/Բ/4/ԱԾ» և «ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ-ՏԵՔՍՏԻԼ-ԿԾԲ/2022/14» ծածկագրերով ընթացակարգերը: 2022թ. սեպտեմբերի 28-ին 09:31-09:39 և 10:04-10:23-ին տեղի ունեցած խափանումների ժամանակ չկայացած է հայտարարվել «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022/ՏՄ/Վ/ՀՄԿԳ» ծածկագրով ընթացակարգը: 2022թ. նոյեմբերի 8-ին 10:00-16:30 տեղի ունեցած խափանման ժամանակ չկայացած է հայտարարվել «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ԿՆԻՔ/2023-L-4» ծածկագրով ընթացակարգը: 2022թ. դեկտեմբերի 13-ին 09:00-ից մինչև դեկտեմբերի 15-ի 11:00 խափանման ժամանակ չկայացած է հայտարարվել «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՓՔ/2023-L-8» ծածկագրով գնման ընթացակարգը: 2022թ. դեկտեմբերի 27-ին 11:08-11:28 տեղի ունեցած խափանման ժամանակ

[22] «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-43-2022-ԱՎՏՈ» ծածկագրով ՀՀ ոստիկանության կարիքների համար մեքենաների ձեռքբերման ԷԱ-ի վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է https://eauction.armeps.am/hy/public/tender_details/tid/16183/ հղմամբ:
[23] Էլեկտրոնային գնումների համակարգի խափանումների արդյունքում չկայացած հայտարարված ընթացակարգերի վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է https://gnumner.minfin.am/hy/page/elektronain_gnumner/ հղմամբ:

չկայացած են հայտարարվել «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ԿԱԾՎԵՊԱՆԱԿ/2023-Լ-17», «ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ-ՃՈ 2023/ԷԼՌԵԳ2» և «ՀՀ ՈՁ ԷԱՃԱՊՁԲ-23/7/Բ/4/ԿԾԾ» ծածկագրերով ընթացակարգերը:

3.5. ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

Կնքված պայմանագրերի վերաբերյալ տեղեկատվությունը Ոստիկանությունը հրապարակում է www.gnumner.minfin.am կայքում: Հրապարակվում են գնման գործընթաց սկսելու վերաբերյալ հայտարարությունն ու հրավերը, գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, ընտրված մասնակցի վերաբերյալ հայտարարությունը, պայմանագիր կնքելու հայտարարությունը, հանձնաժողովի անդամների շահերի բախման բացակայության վերաբերյալ հայտարարությունները, ընտրված մասնակցի իրական շահառուների վերաբերյալ հայտարարությունը, պայմանագիրը լուծելու դեպքում մատակարարին հղված ծանուցումը և գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշումը:

Կայքի կառուցվածքով պայմանավորված վերը նշված տեղեկությունները դժվար է գտնել: Լուծված պայմանագրերի վերաբերյալ ՀՀ ոստիկանության գրության հիման վրա (2023թ. նոյեմբերի 17-ի 27/1304 գրություն) կարելի է ենթադրել, որ ըստ էության, ընթացակարգի վերաբերյալ տեղեկատվություն կարելի է գտնել դրա ծածկագիրն իմանալու դեպքում:

Գրանցամատյանի, հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված տարբերակը հրապարակվում է տեղեկագրում: ՀՀ ֆինանսների նախարարության գնումների համակարգում (https://gnumner.minfin.am/) առկա է հանձնաժողովի նիստերի արձանագրության էջ, որտեղ հրապարակվում են հայտերի բացման և գնահատման նիստերի արձանագրությունների արտատպված տարբերակները: Ոստիկանության գնումների հետ կապված արձանագրություններ չեն հայտնաբերվել: Առկա են եղել ՀՀ ՆԳՆ այլ ստորաբաժանումների, օրինակ՝ փրկարար ծառայության կողմից կազմակերպված գնման ընթացակարգերի արձանագրություններ:

2023թ. հոկտեմբերի 6-ին[24] վերը նշված էջում առկա են եղել «Հայաստանի Հանրապետության ոտիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի գնման ընթացակարգի հայտերի գրանցամատյանների տեսաներածված օրինակները.

[24] Ներկայացվում է էջերի համարակալումը 2023թ. հոկտեմբերի 6.-ի դրությամբ: Նոր արձանագրություններ ավելացնելուն զուգահեռ էջերի համարակալումը կփոխվի:

- 154 էջում՝ «ՀՀ ՈԿ ԳՀԱՊՁԲ-22/12» ծածկագրով ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ[25]:
- 196 էջում՝ «ՀՀ ՈԿ ԳՀԱՇՁԲ-22/2» ծածկագրով ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ[26]:
- 197 էջում՝ «ՀՀ ՈԿ ԳՀԱՊՁԲ-22/9» ծածկագրով ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ[27]:

ՀՀ ֆինանսների նախարարության գնումների համակարգի Հայտերի գնահատման նիստի արձանագրությունների էջում 2023թ. հոկտեմբերի 6-ի դրությամբ 2022-23թթ. արձանագրություններ չեն հայտնաբերվել[28]:

ՀՀ հաշվեքննիչ պալատն արձանագրել է, որ «Ոստիկանությունը «Տոյոտա Երևան» ՍՊ ընկերության հետ 13.01.2022 թվականին կնքել է «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-43-2022–ԱՎՏՈ-1» ընդամենը 140 հատ, որից 70 հատ սեդան թափքով՝ Տոյոտա Քեմրի և 70 հատ ամենագնաց թափքով՝ Տոյոտա Ռավ-4, ավտոմեքենաների մատակարարման պայմանագիր՝ ընդհանուր 2,443,380.0 հազ.դրամ (ներառյալ ԱԱՀ) գումարով: Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ «Տոյոտա Երևան» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովին ներկայացված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը լրացրել է ոչ լիարժեք» [29]:

Armeps համակարգում առկա տեղեկատվության որակի հետ կապված խնդիրները թույլ չեն տալիս վստահաբար պնդել, որ կատարված գնումների վերաբերյալ կարելի է առցանց եղանակով, ժամանակին և ամբողջական ծավալով ստանալ անհրաժեշտ տեղեկատվությունը:

3.6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄ

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը մասնակցի կողմից խախտելու դեպքում պատվիրատուն իրավասու է միակողմանի լուծել պայմանագիրը և դիմել ՀՀ ֆինանսների նախարարությանը տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու համար:

ՀՀ ֆինանսների նախարարության https://gnumner.minfin.am/ կայքի էջերում առկա են պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումները:

[25] Հրապարակված է 2022-10-17 15:45:43-ից անժամկետ: 2022թ. հոկտեմբերի 14-ով թվագրված գրանցամատյան:
[26] Հրապարակված է 2022-07-29 16:01:01-ից անժամկետ: 2022թ. հուլիսի 18-ով թվագրված գրանցամատյան:
[27] Հրապարակված է 2022-07-27 15:55:02-ից անժամկետ: 2022թ. հուլիսի 18-ով թվագրված գրանցամատյան:
[28] Ստուգվել է մինչև https://procurement.minfin.am/hy/page/petakan_karavarman_marminner_2/121, որտեղ 2023թ. հոկտեմբերի 6-ին առկա է եղել 2022թ. գնահատող նիստի առաջին արձանագրությունը: «Վարչապետի աշխատակազմի կարիքների համար ՎԱ-ՍԱՏՄ-ԷԱՃԱՇՁԲ-22/12 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող նիստի արձանագրություն 2 (Հրապարակված է 2022-01-03 16:53:44-ից անժամկետ)»:
[29] ՀՀ հաշվեքննիչ պալատի 2023թ. ապրիլի 26-ի թիվ 69-Ա որոշում:

Հիշատակված ինտերնետային կայքի 2021թ. 2022թ. և 2023թ. վերաբերող էջերում[30] հայտնաբերվել Ոստիկանության կողմից է պայմանագրի լուծման վերաբերյալ 1 ծանուցում, այն է, ՀՀ ոստիկանության զորքերի հրամանատար, ոստիկանության պետի տեղակալի գրությունը ՀՀ ոստիկանության զորքերի և «Անգա-Տրանս» ՍՊԸ-ի միջև 2021թ. օգոստոսի 17-ին կնքված «ՀՀ ՈԶ ԷԱՃԱՊՁԲ-21/10/Բ/8/ԻԾ-1» ծածկագրով հանդերձանքի գնման պայմանագիրը 2022թ. փետրվարի 14-ին մասնակի միակողմանի լուծելու և «Անգա-Տրանս» ՍՊԸ-ին գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընկերության տվյալները լիազոր պետական մարմին ներկայացնելու վերաբերյալ (պատկեր 10):

ՀՀ ֆինանսների նախարարության 2022թ. գնումների հաշվետվությունը չի անդրադառնում պայմանագրերի լուծմանը և չի ներկայացնում տվյալներ: Կարելի է ենթադրել, որ ՀՀ կառավարությունը չի կարևորում նման դեպքերը և դրանով պայմանավորված վիճակագրություն չի վարում, նման դեպքերը չի ուսումնասիրում:

Պատկեր 10. Պայմանագիրը լուծելու վերաբերյալ ՀՀ ոստիկանության պետի տեղակալի գրության պատճենը



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՐՔԵՐԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

0054 ք. Երևան, Դավթաշեն 2-րդ թաղամաս, 62/26, ընդունարան 370-298, բաղնտ-գաբրելություն 374-001, ֆաքս 370-296

№ 4/114 «15» 02 2022 թ.
Ձեր

«Անգա-Տրանս» ՍՊԸ-ի տնօրեն
Վ. Մելիք-Սարգսյանին
ՀԱՀՀ (03556198)
ՀՀ գ. Արփիջ, Պ. Սևակի 6 փ. 7/1 շին.
էլ. հասցե՝ angatrans2021@mail.ru

ԵԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին

ՀՀ ոստիկանության զորքերի և «Անգա-Տրանս» ՍՊԸ-ի միջև 17.08.2021 թվականին կնքված թիվ «ՀՀ ՈԶ ԷԱՃԱՊՁԲ-21/10/Բ/8/ԻԾ-1» ծածկագրով հանդերձանքի գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում «Անգա-Տրանս» ՍՊԸ-ի կողմից «Տեխնիկական բնութագիր»-ի 2-րդ չափաբաժնով նախատեսված՝ «Կոստյումներ, բաճկոն-տաբատ գունաքողարկող, սև՝ կիսաբամբակյա կեպիով» ապրանքատեսակը մատակարարվել է տեխնիկական բնութագրի պահանջներին անհամապատասխան:

Համաձայն Պայմանագրի 2.1.7 կետի՝ Պատվիրատուն /Գնորդը/ իրավունք ունի միակողմանի /կամ մասնակի/ լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է Պայմանագիրը, ընդ որում Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ Պայմանագիրը համարվում է էականորեն խախտված, եթե մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Պատվիրատուի /Գնորդի/ համար ընդունելի ժամկետում: Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 8.11-րդ կետը՝ ՀՀ ոստիկանության զորքերը 2022 թվականի փետրվարի 14-ին մասնակի միակողմանի լուծում է ՀՀ ոստիկանության զորքերի և «Անգա-Տրանս» ՍՊԸ-ի միջև 17.08.2021 թվականին կնքված թիվ «ՀՀ ՈԶ ԷԱՃԱՊՁԲ-21/10/Բ/8/ԻԾ-1» ծածկագրով պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կիսամրվի միակողմանի լուծված սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

ՀՀ «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ «Անգա-Տրանս» ՍՊԸ-ին գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընկերության տվյալները ներկայացվելու են լիազոր պետական մարմին:

Մատակարարի կողմից Պայմանագրի շրջանակում ներկայացված տուժանքի մասին համաձայնագրերը սահմանված կարգով կներկայացվեն «Հայֆինենբանկ-ՓԲԸ՝ չմատակարարված ապրանքի ընդհանուր գումարի մասով հաշվարկված տույժը՝ 26 250 (քսանվեց հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ, ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչության N 900005028106 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Հարգանքով՝
գնդապետ Հ. Բաբայան

Կատարող՝ Հ. Եղիկյան
Հեռ. (010) 37-40-14

Լուծարված պայմանագրերի վերաբերյալ ՀՔԱՎ գրասենյակը հարցում է ուղարկել Ոստիկանություն: Պարզվել է, որ Ոստիկանությունը լուծել է ավելի շատ

[30] ՀՀ ֆինանսների նախարարության գնումների ինտերնետային կայքի 2021-23թթ. պայմանագրերի լուծման էջերն են. https://gnumner.minfin.am/hy/page/2023_tvakan_0hy/ , https://gnumner.minfin.am/hy/page/2022_tvakan_0hy/ https://gnumner.minfin.am/hy/page/2021_tvakan_0hy/

պայմանագիր, քան հաջողվել է այս հետազոտության շրջանակներում գտնել www.gnumner.minfin.am կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» 2021-23թթ էջերում[31]:

Պատասխանից հետևում է, որ լուծված պայմանագրերը գտնելու համար անհրաժեշտ է իմանալ ծածկագրերը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ որոնման համակարգը զգայուն է ցանկացած տառի, թվի և նշանի նկատմամբ[32], տեղեկատվություն գտնելը խիստ աշխատատար գործընթաց է: Մասնավորապես, չի հաջողվել գտնել տեղեկատվություն Ոստիկանության վերը նշված գրության մեջ վերջինը նշված «ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ-ՃՈ-2023/ԷԼՌԵԳ2» ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ, չնայած ծածկագրի համարը մուտքագրվել է տարբեր եղանակներով[33]: Ամենայն հավանականությամբ Ոստիկանությունն իր գրության մեջ անդրադարձել է «ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ-ՃՈ 2023/Գ/ԷԼՌԵԳ» ծածկագրով պայմանագրին (սխալ նշելով ծածկագիրը):

Պատկեր 11. Լուծված պայմանագրերի վերաբերյալ ՀՔԱՎ գրությանը Ոստիկանության 2023թ. նոյեմբերի 17 27/1304 պատասխանը



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԳՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

0025, Երևան, Նալբանդյան 130, ընդունարան հեռ.՝ (011) 56 80 88, բարտուղարություն հեռ.՝ 59 61 88

№ 27/1304 «17» 11 2023թ.

Ձեր

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի
Վանաձորի գրասենյակի նախագահ
Արթուր Սաքունցին

Հարգելի՛ պարոն Սաքունց,

Ի պատասխան Ձեր կողմից ստացված 15.11.2023 թվականի թիվ Ե/2023-15.11/767 գրության հայտնում ենք, որ ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության կողմից՝ պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումները հրապարակված են gnumner.minfin.am կաքում: Կայքի որոնման դաշտում անհրաժեշտ է գրել համապատասխանաբար հետևյալ ծածկագրերը ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՃՈ/ԳՐԵՆԱԿԱՆ/Ա-65, ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2022-ԱՎ/ՀԱԿԱՍԱՌԻՉ/Ա-105, ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՃՈ/ՌԵՏ/Ա-110, ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՔՈԳՎ/ՀՆ/Ա-139, ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-ՇԻՆ/ՊԾ/2022/Հ-66, ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ/ՏԱՎՈՒՇ/2022/Հ-68, ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՍԱՐՔ/ԿՏՏՎ/2022/Հ-57, ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑՆԵՐ/2023/Հ-10, ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՎԿԱՅԱԿԱՆ/2023/Հ-17, ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-ՍԵՐՎԵՐ/2023/Հ-70, ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-ՆՈՐՈԳՈՒՄ/2021/Հ-37, ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՎԿԱՅԱԿԱՆ/2022/36-ՃՈ, ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՎԿԱՅԱԿԱՆ-2022, ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-60-ԷԼ-2022/ԱՎՏՈ և ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ-ՃՈ 2023/ԷԼՌԵԳ2, որից հետո անմիջապես երևում են համապատասխան ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ նշված բոլոր ծածկագրերով պայմանագրերը միակողմանի լուծվել են ՀՀ ՆԳՆ կողմից 2021-2023 թվականների ընթացքում:

Հարգանքով՝

Պետ, ոստիկանության գնդապետ *Ա.Ներսիսյան*

Գնումների հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Մարգսյան
հեռ. 51-52

---

[31] Պատվիրատուների կողմից միակողմանի լուծված պայմանագրերի վերաբերյալ 2023թ. ծանուցումները հասանելի են https://gnumner.minfin.am/hy/page/2023_tvakan_0hy/ էջում (2023թ. նոյեմբերի 23-ի դրությամբ 23 էջ տեղեկատվություն, որոնք հերթով պետք է թերթել անհրաժեշտ տեղեկատվությունը գտնելու համար), 2022թ. ծանուցումները հասանելի են https://gnumner.minfin.am/hy/page/2022_tvakan_0hy/ էջում (27 էջ տեղեկատվություն), 2021թ. ծանուցումները հասանելի են https://gnumner.minfin.am/hy/page/2021_tvakan_0hy/ էջում (21 էջ տեղեկատվություն):

[32] Որևէ տառ, թիվ կամ նշան սխալ մուտքագրելու դեպքում համակարգը հայտնում է, որ «Որոնումն արդյունք չի տվել»:

[33] Մուտքագրվել են հետևյալ տարբերակները. «ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ-ՃՈ-2023/ԷԼՌԵԳ2», «ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ-ՃՈ2023/ԷԼՌԵԳ2», «ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ-ՃՈ-2023/ԷԼ/ՌԵԳ2» , «ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ-ՃՈ-2023/ԷԼՌԵԳ», «ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ-ՃՈ2023/ԷԼՌԵԳ»:

Ոստիկանության 2023թ. նոյեմբերի 17-ի 27/1304 գրության համաձայն 2021-23թթ. ոստիկանությունը լուծել է 15 պայմանագիր (աղյուսակ 7), այդ թվում 2021թ.՝ 1, 2022թ.՝ 6 և 2023թ.՝ 7 (2023թ. նոյեմբերի 17-ի դրությամբ): Հատկանշական է, որ Ոստիկանությունը 2022թ. նոյեմբերի 22-ից 2023թ. փետրվարի 3 ընկած ժամանակահատվածում լուծել է վարորդական իրավունքի վկայականների պատրաստման համար անհրաժեշտ ապրանքների մատակարարման 4 պայմանագիր.

1. 2022թ. նոյեմբերի 22-ին լուծել է «Ինտելիջենթ Սոլուշնս» ՍՊԸ հետ կնքած «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՎԿԱՅԱԿԱՆ-2022» ծածկագրով պայմանագիրը, քանի որ ընկերության մատակարարված վարորդական վկայականի 60,000 պլաստիկ քարտերը չեն համապատասխանել տեխնիկական բնութագրի պահանջներին:
2. 2022թ. դեկտեմբերի 27-ին լուծել է «Լեմուր Թրեյդ» ՍՊԸ հետ կնքած «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՃՈ/ՌԵՏ/Ա-110» ծածկագրով պայմանագիրը, քանի որ ՍՊԸ-ն չի մատակարարել 100-ական տուփ «Zebra» ապրանքային նշանի վարորդական վկայականների և տրանսպորտային միջոցների հաշվառման վկայագրերի տպագրման համար ներկող ժապավեն և թափանցիկ պաշտպանիչ թաղանթներ:
3. 2022թ. դեկտեմբերի 27-ին լուծել է «Տեխոսմարտ» ՍՊԸ-ի հետ կնքած «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՎԿԱՅԱԿԱՆ/2022/36-ՃՈ» ծածկագրով պայմանագիրը, քանի որ մատակարարված 108 տուփ «Zebra» ապրանքային նշանի վարորդական վկայականները և տրանսպորտային միջոցների հաշվառման վկայագրերի պաշտպանիչ թաղանթները չեն համապատասխանել պահանջներին:
4. 2023թ. փետրվարի 3-ին լուծել է Shenzhen Rockaudio Technology Co Ltd հետ կնքած «ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՎԿԱՅԱԿԱՆ/2023/Հ-17» ծածկագրով պայմանագիրը, քանի որ ընկերությունը չի մատակարարել վարորդական վկայականների և տրանսպորտային միջոցների հաշվառման վկայագրերի տպագրման համար անհրաժեշտ ապրանքների և նյութեր:

Աղյուսակ 7. Լուծված պայմանագրերի վերաբերյալ ՀՀ ոստիկանության կողմից տրամադրված տեղեկություններ

Ծածկագիր	Մատակարար (ՍՊԸ կամ ԱՁ)	Ծանուցման օր	Տուժանքի ապահովում	Որակավորման ապահովում	Տուգանք	Տույժ
ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-ՆՈՐՈԳՈՒՄ/2021/Հ-37[34]	«Արմինժ գրուպ»	2021թ. հոկտեմբերի 12	346,329	3,463,295		
ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՃՈ/ԳՐԵՆԱԿԱՆ/Ա-65[35]	«Ինֆինիտ Գրուպ-1»	2022թ. նոյեմբերի 15	15,480	23,220		
ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՎԿԱՅԱԿԱՆ-2022[36]	«Ինտելիջենթ Սոլուշնս»	2022թ. նոյեմբերի 22	7,440,000	22,320,000		
ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2022-ԱՎ/ՀԱԿԱՍԱՌԻՉ/Ա-105[37]	«Մոսէսքո»	2022թ. դեկտեմբերի 19	103,600	155,400		
ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՃՈ/ՌԵՏ/Ա-110[38]	«Լեմուր Թրեյդ»	2022թ. դեկտեմբերի 27	2,140,000	3,210,000	106,910	
ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՎԿԱՅԱԿԱՆ/2022/36-ՃՈ[39]	«Տեխոսմարտ»	2022թ. դեկտեմբերի 27	3,278,880	4,918,320	163,944	465,418.8
ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՔՈԳՎ/ՀՆ/Ա-139[40]	«ՁԳՍՏ»	2022թ. դեկտեմբերի 30	935,460	1.403.190	46,773	9,354.6
ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ/ՏԱՎՈՒՇ/2022/Հ-68	*Այս ծածկագրով գնումը լուծելու վերաբերյալ www.gnumner.minfin.am -ում տեղեկություն առկա չէ*					
ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՍԱՐՔ/ԿՏՏՎ/2022/Հ-57[41]	«Գագա Էլեկտրիքս»	2023թ. հունվարի 18	1110000	1665000	55500	
ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՎԿԱՅԱԿԱՆ/2023/Հ-17[42]	Shenzhen[43]	2023թ. փետրվարի 3	2,174,150	3,261,225		
ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-60-ԷԼ-2022/ԱՎՏՈ[44]	«Մուրան»	2023թ. փետրվարի 6				
ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑՆԵՐ/2023/Հ-10[45]	«Սասունասար»	2023թ. ապրիլի 25	1,310,804	1,966,205		
ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-ԾԻՆ/ՊԾ/2022/Հ-66[46]	«Որդի Տարոն»	2023թ. մայիսի 3	183,182.90	274,774.23		
ՀՀ Ո ԷԱՃՇՁԲ-ՃՈ-2023/Գ/ԷԼՌԵԳ[47]	«Վեբէքս Թեքնոլոջիս»	2023թ. սեպտեմբերի 9	1,880,000	2,820,000	94,000	141,000
ՀՀ ՆԳՆ ԳՀՇՁԲ-ՍԵՐՎԵՐ/2023/Հ-70[48]	ԱՁ Անուշ Պետրոյան	2023թ. նոյեմբերի 3	1,288,887.2	1,933,330.8		

[34] Չի ներկայացրել աշխատանքների վերջնաժամկետը 30 աշխ. օրով երկարաձգում նախատեսող համաձայնագիր 2-ը և սահմանված ժամկետում չի կատարել 3463295 դրամի աշխատանք:
[35] Մինչև 20 թերթի համար նախատեսված 350 հատ կարիչի մատակարարման ժամկետը խախտվել է 15 օրից ավելի:
[36] Մատակարարված 60,000 «Իդեմիա» վարորդական վկայականի պլաստի քարտերը չեն համապատասխանել տեխնիկական բնութագրի պահանջներին:
[37] Մատակարարել է տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապակիների լվացման հակասառեցուցիչ հեղուկ:
[38] Չի մատակարարել վարորդական վկայականների և տրանսպորտային միջոցների հաշվառման վկայագրերի տպագրման համար ներկող ժապավեն և վարորդական վկայականների և տրանսպորտային միջոցների հաշվառման վկայագրերի տպագրության համար թափանցիկ պաշտպանիչ թաղանթներ:
[39] Վարորդական վկայականների և տրանսպորտային միջոցների հաշվառման վկայագրերի տպագրման համար պաշտպանիչ թաղանթը չի համապատասխանել տեխնիկական բնութագրին:
[40] Չի մատակարարել ՀՀ ոստիկանության ՔՈԳՎ-ի համար նախատեսված թվով 18 (տասնութ) հատ զրահաբաճկոն:
[41] Չի մատակարարել 182 հատ անխափան սնուցման սարք:
[42] Չի մատակարարել վարորդական վկայականների և տրանսպորտային միջոցների հաշվառման վկայագրերի տպագրման համար անհրաժեշտ ապրանքների և նյութեր:
[43] Shenzhen Rockaudio Technology Co Ltd
[44] 2022 թվականի գնումների պլանով չհաստատվեց ֆինանսական միջոցներ պայմանագրով նախատեսված թվով 6 հատ մարդատար մեքենաները ձեռք բերելու համար:
[45] 2023թ. ապրիլի 14-ին մատակարարը ներկայացրել է գրություն, որ փաստացի ծավալներն ու իրականացվող աշխատանքները չեն համընկնում պայմանագրային ծավալաթերթի հետ և փաստացի ծավալները պայմանագրայինից շատ մեծ են, պահանջվող աշխատանքների և սարքավորումների գները ծավալաթերթում շատ ցած են այժմ փաստացի գործող գներից:
[46] Չի կատարել պայմանագրի և պայմանագրի անբաժանելի մաս կազմող համաձայնագրերով ստանձնած պարտավորությունները:
[47] Էլեկտրոնային կառավարման համակարգերի մշակման, ներդրման և սպասարկման ծառայությունները չեն համապատասխանել տեխնիկական բնութագրի պահանջներին:
[48] Պայմանագրի ընդհանուր 15.0 մլն դրամ գումարից 2,111,127.696 դրամի ծառայությունը մատուցել է պատշաճ, մնացածը՝ ոչ պատշաճ, թերի և ուշացումներով:

3 . 7. ԳՆՈՒՄ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԾԱԽՍ

2022թ. ՆԳՆ-ն գնում չհանդիսացող ծախս «ընթացակարգով» 61.2 մլն դրամ (կատարված գնումների 0.3%) ծավալով 146 գործարք է կատարել (կատարված գործարքների 16.7 տոկոսը):

«Գնումների մասին» ՀՀ օրենքը և պետական ֆինանսական կառավարման ոլորտը կարգավորող մնացած օրենքները, ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի №526-Ն որոշումը չեն սահմանում և չեն օգտագործում «գնում չհանդիսացող ծախս» հասկացություն[49]: Իր 2018թ. հունիսի 15 «Բյուջեների կատարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» №706-Ն որոշման[50] մեջ ՀՀ կառավարությունն օգտագործել է «գնում չհանդիսացող ծախս» հասկացություն և սահմանել է, թե որ ծախսատեսակները կարող են համարվել «գնում չհանդիսացող ծախս» (այսուհետ՝ ԳՉԾ): Մասնավորապես, ԳՉԾ են համարվում (1) նախորդ տարիների բյուջեների կատարման ընթացքում ստանձնած պարտավորությունների դիմաց առաջացած պարտքերի մարմանն ուղղվող ծախսերը, (2) միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարման գծով ծախսերը, (3) հսկիչ գնումներով կատարվող ծախսերը, (4) աշխատանքային պայմանագրերը, օրենքով նախատեսված դեպքերում քրեական, վարչական կամ դատական վարույթ իրականացնող պաշտոնատար անձանց որոշումներով նախատեսված կոնկրետ անձանց կողմից մատուցվող ծառայությունների գծով ծախսերը, արժեթղթերի հավատարմագրային կառավարման հետ կապված ծախսերը, (5) կանխիկ և բանկային վճարային քարտերով շրջանառվող միջոցների գծով ծախսերը և (6) ՀՀ տարածքից դուրս կատարվող գնումների գծով կատարվող ծախսերը:

ԳՉԾ «ընթացակարգով» Ոստիկանությունը «Ջի Էմ Վի» ՍՊԸ-ից, «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ-ից, «Ագաթատ-Գոլդ» ՍՊԸ-ից, «Ալֆա պրոգրես» ՍՊԸ-ից, Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոնից, «Անիկոմ» ՍՊԸ-ից, «Արթ քոնսալթինգ» ՍՊԸ-ից, Դատաբժշկական գիտագործնական կենտրոնից, Էմմա Մխիթարի Հովհաննիսյանից, «Խաչատուրով» ՍՊԸ-ից, «Հայփոստ» ՓԲԸ-ից, ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ից, ՌԴ ՆԳՆ ԳԻԿ-ից, Սևադա Սաֆարյան Ավագի Ա/Ձ-ից, «Ֆինլոու» ՍՊԸ-ից ձեռք

[49] Գնում չհանդիսացող ծախս «ընթացակարգի» հետ կապված հարցմանը ՀՀ ՆԳՆ-ն նոյեմբերի 30-ի դրությամբ չի պատասխանել:
[50] ՀՀ կառավարության 2018. հունիսի 15 «Բյուջեների կատարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» №706-Ն որոշում: Հասանելի է https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=179519 էջում:

է բերել «թարգմանչական ծառայություններ», «փորձաքննություն», «սնունդ», «սննդի մատակարարման ծառայություններ», «ընթացիկ նորոգման աշխատանքներ», «դատանյութագիտական փորձաքննություն», «ալկոհոլի որոշում արյան մեջ», «Կիրառման ոլորտ,հսկվող չհսկվող» և «գնում չհանդիսացող ծախս» :

2022թ. ԳՀԾ ընթացակարգով կնքված 146 պայմանագրերի միջին մեծությունը 419,199.64 դրամ է: Ամենափոքր պայմանագրի մեծությունը 2.4 հազար դրամ է («Արթ քոնսալթինգ» ՍՊԸ-ի[51] հետ 2022թ. ապրիլի 15-ին կնքված պայմանագիր), ամենամեծ պայմանագրի մեծությունը՝ 6.4 մլն դրամ («Ագաթատ-Գոլդ» ՍՊԸ-ի[52] հետ 2022թ. ապրիլի 13-ին կնքված պայմանագիր): ԳՀԾ ընթացակարգով ձեռք բերված պայմանագրերից 8-ի մեծությունը չի գերազանցել 10 հազար դրամը, 25-ի մեծությունը եղել է 100,001-200,000 դրամ, մեկ ուրիշ 25-ինը՝ 200,001-300,000 դրամ միջակայքում (պատկեր 12):

Պատկեր 12. ԳՀԾ ընթացակարգով գնումների թիվն ըստ մեծությունների



ԳՀԾ «ընթացակարգով» կատարված գնումներից մի քանիսի գնման առարկայի անունը ևս «գնում չհանդիսացող ծախս» է: ԳՀԾ «ընթացակարգով» Ոստիկանությունը մեծ թվով թարգմանչական ծառայություններ է ձեռք բերել (աղյուսակ 8):

[51] Գրանցվել է 2006թ. սեպտեմբերի 22-ին Երևանի Քանաքեռ-Զեյթուն, Դ. Անհաղթի փ., 19/1, բն 70, 0069 հասցեում, Գրանցման համար 282.110.05600, ՀՎՀՀ 01006813 (https://www.e-register.am/am/companies/1435259), իրական շահառուն ՀՀ քաղաքացի Արթուր Խաչատրյանն է (https://www.e-register.am/am/companies/1435259/declaration/93898917-f9bb-4bc7-ad10-f0b3bc483e07): Ընդհանուր գործունեությունը՝ իրավաբանական և փաստաբանական ծառայություններ: Թարգմանչական ծառայություններ (https://www.spyur.am/am/companies/art-consulting/5858):

[52] Գրանցվել է 2008թ. մայիսի 12-ին Արարատի Նոր Կյուրին 7փ, տ2-ում, գրանցման համար՝ 77.110.010.21, ՀՎՀՀ՝ 03810263 (https://www.e-register.am/am/companies/1407901): 2018թ. հունվարի 2-ից իրական շահառուները ՀՀ քաղաքացիներ Արսեն Ներսիսյանը Արմեն Ներսիսյանը և Աննա Ներսիսյանն (2022թ. հունիսի 27-ից) են, յուրաքանչյուրը 33.3333% մասնակցությամբ (https://www.e-register.am/am/companies/1407901/declaration/0a799d2a-dd78-4a0d-93c4-24d1cfbab3d8): Ընդհանուր գործունեություն՝ ոգելից ըմպելիքների արտադրություն (https://www.spyur.am/am/companies/agatat-armenia/33292):

Աղյուսակ 8. Գնում չհանդիսացող ծախս ընթացակարգով 2022թ. կատարված գնումներն ըստ գնման առարկայի անվանման (դրամ)

	Գնման առարկայի անվանումը	Քանակ	Ընդամենը գումար
1	գնում չհանդիսացող ծախս	41	28,553,796.1
2	Թարգմանչական ծառայություններ	94	27,821,501.2
3	Փորձաքննություն	5	531,000.0
4	ալկոհոլի որոշում արյան մեջ	1	8,000.0
5	դատանյութագիտական փորձաքննություն	1	150,000.0
6	Ընթացիկ նորոգման աշխատանքներ	1	2,567,450.0
7	Կիրառման ոլորտ, հսկվող չհսկվող	1	12,000.0
8	Սննդի մատարակարարման ծառայություններ	1	346,200.0
9	Սնունդ	1	1,213,200.0
	ԸՆԴԱՄԵՆԸ	**146**	**61,203,147.3**

Աղբյուր. Armeps

Armeps համակարգի համաձայն 2022թ. Ոստիկանությունը «հանրային սննդի կազմակերպում», «հյուրանոց և նախաճաշ», «ճաշ տարածք», «սնունդ», «պաշտոնական ճաշի կազմակերպում», «ֆուրշետի տրամադրում», «հանրային սննդի սպասարկման ծառայություն», «ճաշկերույթ», «սննդի մատակարարման ծառայություն», «սննդի կազմակերպում» գնման առարակայի անվամբ 5,310,500 դրամ մեծությամբ 17 պայմանագիր է կնքել: Այդ պայմանագրերից 15-ը Ոստիկանությունը կնքել է ՄԱ ընթացակարգի կիրառման արդյունքում: Էմմա Հովհաննիսյան Մխիթարի (ՀՎՎ՝ 28076277) հետ կնքված հունվարի 18-ին 346,200.0 դրամ գումարով «սննդի մատակարարման ծառայություններ» և դեկտեմբերի 13-ին 1,213,200.0 դրամ գումարով «սնունդ» գնման առարկայի անուններով երկու գնումները դասակարգել են որպես ԳՉԾ:

Armeps համակարգի և Ոստիկանության ինտերնետային կայքում առկա տեղեկատվության հետազոտությունից պարզ չէ, թե ինչ տրամաբանությամբ է «Երևան հյուրանոց» ԲԲԸ-ից նոյեմբերի 8-ին 116,380.0 դրամ գումարով, «Աստորիա ինվեստ» ՓԲԸ-ից դեկտեմբերի 5-ին 343,000.0 դրամ գումարով «սնունդ» գնման առարկայի անվանումով ապրանքի ձեռք բերումը կատարվել ՄԱ, իսկ «Էմմա

Հովհաննիսյան Մխիթարի»-ից 1,213,200.0 դրամ գումարով ձեռք բերված «սնունդը»՝ ԳՀԾ «ընթացակարգով»:

Ոստիկանությունը ԳՀԾ «ընթացակարգով» «Արթ քոնսալթինգ» ՍՊԸ-ի հետ կնքել է 91, «Ջի Էմ Վի» ՍՊԸ-ի հետ 25 պայմանագիր (աղյուսակ 9):

Աղյուսակ 9. «Գնում չհանդիսացող ծախս» ընթացակարգով 2022թ. կատարված գնումներն ըստ մատակարարների

	Ընտրված մասնակից	Քա-նակ	Ընդամենը գումար (դրամ)
	«Արթ քոնսալթինգ» ՍՊԸ	91	27,769,518.0
	«Հայփոստ» ՓԲԸ	4	8,569,820.0
	«Ջի Էմ Վի» ՍՊԸ	25	8,182,284.2
	«Ֆինլոու» ՍՊԸ	5	1,393,916.5
	Էմմա Հովհաննիսյան Մխիթարի	2	1,559,400.0
	Փորձաքննությունների բյուրո[53]	8	849,360.0,
	Փորձագիտական կենտրոն[54]	2	162,000.0
	Դատաբժշկական կենտրոն	2	16,000.0
	«Ագաթա-գոլդ» ՍՊԸ	1	6,400,000.0
	Սևադա Սաֆարյան Ավագի Ա/Ձ	1	2,567,450.0
	ՌԴ ՆԳՆ ԳԻԿ	1	1,800,000.0
	«Ալֆա պրոգրես» ՍՊԸ	1	1,599,000.0
	«Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ	1	154,398.6
	«Անիկոմ» ՍՊԸ	1	100,000.0
	«Խաչատուրով» ՍՊԸ	1	80,000.0
	ԸՆԴԱՄԵՆԸ	**146**	**61,203,147.3**

Աղբյուր. Armeps

[53] ՀՀ ԳԱԱ «Փորձաքննություն-ների ազգային բյուրո» ՊՈԱԿ
[54] Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիա-ների փորձագիտական կենտրոն

3.8. ՉԿԱՅԱՑԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ

Գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե՝

1) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.
2) դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը.
3) ոչ մի հայտ չի ներկայացվել.
4) պայմանագիր չի կնքվում:

Գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո արգելվում է բացել չբացված հայտերը, որոնք վերադարձվում են մասնակիցներին: Գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն, որում նշվում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու հիմնավորումը:

Armeps համակարգի համաձայն ավելանում են չկայացած ընթացակարգերը (աղյուսակ 10): 2020թ. չկայացած է ճանաչվել 199 ընթացակարգ, 2021թ.՝ 443, 2022թ.՝ 734:

Աղյուսակ 10. ՆԳՆ կողմից կազմակերպված չկայացած ընթացակարգեր

	2020թ.	**2021թ.**	**2022թ.**
Ընդամենը	**199**	**443**	**734**
Էլեկտրոնային աճուրդ	196	153	728
Գնանշման հարցում	-	285	6
Բաց մրցույթ	-	4	-
Հրատապ բաց մրցույթ	2	-	-
Հրատապ մեկ անձ	1	1	-

Չկայացած 734 ընթացակարգերի ժամանակ ներկայացվել է 1238 հայտ: Armeps համակարգի հետ կապված խնդիրների պատճառով չի կարելի համոզված լինել, որ չկայացած ընթացակարգերի վերաբերյալ տվյալները ճիշտ են[55]:

Չկայացած ընթացակարգերի քանակի նման շեշտակի ավելացումը հատուկ հետազոտության կարիք ունի:

[55] Չնայած Armeps համակարգին առաջադրանք է տրվել ներբեռնել 2022թ. տվյալները, սակայն առկա է տվյալ, որոնք նշված են որպես 2021թ. դեկտեմբերի գործարքներ: Միևնույն ժամանակ, համակարգից ներբեռնված 2021թ. տվյալներում առկա է 131 տվյալ որոնք վերաբերում են 2020թ. սեպտեմբերից-դեկտեմբեր ժամանակահատվածին, իսկ 2021թ. դեկտեմբերի տվյալներ առկա չեն: Նշված ցուցանիշների օգնությամբ Armeps-ի տվյալները ճշգրտելու արդյունքում ստացվում է, որ 2021-22թթ. ՀՀ ՆԳՆ յուրաքանչյուր տարի 600-ից ավելի ընթացակարգ չկայացած է հայտարարել:

Աղյուսակ Չկայացած ընթացակարգերի ցուցանիշների ճշգրտում

	2020թ.	**2021թ.**	**2022թ.**
Ընդամենը	**199**	**443**	**734**
Հանած նախորդ տարվա տվյալներ	128	47	299
Գումարած հաջորդ տարվա տվյալներ	47	299	186
Ընդամենը վերանայված	**118**	**695**	**621**

3.9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի №526-Ն որոշման համաձայն պայմանագրի կատարման նկատմամբ նախնական հսկողությունն իրականացնում է պատասխանատու ստորաբաժանումը: Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի և գնման պայմանագիր կնքած անձի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ: Հանձնման-ընդունման արձանագրության ձևը սահմանում է ՀՀ ֆինանսների նախարարը:

Արձանագրությունն ստորագրվում է, եթե առկա է պատասխանատու ստորաբաժանման գնման հայտը նախագծած ներկայացուցչի գրավոր դրական եզրակացությունը: Պատասխանատու ստորաբաժանման ներկայացուցիչը պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ տալիս է դրական եզրակացություն, եթե մատակարարված ապրանքը, կատարված աշխատանքը կամ մատուցված ծառայությունը համապատասխանում են պայմանագրի պայմաններին կամ մատակարարված ապրանքի որակական հատկանիշները գերազանցում են պայմանագրով սահմանված պահանջները՝ ապահովելով կարիքի բավարարումը: Պայմանագրով սահմանված ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետների խախտման դեպքերում տրվում է դրական եզրակացություն, եթե պատվիրատուի կողմից չի ընդունվում պայմանագիրը լուծելու մասին որոշում: Եթե կնքված պայմանագրի գինը գերազանցում է մեկ միլիոն դրամը, ապա կնքված պայմանագրի մասին հայտարարությունում նշվում է, որ դրանով սահմանված ժամկետում գնման տվյալ գործընթացին կարող են մասնակցել ՀՀ պետական գրանցում ստացած ՀԿ-ները և լրատվական գործունեություն իրականացնող անձինք:

ՀՀ պետական գրանցում ստացած ՀԿ-ները և լրատվական գործունեություն իրականացնող անձինք եզրակացությունը հաստատվելու օրը պատասխանատու ստորաբաժանմանը գրավոր ներկայացնում է դիրքորոշում՝ մատակարարված ապրանքի, կատարված աշխատանքի կամ մատուցված ծառայության՝ պայմանագրի պահանջներին համապատասխանության մասին: Եզրակացության տրամադրման համար սահմանված վերջնաժամկետից հետո ներկայացված դիրքորոշումը չի քննարկվում պատասխանատու ստորաբաժանման կողմից: Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը գործընթացին մասնակցելու մասին ֆիզիկական անձին տեղեկացնում է հանձնման-ընդունման նպատակով պայմանագրի արդյունքը պատվիրատուին հանձնվելուն հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

ՀՀ հաշվեքննիչ պալատն արձանագրել է, որ 2022թ. հունվարին Ուստիկանությունը ձեռք է բերել տեխնիկական բնութագրին չհամապատասխանող մեքենաներ. «Գնման վերաբերյալ հրապարակված հրավերում թե՛ Քեմրի և թե՛ Ռավ-4 ավտոմեքենաների համար զետեղված տեխնիկական բնութագրերում սահմանվել է պահանջ, որ մեքենաների շարժիչները չպետք է ունենան հավելումներ /TURBO, KOMPRESOR, GDI/, սակայն հաշվեքննությամբ ուսումնասիրված արտադրող գործարանի https://global.toyota/ պաշտոնական կայքում զետեղված տեղեկատվության համաձայն տվյալ մեքենաների վրա տեղադրված A25A-FKS տեսակի շարժիչները սնուցվում են Toyota D-4S համակարգի միջոցով, որը իր հերթին միաժամանակ ներառում է բենզինի ուղղակի ներարկում (Direct Injection), այսինքն մատակարարված թվով 140 մեքենաների շարժիչներն ըստ էության չեն համապատասխանում գնման հրավերի պահանջին: Պայմանագրի կատարման արդյունքում մատակարարված թվով 70 Տոյոտա Ռավ-4 մեքենաների CMR փաստաթղթերում նշված յուրաքանչյուրի քաշը պակաս է գնման պայմանագրով սահմանված քաշից 146.25 կգ-ով, որի պատճառով թվով 70 Ռավ-4 մեքենաները չեն համապատասխանում գնման պայմանագրի տեխնիկական բնութագրի պահանջին:»[56]

ՀՀ հաշվեքննիչ պալատն արձանագրել է, որ Ոստիկանությունն ընդունել է տեխնիկական պահանջներին չհամապատասխանող մեքենաներ. «Սակայն վերոնշված անհամապատասխանությունները չեն արձանագրվել Ոստիկանության համապատաս-խան պաշտոնատար անձանց կողմից, որի արդյունքում ընդունվել է պայմանագրի տեխնիկական բնութագրի որոշակի պահանջին չհամապատասխանող ապրանքներ, ինչի արդյունքում խախտվել են «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-43-2022–ԱՎՏՈ-1» պայմանագրի 1.1 կետի, 2.4.4 կետի, 5.3 կետի պահանջները, որոնց վրա հասնելու հետևանքով պետք է պատասխանատվության միջոց կիրառվեր մատակարարի նկատմամբ պայմանագրի 6.3 կետով սահմանվածի համապատասխան, որը չի կատարվել: Տվյալ անհամապատաս-խանությունների արձանագրումից հետո Ոստիկանությունը հայտնել է Հաշվեքննիչ պալատին, որ ծառայողական քննությամբ ձեռք են բերվել առերևույթ հանցագործության վերաբերալ փաստական տվյալներ և փաստաթղթերը 16.02.2023թ.-ին ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազություն (տես՝ ՄԱՍ 6):»[57]

[56] ՀՀ հաշվեքննիչ պալատի 2023թ. ապրիլի 26-ի թիվ 69-Ա որոշման հավելված. «Ընթացիկ եզրակացություն Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանությունում 2022 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ»: Հասանելի է https://armsai.am/hy/current-conclusions էջում:

[57] ՀՀ հաշվեքննիչ պալատի 2023թ. ապրիլի 26-ի թիվ 69-Ա որոշման հավելված. «Ընթացիկ եզրակացություն Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանությունում 2022 թվականի պետական

2022թ. հունվարի 26-ին Ոստիկանության և ՝ ՍՕՍ Սիսթեմս՝ ՍՊԸ միջև կնքվել է 145,320.0 հազ.դրամ ընդհանուր արժեքով ոստիկանական մեքենաներում 150 հատ «Grundig-Security» արտադրողի GD-CI-AT2505B մոդելի համացանցային տեսահսկող տեսախցիկներ տեղադրելու վերաբերյալ «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-22-ՏԵՍԱԽՑԻԿ-2022/ԿԿՏՎ» պայմանագիրը: Պայմանագրի տեխնիկական բնութագրի համաձայն տեսախցիկները պետք է ունենան մեքենաների պետհամարանիշները 300կմ/ժ արագությամբ շարժվելու դեպքում ճանաչելու կարողություն: Մատակարարը Ոստիկանություն է ներկայացրել է գրություն, որ տվյալ տեսակի տեսախցիկները կարող են տարբերակել և ճանաչել պետհամարանիշները մինչև 400կմ/ժ արագության դեպքում: Սակայն, հաշվեքննության շրջանակներում իրականացված զննում և վերահաշվարկ ընթացակարգերի կատարման արդյունքում ՀՀ հաշվեքննիչ պալատն արձանագրել է, որ «մատակարարված ու տեղադրված GD-GI-AT2505B մոդելի տեսախցիկների և դրանց ծրագրային ապահովման տվյալները, ըստ դրանք արտադրող «Abetechs GmbH» (Գերմանիայի դաշնություն) ընկերության պաշտոնական կայքի (https://grundig-security.com/), հնարավորություն չեն ընձեռում պետհամարանիշների ճանաչումն իրականացնել պայմանագրով պահանջված՝ 300կմ/ժ արագությամբ շարժվելիս, քանի որ ըստ «Abetechs GmbH» ընկերության կայքում առակա տվյալների «Grundig Security» ապրանքանիշի ներքո ներկայացված մի շարք LPR (License Plate Recognition) համակարգի ծրագրերը թույլ են տալիս ճանաչել պետհամարանիշները մինչև 150կմ/ժ արագությամբ շարժվելու դեպքում (License plate recognition in real time up to 150 kmh/90 mph @25 fps)»:

ՀՀ հաշվեքննիչ պալատի աշխատակիցները Ոստիկանության աշխատակիցների հետ միասին վերարտադրել են հաշվեքննության օբյեկտի հսկողության գործընթացները: Արդյունքում արձանագրվել է, որ ՀՀ Լոռու և Շիրակի մարզերի պարեկային ծառայության մեքենաների մեջ տեղադրված GD-CI-AT2505B մոդելի տեսախցիկները դիմացի մեքենայի պետհամարանիշը կարող են ճանաչել առավելագույը 220-230կմ/ժ (110-115կմ/ժ հանդիպակաց շարժվելիս) արագության դեպքում, ինչը պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանվածից պակաս է շուրջ 70կմ/ժ: Ոստիկանությունից Հաշվեքննիչ պալատին հայտնել են, որ արձանագրված թերությունների մասով կատարված ծառայողական քննության արդյունքում կազմված փաստաթղթերը 2022թ. օգոստոսի 22-ին ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազություն, որի հիմքով ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում 2022թ. օգոստոսի 27-ին նախաձեռնվել է քրեական վարույթ:

բյուջեի տարեկան կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ»: Հասանելի է https://armsai.am/hy/current-conclusions էջում:

2022թ. փետրվարի 8-ին 450 ավտոմեքենաների mobile համակարգ (տեղադրումով) ձեռք բերելու նպատակով Ոստիկանությունը հայտարարել է «ՀՀ Ո ՀՄԱԱՊՁԲ-47-ՄՈԲԱՅԼ/2021/ՊԾ» ծածկագրով «Հրատապ մեկ անձ մրցույթ», որն իրականացվել է մեկ փուլով՝ Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով: «Ալիկանտե» ՍՊԸ-ին 2022թ. մարտի 15-ին առաջարկվել է կնքել 755,940.0 հազ. դրամ արժեքով, համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց 20 օր հետո պարեկային ավտոմոբիլներում 450 հատ համակարգի տեղադրման N ՀՀ Ո ՀՄԱԱՊՁԲ-47-ՄՈԲԱՅԼ/2021/ՊԾ պայմանագիր:

2022թ. մարտի 24-ին կնքվել է հատը 1,679.9 հազ. դրամով, 251,980.0 հազ. դրամ ընդհանուր արժեքով 150 հատ mobile համակարգ մինչև 2022թ. մարտի 31-ը տեղադրելու N1 համաձայնագիրը: Այնուհետև, կազմվել են ապրանքների մատակարարման-տեղադրման հանձնման-ընդունման 3 արձանագրություն (աղյուսակ 11):

Աղյուսակ 11. Ոստիկանության և «Ալիկանտե» ՍՊԸ-ի միջև կնքված հանձնման ընդունման N1- N3 արձանագրությունների հիմնական տվյալները

Արձանագրություն	**Օրը**	**mobile համակարգի քանակը**	**Տեղադրված mobile համակարգի արժեքը (հազ. դրամ)**
N1	մարտի 28	85	142,788.7
N2	մարտի 30	15	25,198.0
N3	մարտի 31	50	83,993.3
ԸՆԴԱՄԵՆԸ		**150**	**251,970.0**[58]

2022թ. նոյեմբերի 14-ին կնքվել է հատը 1,679.9 հազ. դրամով, 503,960.0 հազ. դրամ արժեքով 300 հատ mobile համակարգ մինչև 2022թ. դեկտեմբերի 20 տեղադրելու N2 համաձայնագիրը: Այնուհետև, կազմվել են ապրանքների մատակարարման-տեղադրման հանձնման-ընդունման 3 արձանագրություն (աղյուսակ 12):

[58] ՀՀ հաշվեքննիչ պալատի եզրակացության մեջ թվերի գումարը չի համընկնում ընդամենը տողի հետ

Աղյուսակ 12. Ոստիկանության և «Ալիկանտե» ՍՊԸ-ի միջև կնքված հանձնման ընդունման N3- N5 արձանագրությունների հիմնական տվյալները

Արձանագրություն	Օրը	mobile համակարգի քանակը	Տեղադրված mobile համակարգի արժեքը (հազ. դրամ)
N3[59]	14 դեկտեմբերի	110	184,785.3
N4	16 դեկտեմբերի	65	109,191.3
N5	20 դեկտեմբերի	125	209,983.3
ԸՆԴԱՄԵՆԸ		**300**	**503,959.9**

2022թ. հուլիսի 25-ին «Տոյոտա Երևան» ՍՊԸ հետ կնքած պայմանագրով Ոստիկանությունը ձեռք էր բերել 175 հատ ոստիկանական «Տոյոտա Ֆորտուներ» մեքենա, սակայն «Ալիկանտե» ՍՊԸ-ին N2 համաձայնագրով պատվիրվել է 300 հատ համակարգի մատակարարման և տեղադրման ծառայություն: 2022թ. դեկտեմբերի 14-20 ընթացքում 3 հանձնման-ընդունման արձանագրություններով, պատասխանատու ստորաբաժանումն ընդունել է 300 լրակազմ «Mobile» համակարգ և դրանց տեղադրման ծառայություն:

ՀՀ հաշվեքննիչ պալատն արձանագրել է, որ փաստացի ոստիկանական մեքենաների վրա տեղադրվել է 175 լրակազմ համակարգ: Այսինքն, 125-ը հատ համակարգ չի տեղադրվել, սակայն ներկայացվել է որպես մատակարարված և տեղադրված ապրանք, կազմվել է հանձնման-ընդունման արձանագրություն ու վճարվել է ընդհանուր 209,983.4 հազ.դրամ գումար:

Ոստիկանությունը ՀՀ հաշվեքննիչ պալատին հայտնել է, որ 300 հատ «Mobile» համակարգից 175 հատը մատակարարի կողմից ժամանակին և պատշաճ կերպով մատակարվել և տեղադրվել է «Տոյոտա Ֆորտուներ» մակնիշի մեքենաների վրա, իսկ 125 հատը ժամանակին մատակարարվել և հանձնվել է ոստիկանության պահեստ, մինչև համապատասխան մեքենաների տրամադրումը: Մատակարարը տրամադրել է պարտավորագիր (ոստիկանությունը ՀՀ հաշվեքննիչ պալատին է տրամադրել պարտավորագրի պատճենը), որ մեքենաների տրամադրման դեպքում առանց որևէ հավելյալ վճարի կտեղադրի 125 համակարգերը: Հաշվեքննիչ պալատը մասամբ ընդունել է Ոստիկանության բացատրությունը/պարզաբնումը, ընդգծելով, որ խնդիրն

[59] ՀՀ հաշվեքննիչ պալատի եզրակացության մեջ առկա է 2 հատ №3 արձանագրություն, մեկն առաջին, մյուսը երկրորդ խմբաքանակում:

առաջացել է Ոստիկանության կողմից ***պլանավորման թերությունների հետևանքով***:

2022թ. մարտի 25-ին Ոստիկանության և «Տոյոտա Երևան» ՍՊԸ միջև կնքվել է 21,700.0 հազ. դրամ արժեքով «ՀՀ Ո ՄԱԱՊՁԲ-ՎԱՆԴԱԿ/2022» պայմանագիր, որի տեխնիկական բնութագրի համաձայն «Տոյոտա Երևան» ՍՊԸ-ն 140 Տոյոտա (Քեմրի և Ռավ-4) ավտոմեքենաների սրահների հետնամասը պետք է կահավորեր ընդհանուր 700մ² ճաղավանդակներով, 1մ² արժեքը 31.0 հազ. դրամ: ՀՀ հաշվեքննիչ պալատը պարզել է, որ ավտոմեքենաների տվյալ խմբի սրահներում տեղադրված ճաղավանդակների փաստացի չափսերը (մակերեսը) չեն գերազանցում 399մ², սակայն «Տոյոտա Երևան» ՍՊԸ-ն տեղադրված ճաղավանդակների համար Ոստիկանությանը վճարման է ներկայացրել 700մ² արժեք ներառող հաշիվ, որը վերջինիս կողմից ամբողջությամբ վճարվել է: Փաստացի կատարված աշխատանքի և փաստաթղթերով ներկայացված աշխատանքների ծավալների միջև շեղումը կազմել է շուրջ 301մ² (յուրաքանչյուր 1մ² 31.0 հազ. դրամ) անապրանք գործարք:

ՀՀ հաշվեքննիչ պալատն արձանագրել է, որ ՀՀ կառավարությունը 2022թ. հուլիսի 21-ի №1129-Ն որոշմամբ 3,107,500.0 հազ. դրամի դիմաց մատակարարված 175 Տոյոտա Ֆորտուներ մոդելի մեքենաների ճանապարհային լուսածերպը (կլիռենս) պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանված 255մմ-ի փոխարեն 225մմ (պակաս է շուրջ 30մմ) լինելու փաստն անտեսվել է և Ոստիկանության կողմից ընդունվել է տեխնիկական բնութագրի պահանջներին չհամապատասխանող ապրանք: Չի կիրառվել գնման պայմանագրի 6.3 կետով նախատեսված պատասխանատվության միջոցը՝ պայմանագրի 3,107,500.0 հազ. դրամ գնի 0,5%-ի չափով՝ 15,537.5 հազար դրամ: Ոստիկանությունը Հաշվեքննիչ պալատի դիտարկումն ընդունել է իր գիտություն և հայտնել, որ հաջորդիվ գնման գործընթացներում հաշվի կառնվի տեխնիկակական բնութագրերի հստակ նկարագրությունը: Հաշվեքննիչ պալատը չի ընդունել Ոստիկանության արձագանքը, քանի որ արձանագրված անհամապատասխանությունն առկա է արդեն իսկ կնքված պայմանագրի տեխնիկական բնութագրի ու մատակարարված ապրանքի տվյալների միջև և հայտնել է, որ անհրաժեշտ է կիրառել պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

ՄԱ ընթացակարգով Տոյոտա Ֆորտուներ մոդելի 175 մեքենա ձեռք բերելու համար ՀՀ ոստիկանությունը ՝Տոյոտա Երևան՝ ՍՊԸ-ին տրամադրել է 100% կանխավճար[60]: Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ ՝Տոյոտա Երևան՝ ՍՊԸ-ն

[60] ՀՀ կառավարությունը 2022թ. հուլիսի 21-ի №1129-Ն որոշում:

պայմանագրի գործողության ողջ ընթացքում չի ներկայացրել պահանջվող բանկային երաշխիքը:

2022թ. հոկտեմբերի 24-ին Ոստիկանության և «Տոյոտա Երևան» ՍՊԸ միջև կնքվել է 59,535.0 հազ. դրամով 175 Տոյոտա Ֆորտուներ ավտոմեքենաների սրահների հետնամասը 1մ² 54.0 հազ. դրամ արժեքով 1102.5 մ² ճաղավանդակներով կահավորելու վերաբերյալ «ՀՀ Ո ՄԱԱՊՁԲ-2022-ՃԱՂԱՎԱՆԴԱԿ-Ա-7» պայմանագիր: ՀՀ հաշվեքննիչ պալատի համաձայն, ոստիկանությունը, որպես գնման ընթացակարգի հիմնավորում ընտրելով ՝ Գնումների մասին՝ ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը՝ այն է, գնումը կարող է կատարվել մեկ անձից, եթե գնման ենթակա ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, որը պայմանավորված է նրա հեղինակային և հարակից իրավունքներով, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությամբ և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի №526-Ն որոշման 23-րդ կետի, 4-րդ ենթակետի 15-րդ տողը, այն է՝ գնման ընթացակարգը կազմակերպելիս ... պետք է հաշվի առնել, որ հետևյալ գնումները կարող են կատարվել օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա՝ գնման առարկան արտադրած կամ վերջինիս միակ ներկայացուցիչը հանդիսացող անձից գնման առարկայի տեխնիկական սպասարկման ծառայությունների, այդ թվում՝ սպասարկման համար անհրաժեշտ պարագաների ձեռքբերում, արդեն 2022թ. հոկտեմբերի 19-ին «Տոյոտա Երևան» ՍՊԸ է ուղարկել ՀՀ Ո ՄԱԱՊՁԲ-2022-ՃԱՂԱՎԱՆԴԱԿ-Ա-7 ծածկագրով ընթացակարգի պայմանագրի նախագիծը և առաջարկել հինգ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել ստորագրված և կնքված պայմանագիրը:

ՀՀ հաշվեքննիչ պալատն արձանագրել է, որ «Չի պահպանվել «Գնումների մասին» օրենքի հոդված 23-ի 1-ին կետի 1-ին ենթակետի պահանջները, այն է՝ գնումը կարող է կատարվել մեկ անձից, եթե գնման ենթակա ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, որը պայմանավորված է նրա հեղինակային և հարակից իրավունքներով, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությամբ: Այս իրավունքները որոշակիացված են օրենքներով («Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետ՝ հատուկ կամ բացառիկ իրավունք՝ իրավունք, որը բխում է իրավական կամ վարչական ակտով իրավասու մարմնի տրամադրած իրավասություններից, որի նպատակն է որոշակի գործունեության իրականացման իրավունքը (ներառյալ՝ հանրային ծառայությունների ոլորտում) վերապահել մեկ կամ սահմանափակ թվով կազմակերպությունների, և որով էապես սահմանափակվում է նման գործունեություն իրականացնելու այլ կազմակերպությունների հնարավորությունը: «Տոյոտա Երևան» ՍՊ ընկերությանը

նշված բացառիկ իրավունքներ՝ մասնավորապես ճաղավանդակի արտադրություն, ճաղավանդակի վաճառք կամ ճաղավանդակի տեղադրում, վերապահված լինելու փաստը հավաստող փաստաթղթեր առկա չեն գնման փաստաթղթերի փաթեթում, ինչպես նաև դրանց մասին չկա որևէ նշում նաև ընթացակարգի արձանագրություններում»:

ՀՀ հաշվեքննիչ պալատն արձանագրել է, որ ավտոմեքենաների այդ խմբաքանակի սրահներում փաստացի տեղադրվել է 577.5 մ² չգերազանցող մակերեսով ճաղավանդակներ, սակայն «Տոյոտա Երևան» ՍՊԸ-ն Ոստիկանությանը վճարման է ներկայացրել 1102.5 մ² տեղադրված ճաղավանդակների արժեքը, որը վերջինիս կողմից ամբողջությամբ վճարվել է: Արձանագրվել է պայմանագրով նախատեսված, փաստացի կատարված և փաստաթղթերով ներկայացված աշխատանքների ծավալների միջև շուրջ 525 մ² (1մ² 54.0 հազ. դրամ արժեքով) շեղում, կամ անապրանք գործարք:

Անհամապատասխանությունների արձանագրումից հետո Ոստիկանությունը Հաշվեքննիչ պալատին հայտնել է, որ փաստաթղթերը նախաքննական մարմին ուղարկելու պատճառաբանությամբ ՀՀ ՆԳՆ նախարարը ներքին անվտանգության վարչությանը հանձնարարել է կասեցնել իրականացվող ծառայողական քննությունը:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ 2022թ. մարտի 25-ից հոկտեմբերի 24-ն ընկած ժամանակահատվածում ճաղավանդակի 1մ² գինն աճել է 74%: Եթե 2022թ. մարտի 25-ին «Տոյոտա Երևան» ՍՊԸ հետ կնքած «ՀՀ Ո ՄԱՊՁԲ-ՎԱՆԴԱԿ/2022» պայմանագրով նախատեսվում էր, որ 140 Տոյոտա (Քեմրի և Ռավ-4) ավտոմեքենաների սրահների հետնամասում տեղադրվող ճաղավանդակի 1մ² կարժենա 31.0 հազար դրամ, ապա 2022թ. հոկտեմբերի 24-ին կնքված «ՀՀ Ո ՄԱՊՁԲ-2022-ՃԱՂԱՎԱՆԴԱԿ-Ա-7» պայմանագրով նախատեսվում էր 1մ² դիմաց վճարել 54.0 հազ. դրամ:

2022թ. նոյեմբերին Ոստիկանություն պատասխանատու ստորաբաժանումը որոշել է, որ անհրաժեշտ է Արագածոտնի, Կոտայքի, Տավուշի և Գեղարքունիքի մարզերում ձևավորվող նոր պարեկային ծառայության համար ձեռք բերված 175 միավոր Toyota Fortuner մակնիշի ավտոմեքենաների համար, ձեռք բերել «Ապակիների թաղանթապատման ծառայություններ» և ներկայացրել է Տեղեկանք-Հիմնավորում, որ «…ապակիների թաղանթապատման համար անհրաժեշտ է սահմանել «ՄԱ» գնման ձևը, հիմք ընդունելով 2022 թվականի հուլիսի 11-ին կայացած՝ ոստիկանության բարեփոխումները համակարգող խորհրդի նիստի Արձանագրությունը Վ/72-2022»: Կարիքի բավարարման համար Ոստիկանությունը կազմակերպել է «ՄԱ» գնման ընթացակարգ՝ կիրառելով մեկ անձ գնման ձևը, որի ընտրությունը հիմնավորվել է 2

օրենսդրական ակտերով («Գնումների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ կետ[61] և 23-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետ[62]), ինչպես նաև ոստիկանության բարեփոխումները համակարգող խորհրդի նիստի Վ/72-2022 արձանագրությունով:

2022թ. նոյեմբերի 23-ին Ոստիկանության և ՝ Արման Արզումանյան՝ ԱՁ-ի միջև կնքվել է 7.0 մլն դրամ արժեքով «ՄԱԾՁԲ-2022-ԱԹԾ-Ա-11» պայմանագիրը: Պայմանագրի համաձայն մատակարարը պարտավորել է թաղանթապատել թվով 175 Toyota Fortuner ավտոմեքենաների հետնամասի ապակիները: 2022թ. նոյեմբերի 28-ին կողմերի միջև կազմվել է պայմանագրի կատարման արդյունքների հանձնման-ընդունման արձանագրությունը, որի հիման վրա 2022թ. դեկտեմբերի 5-ին պայմանագրով նախատեսված գումարն ամբողջությամբ վճարվել է: ՀՀ հաշվեքննիչ պալատը եզրակացրել է, որ չեն պահպանվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ բաժնի պահանջները (գնում կատարելու ընթացակարգերը և դրանց պայմանները) և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի №526-Ն որոշման հավելված 1-ով սահմանված Կարգի 5-րդ գլխի պահանջները: Մասնավորապես, ՀՀ հաշվեքննիչ պալատն արձանագրել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ կետը (Մրցույթը սույն օրենքով նախատեսված դեպքերում կարող է կատարվել երկու փուլով), այս ընթացակարգի հետ առնչություն չունի և չի կարող հիմնավորել «ՄԱ» ձևով գնման ընթացակարգի ընտրությունը: Ոստիկանությունը չի պահպանել «Գնումների մասին» օրենքի հոդված 23-ի 1-ին կետի 1-ին ենթակետի պահանջը՝ «այն է՝ գնումը կարող է կատարվել մեկ անձից, եթե գնման ենթակա ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, որը պայմանավորված է նրա հեղինակային և հարակից իրավունքներով, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությամբ»: ՀՀ հաշվեքննիչ պալատը կարծիք է հայտնել, որ հատուկ կամ բացառիկ իրավունքը «բխում է իրավական կամ վարչական ակտով իրավասու մարմնի տրամադրած իրավասություններից, որի նպատակն է որոշակի գործունեության իրականացման իրավունքը (ներառյալ՝ հանրային ծառայությունների ոլորտում) վերապահել մեկ կամ սահմանափակ թվով կազմակերպությունների, և որով էապես սահմանափակվում է նման գործունեություն իրականացնելու այլ կազմակերպությունների հնարավորությունը»: ՀՀ հաշվեքննիչ պալատն արձանագրել է, որ «Արման Արզումանյան» ԱՁ-ն չի ներկայացրել բացառիկ իրավունքներ վերապահված լինելու փաստը հավաստող փաստաթղթեր և այդ մասին նշում չկա նաև ընթացակարգի արձանագրություններում: ՄԱ ընթացակարգ կիրառելու

[61] Մրցույթը սույն օրենքով նախատեսված դեպքերում կարող է կատարվել երկու փուլով:
[62] Գնումը կարող է կատարվել մեկ անձից, եթե գնման ենթակա ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, որը պայմանավորված է նրա հեղինակային և հարակից իրավունքներով, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությամբ

արդյունքում Ոստիկանությունը մատակարար կազմակերպությանը հնարավորություն է տվել չներկայացնել գնման ընթացակարգի շրջանակներում, հայտի, ինչպես նաև որակավորման և պայմանագրի (կանխավճարի) ապահովումներ (ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 71-րդ կետի 3-րդ ենթակետ): ՀՀ հաշվեքննիչ պալատը նաև արձանագրել է, որ «Ոստիկանության բարեփոխումները համակարգող խորհրդի նիստի Արձանագրությունը, որպես գնման ընթացակարգի ձևի հիմնավորում չի կարող լինել, քանի որ ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշման հավելվածի 3-րդ կետի համաձայն, գնման գործընթացի առանձնահատկությունները սահմանվում է կառավարության որոշումներով»:

Եզրակացություն

Գնումները պետք է հիմնվեն երկարաժամկետ (ռազմավարական) կարիքների գնահատման վրա և կատարվեն հաստատված տեխնիկական բնութագրերին համապատասխան: Ոստիկանության կողմից կարիքների գնահատման վերաբերյալ փաստաթղթերի բացակայությունն ազդակ է, որ այդ աշխատանքը չի կատարվում, ինչի արդյունքում հաճախակի փոփոխությունների են ենթարկվում միևնույն ապրանքի տեխնիկական բնութագրերը: Վերջին տարիներին Ոստիկանությունը ձեռք է բերել տարբեր բնութագրեր ունեցող մի քանի հարյուր մեքենա և պարզ չէ, ինչպես է որոշել տվյալ բնութագրերով մեքենայի կարիքը: Մեքենաներ ձեռք բերելիս, առանց մատակարար ընկերությունից օրենսդրությամբ նախատեսված բանկային երաշխիք ստանալու Ոստիկանությունը տրամադրել 100% կանխավճար:

Ոստիկանության կողմից մրցութային եղանակով իրականացված մի շարք խոշոր գնումների դեպքում տնտեսումներ չեն եղել: Դա կարող է նշանակել, որ կամ ՀՀ ՆԳՆ-ն կարողանում շատ լավ հաշվարկել (կանխատեսել) առաջարկվող գները, կամ մրցույթների արդյունքները կանխորոշված են: Հաշվի առնելով գնումների պլանավորման հետ կապված Ոստիկանությունում բացահայտված խնդիրները, դժվար է հավատալ, որ նախարարությունը կարողանում է ճշգրիտ հաշվարկել (կանխատեսել) մատակարարների կողմից առաջարկվելիք գները:

Էական տարբերություններ կան տարբեր ընթացակարգերով պլանավորած և կատարած գնումների քանակների և ծավալների միջև, ինչն ընդգծում է պլանավորման հետ կապված առկա խնդիրները: Ոստիկանությունը պլանավորվածից ավելի շատ է օգտագործում ՄԱ ընթացակարգը: Նման մոտեցումը նվազեցնում է պլանի հանդեպ վստահությունը և դրա կարևորությունը, կասկածի տակ դնում ռազմավարական բարեփոխումների ֆինանսական կառավարմամբ

աջակցելու կարողությունը:

Ոստիկանության կողմից պատրաստված փաստաթղթերում հանդիպում են սխալներ և վրիպակներ: Ցանկացած մարդ իրավունք ունի սխալվել: Սակայն Ոստիկանությունը համակարգ է, որը պետք է ունենա ներքին հսկողության և ներքին ֆինանսական հսկողության համակարգեր, որոնք պետք է կրկնակի ստուգման ենթարկեն պաշտոնական և ֆինանսական փաստաթղթերը և երաշխավորեն դրանց ճիշտ լինելը:

Չնայած ԷԱ-ի կողմից տրվող հնարավորություններին, առանձին ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման աճուրդներին մասնակցում է մեկ ընկերություն, ինչը հնարավորություն չի տալիս լիարժեք կերպով օգտագործել էլեկտրոնային համակարգի կողմից տրվող հնարավորությունները և հասնել պետական միջոցների խնայողությունների:

Գնումների գործընթացի և կնքված պայմանագրերի վերաբերյալ տեղեկատվությունը Ոստիկանությունը հրապարակում է www.gnumner.minfin.am կայքում: Սակայն կայքի ոչ հարմարավետ լինելը դժվարություններ է ստեղծում գնումների նկատմամբ հանրային հսկողության տեսակետից: Ըստ էության ընթացակարգի վերաբերյալ տեղեկատվություն կարելի է գտնել դրա ծածկագիրն իմանալու դեպքում: Այս խնդրի լուծումը և Armeps համակարգի տվյալների որակի հետ կապված խնդրի լուծումը Ոստիկանության իրավասություններից դուրս է:

Ներկայացված տվյալների համաձայն վերջին տարիներին ավելացել են պայմանագիրը լուծելու դեպքերը, ինչը կարող է պայմանավորված լինել ինչպես մատակարարների անբարեխղճությամբ, հաղթողի ընտրությամբ, այնպես էլ հանձնման-ընդունման գործընթացում սովորաբար առկա կոռուպցիոն ռիսկերի նյութականացմամբ (որոնք օրինակ, դրսևորվել են ոստիկանության ձեռք բերած Տոյոտա ավտոմեքենաներում ճաղավանդակների տեղադրման դեպքում):

Ոստիկանությունը միևնույն ապրանքը, ծառայությունը կամ աշխատանքը ձեռք է բերում ինչպես ՄՍ ընթացակարգով, այնպես էլ «Գնումների մասին» ՀՀ օրենքով չսահմանված գնում չհանդիսացող ծախս «ընթացակարգով»: Նման պրակտիկան գնումների համակարգում մութ խորշի առկայության վկայություն է: Չի կարելի բացառել, որ ԳՉԾ ընթացակարգն օգտագործվում է «Գնումների մասին» օրենքը շրջանցելու նպատակով:

Վերջին շրջանում ավելացել է չկայացած ընթացակարգերի քանակը:

Ոստիկանության կողմից կազմակերպվող գնումների դեպքում պայմանագրի կատարման գործընթացը, այն է, մատակարարված ապրանքների, կատարված

աշխատանքների, մատուցված ծառայությունների ընդունումը խնդրահարույց է: Ոստիկանության ստորաբաժանումներն ընդունում են իրենց մշակած տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող ապրանքներ, աշխատանքներ և ծառայություններ, խնդիրներ կան ընդունվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ինչպես քանակի, այնպես էլ դրանց որակի հետ կապված:

Էական կոռուպցիոն ռիսկեր գոյություն ունեն մատակարարված ապրանքների, կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների հանձնման-ընդունման փուլում: Մեքենաների ձեռք բերման, մեքենաներում տեսախցիկների և կապի համակարգերի տեղադրման, մեքենաները ճաղավանդակներով կահավորելու և մեքենաների ապակիների թաղանթապատման ծառայությունների գնման դեպքում արձանագրվել են շեղումներ տեխնիկական բնութագրերից, հավելագրումներ (անապրանք գործարք) և մեկ անձից գնման ընթացակարգի անհարկի օգտագործում:

Ոստիկանության կողմից ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ընդունումն ըստ էության չի ենթարկվում ներքին հսկողության, ինչի հետևանքով դրանք հայտնաբերվել են ոչ թե Ոստիկանության ներքին ֆինանսական հսկողության համար պատասխանատու ստորաբաժանումների, այլ ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից:

Առաջարկություն

Ոստիկանությունը կարող է բարելավել հանրային վստահությունը, եթե հանրությանը ներկայացնի տվյալներ, որոնք կվկայեն, որ ուղիղ կապ գոյություն ունի գնումների պլանի և ռազմավարական ծրագրից բխող կարիքների գնահատման միջև:

Գնումների դեպքում բյուջետային միջոցների տնտեսում ապահովելու համար Ոստիկանությունը պետք է աշխատի ավելի շատ մասնակիցների ներգրավել իր կողմից իրականացվող գնումների գործընթացներին:

Ոստիկանությունը պետք է աշխատի գործել իր իսկ պատրաստած գնումների պլանին համապատասխան, նվազագույնի հասցնի գնումների պլանում փոփոխությունները, գնումների պլաններից շեղումները և ոչ մրցակցային ընթացակարգերի օգտագործումը:

Հանրային վստահությունը բարելավելու նպատակով հատուկ ուշադրության պետք է արժանանան և վերլուծության ենթարկվեն պայմանագրերի լուծարման և գնումների չկայանալու դեպքերը: Ոստիկանությունը պետք է նման դեպքերը նվազեցնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկի, այլապես դրանք կարող են հանգեցնել հանրությանը մատուցվող ծառայությունների հետ կապված խնդիրների

(օրինակ վարորդական վկայականների տրամադրման դեպքում, եթե Ոստիկանությունը չկարողանա ժամանակին և ամբողջ ծավալով ձեռք բերել վարորդական վկայականների պատրաստման համար անհրաժեշտ նյութերը):

Անհրաժեշտ է բարելավել և հստակեցնել պայմանագրի կատարման փուլում ոստիկանության պաշտոնյաների իրավունքներն ու պարտականությունները և հանրային վստահությունը բարելավելու նպատակով պայմանագրի կատարման գործընթացին մասնակից դարձնել հեղինակություն վայելող ՀԿ-ների և լրատվամիջոցների ներկայացուցիչներին:

Ոստիկանությունը պետք է դադարեցնի «Գնումների մասին» ՀՀ օրենքով չնախատեսված ԳՁԾ «ընթացակարգով» գնումներ կատարելու պրակտիկան:

Ոստիկանությանն անհրաժեշտ է էականորեն բարելավել ներքին ֆինանսական հսկողության գործառույթը:

4. ԳՆՈՒՄՆԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարությունը հանրային գնումների վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրում է երկու հիմնական հարթակների օգնությամբ. www.armeps.am և www.gnumner.minfin.am :

«Գնումների մասին» ՀՀ օրենքի հոդված 16-ի 2-րդ մասի 11-րդ կետի համաձայն ՀՀ ֆինանսների նախարարությունն իրականացնում է էլեկտրոնային գնումների համակարգի սպասարկման և համակարգման գործառույթները: ՀՀ ֆինասնների նախարարության կանոնադրությունը չի նախատեսում առանձին գործառույթ Էլեկտրոնային գնումների համակարգի հետ կապված, այլ միայն տալիս է ընդհանրական ձևակերպում, ըստ որի նախարարությունը կատարում է գնումների ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրությամբ նախարարությանը վերապահված գնումների գործընթացի կարգավորման և համակարգման լիազորությունները:

ՀՀ ֆինանսների նախարարությունը մինչև մայիսի մեկը հրապարակում է նախորդ տարվա գնումների հաշվետվությունը: Գնումների տարեկան հաշվետվության մեջ ՀՀ ֆինանսների նախարարությունը նշում է, որ «տվյալները ներկայացված են պատվիրատուների տեղեկատվության հիման վրա»: Հաշվետվության մեջ ՀՀ ֆինանսների նախարարությունը չի օգտագործում «armeps» և «համակարգ» բառերը, ինչը նշանակում է, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը չի վստահում armeps-ում առկա տեղեկատվությանը և հաշվետվության համար տեղեկատվությունը հավաքում է այլ եղանակով և աղբյուրներից:

Գնումների վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարության հաշվետվությունները չեն ներառում առանձին նախարարությունների և գերատեսչությունների կողմից կատարված գնումների վերաբերյալ տեղեկատվություն:

4.1. WWW.ARMEPS.AM

www.armeps.am -ի միջոցով ՀՀ կառավարությունը հանրությանը տեղեկատվություն է տրամադրում գնումների պլանների և պայմանագրերի, կազմակերպված, կայացած և չկայացած ընթացակարգերի վերաբերյալ: Տեղեկատվության որակն անբավարար է, առկա են ակնհայտ սխալներ[63]:

[63] Օրինակ, համակարգում առկա տվյալի համաձայն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը 329,900,000,000 (329.9 մլրդ) դրամի պայմանագիր է կնքել «Շանթ-Սեյրան» ՍՊԸ-ի հետ (ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2022/4Շ-1): Պայմանագրի հետազոտության արդյունքում պարզ է դառնում, որ կողմերը կնքել են մոտավորապես 3.3 մլրդ դրամի պայմանագիր: Համակարգում առկա են մեծ թվով մեկ դրամով կնքված պայմանագրեր:

Պայմանագրերի էջում հնարավոր է որոնում կատարել ըստ ծածկագրի, տարեթվի, գնման առարկայի, գնման առարկայի կոդի, պատվիրատուի տիպի, պատվիրատուի, մատակարարի, գնման ընթացակարգի, պայմանագրի ընդհանուր գումարի, առկա ֆինանսական միջոցներով պայմանագրի գումարի, պայմանագրի կնքման ամսաթվի, պայմանագրի մուտքագրման ամսթվի: Տվյալները բեռնելու համար պարտադիր է լրացնել «Տարեթիվ» տողը:

«Հաշվարկային տնտեսում» սյան դեպքում ցուցանիշների մեծ մասը «0» է: «Հանձնման/ընդունման արձանագրություններ» և «Ապրանքների մատակարարման հարկային հաշիվ» սյուների մեծ մասի դեպքում ներբեռնման ենթակա ֆայլեր առկա չեն: Ներբեռնման ենթակա ֆայլեր կան «Պայմանագրեր» սյան տվյալներում, սակայն դրանք քանակի, որակի և բովանդակության առումով հախուռն են: Օրինակ, «Բիդեք» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրի դեպքում (ծածկագիր ՀՀ Ո ԲՄԱԾՁԲ-2021-ՇԻՆ/ՕԿԿ-47) առկա է տարբեր փաստաթղթերի 17 տեսաներածված օրինակներ (դրանց մի մասը կարծես կրկնակի անգամ է մուտքագրված): «Լոկատոր» ՓԲԸ-ի դեպքում (ծածկագիր ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ-2023-ՊՊԳՎ/ԳԼՈԲԱԼ/Ա-2-1) «Պայմանագիր» սյան ներքո առկա է 10 տեսաներածված ֆայլ: Տողերի մեծ մասում «Պայմանագրի» ներքո նշվում է 2-4 ֆայլ:

4.2. WWW.GNUMNER.MINFIN.AM

www.gnumner.minfin.am կայքում հրապարակվում են գնումների հայտարարությունները: Առանձին էջեր կան նախատեսված հանձնաժողովի նիստերի արձանագրությունների, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակվող հաշվետվությունների, պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումների, շահերի բախման բացակայության և իրական շահառուների տվյալների մասին հայտարարությունների, պայմանագրերում կատարված փոփոխությունների, բողոքարկումների, դատական կարգով բողոքարկումների, հանրային հսկողությանը վերաբերող նյութերի, գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու պատվիրատուի ղեկավարների պատճառաբանված որոշումների, էլեկտրոնային գնումների համակարգի խափանումով պայմանավորված չկայացած հայտարարված գնման ընթացակարգերի և այլ տվյալների և տեղեկատվության համար:

Կայքի ստորին հատվածում հասանելի են գնումների միասնական անվանացանկը (CPV կոդեր), էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող գնման առարկաների թվային ծածկագրերը, գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակը, ԵԱՏՄ երկրների գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակը և ԵԱՏՄ անդամ-պետությունների արդյունաբերական ապրանքների եվրասիական ռեեստրը:

Ինչպես նշվել է վերևում, էջում տվյալներ գտնելը դժվար է էջի կառուցվածքի պատճառով: Ոստիկանության գրությունից հետևում է, որ տվյալներ գտնելու համար անհրաժեշտ է ունենալ կոնկրետ ծածկագիրը:

5. ԱՐՏԱՔԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Արտաքին հսկողությունն իրականացվում է ՀՀ հաշվեքննիչ պալատի և ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից:

5.1. ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

Հաշվեքննիչ պալատն արտաքին պետական հաշվեքննություն իրականացնող անկախ պետական մարմինն է: Հաշվեքննիչ պալատի գործունեության նպատակը հանրային ֆինանսների և սեփականության ոլորտում պետական և համայնքային բյուջեների միջոցների, ստացած փոխառությունների և վարկերի, պետական և համայնքային սեփականության օգտագործման օրինականության և արդյունավետության վերաբերյալ Ազգային ժողովին և հանրությանը ժամանակին, մասնագիտական և անկողմնակալ տեղեկատվություն ներկայացնելն է: Գործունեության նպատակի ապահովման համար հաշվեքննիչ պալատն հաշվեքննություն է իրականացնում պետական բյուջեի և համայնքային բյուջեների միջոցների, ստացված փոխառությունների ու վարկերի, պետական և համայնքային սեփականության օգտագործման օրինականության և արդյունավետության նկատմամբ, իսկ օրենքով նախատեսված դեպքերում կատարում է նաև ստուգում:

ՀՀ հաշվեքննիչ պալատն արձանագրել է, «որ Ոստիկանությունում հաշվեքննությամբ ընդգրկված ժամանակահատվածում ներքին աուդիտ չի իրականացվել»: ՀՀ Ոստիկանության կանոնադրությամբ[64] «ներքին աուդիտի» ստորաբաժանում չի նախատեսվել: ՀՀ հաշվեքննիչ պալատը չի հայտնաբերել հրավիրված ներքին աուդիտի ծառայությունների ձեռքբերման գործող պայմանագրեր և արձանագրել է անհամապատասխանություն «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի հետ:

Ներքին աուդիտն անկախ, օբյեկտիվ հավաստիացման և խորհրդատվական գործառույթ, որն ուղղված է կազմակերպության գործունեության արդյունքի մեծացմանը և բարելավմանը: Այն աջակցում է կազմակերպությանը ռիսկերի կառավարման, հսկողության ու կառավարչական գործընթացների համակարգված և կանոնակարգված գնահատման ու բարելավման միջոցով հասնել իր նպատակներին:

[64] ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կանոնադրությունը հաստատելու մասին» N 751-Լ որոշում, որն ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ վարչապետի 2023թ. մարտի 14-ի №268-Լ որոշմամբ (հասանելի է https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=175322 էջում):

5.2. ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից ՀՀ ՆԳՆ-ում կատարված ստուգումների վերաբերյալ տեղեկատվություն առկա չէ:

Եզրակացություն

Ոստիկանություն հաշվեքննությունների ընթացքում ՀՀ հաշվեքննիչ պալատը հայտնաբերել է գնումների օրենսդրության մի շարք խախտումներ, որոնց հետ կապված նյութերն ուղարկվել են ՀՀ դատախազություն:

Ոստիկանությունում ներքին աուդիտ չի իրականացվում, ինչը նշանակում է, որ չի կատարվում Ոստիկանության կողմից առերեսվող ռիսկերի կառավարում, հսկողության և կառավարչական գործընթացների համակարգված և կանոնակարգված գնահատում:

Առաջարկություն

Ոստիկանությունում անհրաժեշտ է ձևավորել ներքին աուդիտի ստորաբաժանում, այդ ստորաբաժանումն օժտել անհրաժեշտ լիազորություններով, համալրել որակյալ և որակավորված մասնագետներով և ապահովել ներքին աուդիտի ստորաբաժանման գործունեության թափանցիկություն և հաշվետվողականություն:

6. ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄՆԵՐ

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի համաձայն յուրաքանչյուր շահագրգիռ անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով: Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը բողոքարկելու գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները: «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն գնումների հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն և կարգավորվում են ՀՀ քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ:

ՀՀ ֆինանսների նախարարության գնումների համակարգի համաձայն[65] Ոստիկանության դեմ ներկայացվել է 4 բողոք, այդ թվում 1-ը հրավերի պայմանների և 3-ը հայտերի գնահատման փուլում գնահատող հանձնաժողովի կողմից կայացրած որոշումների դեմ (աղյուսակ 13):

Աղյուսակ 13. Տեղեկատվություն 2022թ. հունիսի 1-ից դեկտեմբերի 30 ժամանակահատվածում Ոստիկանության դեմ դատական կարգով բողոքարկումների վերաբերյալ

N	Բողոքը ներկայացրած մասնակցի անվանումը	Պատվիրատուի անվանումը	Գնման ընթացակարգի ծածկագիրը	Դատականի որոշման համարը	Կարգա-վիճակ
հրավերի պայմանների դեմ ներկայացված բողոքներ					
1	«Արիդես» ՍՊԸ	ՀՀ ոստիկանություն	ՀՀ Ո ԲՄԱՊՁԲ-ՄՎ/ԱԼԿՈ	ԵԴ/33093/02/22	մերժվել է
հայտերի գնահատման փուլում գնահատող հանձնաժողովի կողմից կայացրած որոշումների դեմ ներկայացված բողոքներ					
1	«Սոս Սիսթեմս» և «Հիբրիդ Սիսթեմս» ՍՊԸ-ներ	ՀՀ ոստիկանություն	ՀՀ Ո ԵՄՇՁԲ-46-ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ-2022	ԵԴ/31734/02/22	մերժվել է
2	«ԱՅԹԻԷՍ ԱՐՄ» ՍՊԸ	ՀՀ ոստիկանություն	ՀՀ Ո ԳՀՇՁԲ-ՃՈ 2023/ՎԹ/ՏՀՄ	ԵԴ/30672/02/22	մերժվել է
3	«Էլլիպս ՋԻԷյ» ՍՊԸ	ՀՀ ոստիկանություն	ՀՀ Ո ԵՄՇՁԲ-46-ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ-2022	ԵԴ/53028/02/22	մերժվել է
պատվիրատուների կողմից կայացրած պայմանագրերը միակողմանի լուծելու դեմ ներկայացված բողոքներ					
1					
գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցում ներառելու պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման դեմ ներկայացված բողոքներ					
1					

Աղբյուր. ՀՀ ֆինանսների նախարարության գնումների համակարգ

[65] ՀՀ ֆինանսների նախարարության գնումների համակարգ, https://procurement.minfin.am/hy/page/reports_on_complaints_2022_am/

Ոստիկանության կողմից կայացրած պայմանագրերը միակողմանի լուծելու և գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման դեմ բողոքներ չեն ներկայացվել: ՀՀ ոստիկանության կայացրած որոշումների դեմ ներկայացված բոլոր բողոքները մերժվել են:

ԵԴ/53028/02/22 քաղաքացիական գործով հայցդիմում է ներկայցվել ընդդեմ ՀՀ ոստիկանության՝ պայմանագիր կնքելուն հարկադրելու պահանջի մասին: Ըստ Վերաքննիչ դատարանի՝ գնումների գործընթացի կարգավորումներն ունեն որոշակի առանձնահատկություններ: Մասնավորապես, չնայած այն հանգամանքին, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 461-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե կողմը, ում համար օրենքին համապատասխան պարտադիր է պայմանագիր կնքելը, խուսափում է այն կնքելուց, մյուս կողմն իրավունք ունի դատարան դիմել՝ պայմանագիրը կնքելուն հարկադրելու պահանջով: Մինչև պայմանագրի կնքումը գնման ընթացակարգը կարող է չկայացած հայտարարվել եթե՝ դադարի գոյություն ունենալուց գնման պահանջը: Օրենսդիրը նախատեսել է իրավիճակներ այն դեպքերի համար, երբ օբյեկտիվորեն պատվիրատուի մոտ գնման պահանջը կարող է դադարել:

Վերաքննիչ դատարանը փաստել է, որ տվյալ դեպքում առկա է Օրենքով նախատեսված՝ պետության կարիքների համար կազմակերպված գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու ՀՀ կառավարության որոշում, որի արդյունքում վերացել է բողոքաբերի հետ պայմանագիր կնքելու պարտադիր պայմանը: Իսկ այդպիսի պայմանագիր կնքելուց խուսափելու միտումների առկայության մասով Բողոքաբերի պնդումներին Վերաքննիչ դատարանը որևէ գնահատական տալ ուղղակիորեն չի կարող, քանի որ գործով առկա փաստակազմը լրիվ բավարար է պատասխանողի գործողություններն իրավաչափ գնահատելու համար: **<u>Տվյալ դեպքում չկան բավարար ապացույցներ գնման պահանջը դադարած լինելու հիմքերի վերաբերյալ՝ այսինքն ինչ փաստական հանգամանքներով պայմանավորված է դադարել գործություն ունենալ գնման պահանջը: Թե՛ առաջին ատյանի դատարանը, և թե՛ վերաքննիչ դատարանը չեն անդրադարձել գնման պահանջը դադարած համարելու հիմքերին և ապացույցներին և այդ առումով գործի ամբողջական և օբյեկտիվ քննություն չի կատարվել, և դատական ակտերը պատճառաբանված չեն:</u>**

7. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս հետազոտության շրջանակներում բացահայտված փաստերը հանգեցրել են հետևյալ եզրակացությունների.

1) Ոստիկանության բարեփոխումների ռազմավարությունը չի անդրադառնում պետական ֆինանսական միջոցների նպատակային, արդյունավետ և խնայողաբար օգտագործմանը: Այս հետազոտությունը նաև արձանագրում է, որ Ոստիկանության կողմից կատարվող գնումները չեն ապահովում բաց, թափանցիկ, հաշվետու, պատասխանատու, մասնակցային և մրցակցային համակարգ ունենալու պահանջներին:

   Այս համատեքստում

   «Բաց» նշանակում է, որ տեղեկատվությունը հասանելի է տեղեկատվական համակարգերի միջոցով և Ոստիկանությանը գրություններ հղելու անհրաժեշտությունը հասցվել է նվազագույնի:

   «Թափանցիկ» նշանակում է հասարակությունը ժամանակին, լիարժեք, ըստ էության, բովանդակային, չափելի է տեղեկատվություն է ստանում Ոստիկանության գործունեության վերաբերյալ ընդհանրապես և կատարված գնումների վերաբերյալ մասնավորապես:

   «Հաշվետու» նշանակում է Ոստիկանությունը պաբերաբար և ըստ անհրաժեշտության հաշվետվություններ է ներկայացնում իր գործունեության վերաբերյալ ընդհանրապես և Ոստիկանության կողմից պլանավորված ու կատարված գնումների վերաբերյալ մասնավորապես:

   «Պատասխանատու» նշանակում է, որ Ոստիկանությունը ստանձնում է իր պաշտոնյաների կատարած գործողությունների պատասխանատվությունը և պատասխանատվության է ենթարկում այն պաշտոնյաներին, որոնք դրսևորել են ՀՀ պետական պաշտոնյային ոչ հարիր և / կամ ՀՀ օրենսդրությանը չհամապատասխանող վարքագիծ ընդհանրապես և պետական գնումների դեպքերում մասնավորապես:

   «Մասնակցային» նշանակում է, որ իր կողմից մշակվող և իրականացվող քաղաքականության հետ կապված Ոստիկանությունը բովանդակային և ըստ էության երկխոսության մեջ է հասարակության լայն շերտերի, ՀԿ-ների, մասնագիտական և փորձագիտական հանրության հետ, ականջալուր է Ոստիկանության գործունեության հետ կապված հանրային դժգոհություններին ընդհանրապես և Ոստիկանության կողմից կատարվող գնումների հետ

կապված դժգոհություններին մասնավորապես և անհրաժեշտության դեպքում միջոցներ է ձեռնարկում իրավիճակը շտկելու, ի հայտ եկած թերությունները վերացնելու ուղղությամբ:

«Մրցակցային» նշանակում է, որ Ոստիկանության կողմից կատարվող գնումները համապատասխանում են «Գնումների մասին» ՀՀ օրենքի հոդված 18-ի 5-րդ մասի պահանջներին և Ոստիկանությունը ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները պետական գնումների ժամանակ մրցակցությունը խրախուսելու և պետական ֆինանսական միջոցները նպատակային, արդյունավետ և խնայողաբար օգտագործելու ուղղությամբ

2) ՉՆայած ոստիկանության համակարգում արմատական բարեփոխումների վերաբերյալ հայտարարությունների և ՀՀ կառավարության կողմից հաստատված բարեփոխումների վերաբերյալ փաստաթղթերի առկայությանը գնումների պլանները կապված չեն այդ երկարաժամկետ բարեփոխումների նպատակների հետ: Արդյունքում, Ոստիկանությունը հաճախակի և մեծ ծավալով փոփոխություններ է կատարում գնումների պլանում, որպեսզի ձեռք բերի բարեփոխումների համար անհրաժեշտ խոշորածավալ գույք, աշխատանքներ և ծառայություններ: Օրինակ, 2022թ. հուլիսին ձեռք բերված մեքենաների երկրորդ խմբաքանակը ներառված չի եղել գնումների պլանում և դրա համար պետական բյուջեով ֆինանսական միջոցներ նախատեսված չեն եղել:

3) Գնումները պետք է հիմնվեն կարիքների գնահատման վրա և կատարվեն հաստատված տեխնիկական բնութագրերին համապատասխան: Կարիքների բացակայության գնահատման օրինակ կարող է հանդիսանալ պարեկային ծառայության համար ոստիկանական մեքենաների ձեռքբերումը: Հասկանալի չէ, թե ինչու և ինչի հիման վրա է Ոստիկանությունը որոշել, որ ի տարբերություն մնացած պարեկային ծառայությունների, որոնց համար 2022թ. հունվարին ձեռք բերված մեքենաներն ունեցել են 199-200 ձիաուժ հզորությամբ շարժիչ, 1555-1715 կգ քաշ, հուլիսին Արագածոտնի, Գեղարքունիքի, Կոտայքի և Տավուշի մարզերում ստեղծվող պարեկային ծառայության համար գնվող մեքենաները կարող են ունենալ 166 ձիաուժ շարժիչ և 2065-2120 կգ քաշ:

4) Ոստիկանության կողմից կարիքների գնահատման վերաբերյալ փաստաթղթերի բացակայությունն ազդակ է, որ այդ աշխատանքը չի կատարվում, ինչի արդյունքում հաճախակի փոփոխությունների են ենթարկվում միևնույն ապրանքի տեխնիկական բնութագրերը: Վերջին տարիներին Ոստիկանությունը ձեռք է բերել տարբեր բնութագրեր ունեցող մի

քանի հարյուր մեքենա և պարզ չէ, ինչպես է որոշել տվյալ բնութագրերով մեքենայի կարիքը:

5) Ըստ էության գնումների պլանը որևէ կերպ Ոստիկանությանը չի պարտադրում գնումները կատարել համաձայն այդ պլանի: Ոստիկանությունը կնքում է գնումների պլանում նշված մեծությունները գերազանցող պայմանագրեր, իսկ ցանկության դեպքում կարող է նաև անսահմանափակ թվով և ծավալով փոփոխություններ կատարել գնումների պլանում: Անհասկանալի է, կա արդյոք որևէ օրենսդրական կարգավորում, որը սահմանափակում է գնումների պլանում նշված մեծությունից մեծ ծավալով պայմանագիր կնքելու Ոստիկանության իրավունքը: Ինչպե՞ս է ՀՀ ՆԳՆ-ն «Բիդեք» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրի դեպքում որոշել 1,275.0 մլն դրամ կամ «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ի դեպքում 450 մլն դրամ մեծությամբ պայմանագիր կնքել, եթե գնումների պլանով ավելի փոքր մեծություն է նախատեսվել, համապատասխանաբար 875.0 մլն դրամ կամ 293.26 մլն դրամ:

6) Առանց ֆինանսական միջոցների ապահովման գնումների գործընթացը պետական ռեսուրսների վատնում է: Ոստիկանության աշխատակիցները պատրաստում են գնման առարկայի տեխնիկական բնութագիրը, ձևավորում են հանձնաժողով և կազմակերպում են հանձնաժողովի նիստեր, տարածում են մրցույթի հրավերը և հայտարարությունը, ընդունում և գնահատում են ներկայացված հայտերը, պատրաստում և տարածում են շահերի բախման բացակայության վերաբերյալ հայտարարություն, ուսումնասիրում և գնահատում են ներկայացված հայտերը, ուսումնասիրում են իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը, պատրաստում են պայմանագիր և կնքում են այն, ապա Ոստիկանությունը լուծում է պայմանագիրը քանի որ «գնումների պլանով չհաստատվեց ֆինանսական միջոցներ պայմանագրով նախատեսված» գնումը կատարելու համար: Սա Ոստիկանության մարդկային և նյութական ռեսուրսների վատնում է:

7) Պլանավորման փուլում առկա են ծախսակազմման հետ կապված լրջագույն խնդիրներ: Մի շարք դեպքերում ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռք բերման համար բավարար միջոցներ չեն նախատեսվել: Արդյունքում, լրացուցիչ ֆինանսական միջոցներ հատկացնելու խնդրանքով Ոստիկանությունը դիմել է ՀՀ կառավարություն: Օրինակ, 2022թ. հունվարին ձեռք բերված մեքենաների առաջին խմբաքանակի համար նախատեսված միջոցները բավարար չեն եղել:

8) Ոստիկանության ներքին հսկողական և ՀՀ կառավարության վերահսկող կառույցները չեն ուսումնասիրում Ոստիկանության գնումների պլաններում կատարվող մեծաքանակ և մեծածավալ փոփոխությունների պատճառները: Ոստիկանության կողմից գնումների պլաններում կատարվող փոփոխությունները վերահսկողությունից դուրս են:
9) Գնումների տեխնիկական բնութագրերը երբեմն սահմանափակում են հնարավոր մասնակիցների շրջանակը: Օրինակ, 2022թ. հուլիսին պարեկային ծառայության համար ոստիկանական մեքենաների ձեռքբերման ժամանակ հայտնի մակնիշի մեքենա ներկրողներից մեկը «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ի ներկայացուցչին հայտնել էր, որ իրենց ունեցած մեքենան 4սմ-ով չի բավարարում Ոստիկանության կողմից տեխնիկական բնութագրում սահմանված պահանջները:
10) Ոստիկանությունը կնքում է ավելի մեծ ծավալով պայմանագրեր, քան նախատեսված է գնումների պլանով: Արդյունքում ստացվում է, որ պայմանագրի մի մասը «առկա ֆինանսական միջոներով» ապահովված չէ: Armeps համակարգի համաձայն 2022թ. Ոստիկանության կողմից կնքած պայմանագրերի ընդհանուր գումարը կազմել է 18,786.0 մլն դրամ, որից առկա ֆինանսական միջոցներով՝ 17,945.8 մլն դրամ, ինչից հետևում է, որ գնումների 840.2 մլն դրամը առկա ֆինանսական միջոցներով ապահովված չեն եղել:

Հստակեցման կարիք ունի, թե ինչ իմաստ ունի գնումների պլանը, եթե Ոստիկանությունը կարող է գնումներ կատարել պլանավորածից մեծ գումարով: Օրինակ, 2022թ. հունվարի 19-ին Ոստիկանությունը 450,000,000 դրամ ընդհանուր գումարով ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ ձեռք բերելու վերաբերյալ պայմանագիր է կնքել «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ի հետ, այն դեպքում, երբ գնումների պլանով նախատեսված է եղել 293,262,700.0 դրամ (ԳՄԱ կոդ 50111130/524): Armeps համակարգի համաձայն առկա ֆինանսական միջոցներով պայմանագրի գումարը նույնպես կազմել է 293,262,700 դրամ:

2022թ. հունիսի 7-ին Ոստիկանությունը 1,275,000,000.0 դրամ ընդհանուր գումարով շինարարական աշխատանքներ ձեռք բերելու վերաբերյալ պայմանագիր է կնքել «Բիդեք» ՍՊԸ-ի հետ, այն դեպքում, երբ գնումների պլանով նախատեսված է եղել 875,000,000.0 (ԳՄԱ կոդ 45221142/3): Armeps համակարգի համաձայն առկա ֆինանսական միջոցներով պայմանագրի գումարը նույնպես կազմել է 875,000,000 դրամ:

11) Մեքենաներ ձեռք բերելիս, առանց մատակարար ընկերությունից օրենսդրությամբ նախատեսված բանկային երաշխիք ստանալու Ոստիկանությունը տրամադրել 100% կանխավճար:
12) Ոստիկանության կողմից մրցութային եղանակով իրականացված մի շարք խոշոր գնումների դեպքում տնտեսումներ չեն եղել: Դա կարող է նշանակել, որ կամ Ոստիկանությունը կարողանում է շատ լավ հաշվարկել (կանխատեսել) առաջարկվող գները, կամ մրցույթների արդյունքները կանխորոշված են: Հաշվի առնելով գնումների պլանավորման հետ Ոստիկանությունում բացահայտված խնդիրները, դժվար է հավատալ, որ նախարարությունը կարողանում է ճշգրիտ հաշվարկել (կանխատեսել) մատակարարների կողմից առաջարկվելիք գները:
13) Էական տարբերություններ կան տարբեր ընթացակարգերով պլանավորած և կատարած գնումների քանակների և ծավալների մեջ, ինչն ընդգծում է պլանավորման հետ կապված առկա խնդիրները: Ոստիկանությունը պլանավորվածից ավելի շատ է օգտագործում մեկ անձ ընթացակարգը: Նման մոտեցումը նվազեցնում է պլանի հանդեպ վստահությունը և դրա կարևորությունը, կասկածի տակ դնում ռազմավարական բարեփոխումների ֆինանսական կառավարմամբ աջակցելու կարողությունը:
14) Ոստիկանության կողմից պատրաստված փաստաթղթերում հանդիպում են սխալներ և վրիպակներ: Ցանկացած մարդ իրավունք ունի սխալվել: Սակայն Ոստիկանությունը կառույց է է, որը պետք է ունենա ներքին հսկողության և ներքին ֆինանսական հսկողության համակարգեր, որոնք պետք է կրկնակի ստուգման ենթարկեն պաշտոնական և ֆինանսական փաստաթղթերը և երաշխավորեն դրանց ճիշտ լինելը:
15) Չնայաշ էլեկտրոնային աճուրդի կողմից տրվող հնարավորություններին, առանձին ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման աճուրդներին մասնակցում է մեկ ընկերություն, ինչը հնարավորություն չի տալիս լիարժեք կերպով օգտագործել էլեկտրոնային համակարգի կողմից տրվող հնարավորությունները և հասնել պետական միջոցների խնայողությունների:
16) Գնումների գործընթացի և կնքված պայմանագրերի վերաբերյալ տեղեկատվությունը Ոստիկանությունը հրապարակում է www.gnumner.minfin.am կայքում: Սակայն կայքի ոչ հարմարավետ լինելը դժվարություններ է ստեղծում գնումների նկատմամբ հանրային հսկողության տեսակետից: Ըստ էության ընթացակարգի վերաբերյալ տեղեկատվություն

կարելի է գտնել դրա ծածկագիրն իմանալու դեպքում: Այս խնդիրը և Armeps համակարգի տվյալների որակի հետ կապված խնդիրը Ոստիկանության իրավասություններից դուրս է:

17) Ոստիկանությունը միևնույն ապրանքը, ծառայությունը կամ աշխատանքը ձեռք է բերում ինչպես մեկ անձ ընթացակարգով, այնպես էլ «Գնումների մասին» ՀՀ օրենքով չսահմանված գնում չիանդիսացող ծախս «ընթացակարգով»: Նման պրակտիկան գնումների համակարգում մութ խորշի առկայության վկայություն է: Չի կարելի բացառել, որ ԳՉԾ ընթացակարգն օգտագործվում է «Գնումների մասին» օրենքը շրջանցելու նպատակով:

18) Ներկայացված տվյալների համաձայն վերջին տարիներին ավելացել են պայմանագիրը լուծելու դեպքերը, ինչը կարող է պայմանավորված լինել ինչպես մատակարարների անբարեխղճությամբ, հաղթողի ընտրությամբ, այնպես էլ հանձնման-ընդունման գործընթացում սովորաբար առկա կոռուպցիոն ռիսկերի նյութականացմամբ (որոնք օրինակ, դրսևորվել են ոստիկանության ձեռք բերած Տոյոտա ավտոմեքենաներում ճաղավանդակների տեղադրման դեպքում):

19) Վերջին շրջանում ավելացել է չկայացած ընթացակարգերի քանակը:

20) Ոստիկանության կողմից կազմակերպվող գնումների դեպքում պայմանագրի կատարման գործընթացը, այն է, մատակարաված ապրանքների, կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների ընդունումը խնդրահարույց է: Ոստիկանության ստորաբաժանումներն ընդունում են իրենց մշակած տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող ապրանքներ, աշխատանքներ և ծառայություններ, խնդիրներ կան ընդունվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ինչպես քանակի, այնպես էլ դրանց որակի հետ կապված:

21) Էական կոռուպցիոն ռիսկեր գոյություն ունեն մատակարաված ապրանքների, կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների հանձնման-ընդունման փուլում: Մեքենաների ձեռք բերման, մեքենաներում տեսախցիկների և կապի համակարգերի տեղադրման, մեքենաների հետնամասը ճաղավանդակներով կահավորելու և մեքենաների ապակիների թաղանթապատման ծառայությունների գնման դեպքում արձանագրվել են տեխնիկական բնութագրերից զգալի շեղումներ, հավելագրումներ (անապրանք գործարք) և մեկ անձից գնման ընթացակարգի անհարկի օգտագործում:

22) Ոստիկանության կողմից ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ընդունումն ըստ էության չի ենթարկվում ներքին հսկողության, ինչի

հետևանքնով դրանք հայտնաբերվել են ոչ թե Ստիկանության ներքին ֆինանսական հսկողության համար պատասխանատու ստորաբաժանումներ, այլ ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից:

23) Ստիկանությունը խուսափում է ՀԿ-ներին և լրատվամիջոցներին հրավիրել մասնակցելու ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ընդունման աշխատանքներին:

24) Ստիկանությունում հաշվեքննությունների ընթացքում ՀՀ հաշվեքննիչ պալատը գնումների օրենսդրության մի շարք խախտումներ է հայտնաբերել, որոնց հետ կապված նյութերն ուղարկվել են ՀՀ դատախազություն:

25) Ստիկանությունում ներքին աուդիտ չի իրականացվում, ինչը նշանակում է, որ չի կատարվում Ստիկանության կողմից առերեսվող ռիսկերի կառավարում, հսկողության և կառավարչական գործընթացների համակարգված և կանոնակարգված գնահատում:

8. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ՆԳՆ-ին առաջարկում ենք.

1) Գնումների պլանը կապել կարիքների գնահատման հետ:
2) Ծեշտակի նվազեցնել գնումների պլանում կատարվող փոփոխությունների քանակը և ծավալը և նման փոփոխություններ կատարել միայն պլանավորման ժամանակ իրավիճակի չկանխատեսված փոփոխությունների դեպքում:
3) Ներկայացնել 2020-22թթ. գնումների պլաններում կատարված փոփոխությունների պատճառների վերլուծություն և ներկայացնել, թե ինչպիսի դասեր է Ոստիկանությունը քաղել նախորդ տարիներին գնումների պլաններում կատարված փոփոխություններից:
4) Պարզաբանել, թե ինչպես է Ոստիկանությունը որոշում այն գնումների քանակը և ծավալը, որոնք նախատեսված չեն գնումների պլանով:
5) Հաշվետվություն հրապարակել այն ընթացակարգերի քանակի և ծավալի վերաբերյալ, որոնք նախատեսված չեն եղել գնումների պլանով կամ ապահովված չեն եղել առկա ֆինանսական միջոցներով: Հաշվետվությունը պետք է տեղեկատվություն ներառի ծածկագրի, գնումների պլանում ներառված չլինելու պատճառների, ընթացակարգի, գնման մեծության, մատակարարի, պայմանագիրը կատարելու կամ լուծելու և դրա պատճառների վերաբերյալ, ինչպես նաև տեղեկատվություն այն մասին, թե քանի մարդ-ժամ են Ոստիկանության աշխատակիցները ծախսել այդ անարդյունավետ գործունեության վրա: Եթե կնքվել է գնումների պլանով նախատեսված միջոցները գերազանցող մեծությամբ պայմանագիր, Ոստիկանությունը պետք է հաշվետվություն հրապարակի պլանից շեղումների վերաբերյալ, ինչպես նաև այն մասին, թե ինչպես է որոշվել գնումների պլանի մեծությունը գերազանցող ծավալը և ինչու դա հնարավոր չէր անել գնումների պլանը մշակելիս:
6) Բյուջետային միջոցների տնտեսում ապահովելու համար միջոցներ ձեռնարկել և ավելի շատ ջանք գործադրել գնումների գործընթացներին մասնակցողների թիվն ավելացնելու համար:
7) Նվազագույնի հասցնել գնումների ոչ մրցակցային եղանակների օգտագործումը և թույլ չտալ, որպեսզի դրանք քանակի կամ ծավալի առումով էական տեսակարար կշիռ ունենան Ոստիկանության կողմից կատարվող գնումների ընդհանուր ծավալում:

8) Հանրային վստահությունը բարելավելու նպատակով հատուկ ուշադրության դարձնել պայմանագրերի լուծման և գնումների չկայանալու դեպքերին: Ոստիկանությունը պետք է նման դեպքերը նվազեցնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկի, այլապես դրանք կարող են հանգեցնել հանրությանը մատուցվող ծառայությունների հետ կապված խնդիրների (օրինակ վարորդական վկայականների տրամադրման դեպքում, եթե Ոստիկանությունը չկարողանա ժամանակին և ամբողջ ծավալով ձեռք բերել վարորդական վկայականների պատրաստման համար անհրաժեշտ նյութերը):
9) Հանրությանը տեղեկացնել, թե որքան ժամանակ են (մարդ-ժամ) Ոստիկանության աշխատակիցները ծախսում տարբեր պատճառներով չկայացած հայտարարված գործընթացների հետ կապված: Օրինակ, լուծված պայմանագրերի դեպքում Ոստիկանության աշխատակիցները պատրաստում են գնման առարկայի տեխնիկական բնութագիրը, ձևավորում են հանձնաժողով և կազմակերպում են հանձնաժողովի նիստեր, տարածում են մրցույթի հրավերը և հայտարարությունը, ընդունում և գնահատում են ներկայացված հայտերը, պատրաստում և տարածում են շահերի բախման բացակայության վերաբերյալ հայտարարություն, ուսումնասիրում և գնահատում են ներկայացված հայտերը, ուսումնասիրում են իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը, պատրաստում են պայմանագիր և կնքում են այն, ապա Ոստիկանությունը լուծում է պայմանագիրը քանի որ «գնումների պլանով չհաստատվեց ֆինանսական միջոցներ պայմանագրով նախատեսված» գնումը կատարելու համար:
10) Հանրությանը ներկայացնել, թե Ոստիկանությունն ինչ կազմակերպչական, կառուցվածքային և ընթացակարգային փոփոխություններ է կատարել ՀՀ հաշվեքննիչ պալատի դիտարկումներին արձագանքելու համար:
11) Գնումների հետ կապված գործարքների և գործընթացների վերաբերյալ ավելի շատ համակարգված տեղեկատվություն ներկայացնել ՀՀ ԱԺ-ին և հանրությանը և այդ տեղեկատվությունը հրապարակել նաև Ոստիկանության ինտերնետային կայքում (Ոստիկանության գհանատված կարիքների, կազմված պլանների, պլաններում կատարված փոփոխությունների, գնման ընթացակարգերի ընտրության, չկայացած ընթացակարգերի, լուծված պայմանագրերի, լուծված պայմանագրերի հետևանքների[66] և այլ ցուցանիշների վերաբերյալ):
12) Հավելագրումներից և անապրանք գործարքներից խուսափելու համար բարելավել և հստակեցնել պայմանագրի կատարման փուլում ոստիկանության

[66] Արդյոք պայմանագրի լուծումը ազդե՞լ է հանրությանը մատուցվող ծառայությունների քանակի, որակի և ժամանակի վրա և եթե ոչ, ինչի հաշվին է կարողացել Ոստիկանությունն ապահովել այդ ծառայությունների մատուցումը:

պաշտոնյաների իրավունքներն ու պարտականությունները, ներդնել ներքին հսկողության համակարգ և կրկնակի (անկախ) ստուգումների մեխանիզմ:

13) Հանրային վստահությունը բարելավելու նպատակով պայմանագրի կատարման գործընթացին մասնակից դարձնել հանրության շրջանում հեղինակություն վայելող ՀԿ-ներին և զերծ մնալ հանրությանը ոչ հայտնի ՀԿ-ների օգնությամբ թափանցիկության իմիտացիայից:

14) Դադարեցնել ԳՀԾ «ընթացակարգով» գնումներ կատարելու պրակտիկան:

15) Էականորեն բարելավել ներքին ֆինանսական հսկողության գործառույթը և պետական ֆինանսական կառավարման աշխատանքների բոլոր փուլերում ներդնել կրկնակի ստուգման սկզբունք:

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԴԵՊՔԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

2020թ. ապրիլի 23-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության բարեփոխումների ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» իր №638-Լ որոշմամբ ՀՀ կառավարությունն ազդարարել է, որ «Անհրաժեշտ է ստեղծել տուժողներին արագ օգնության հասնելու և որակյալ, անհետաձգելի բժշկական, հոգեբանական օգնություն ցուցաբերելու, իրավախախտումները կանխելու ու խափանելու, իրավախախտում կատարած անձանց հայտնաբերելուն աջակցելու, նրանց կողմից ցուցաբերվող դիմադրությանը համարժեք ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ կիրառելու հմտություններ ունեցող Պարեկային ոստիկանություն», որը Երևանում և մարզերում պետք է ունենա ավտոպարեկային ու հետիոտն ստորաբաժանումներ: Բարեփոխումների շրջանակներում նախատեսվում է արդիականացնել ոստիկանության տրանսպորտային միջոցները:

ՀՀ կառավարության 2020թ. ապրիլի 23-ի №638-Լ որոշման հավելված 2-ով նախատեսվում էր, որ 2021թ. առաջին կիսամյակում ՀՀ ՆԳՆ-ն Երևանի պարեկային ծառայության համար ձեռք է բերելու մեքենաներ: Հավելված 2-ում սահմանվել էր բարեփոխումների ռազմավարության 2020-22թթ. գործողությունների ծրագիրը: Հետագա տարիների համար գործողությունների ծրագրեր առկա չեն, ինչը նշանակում է ՀՀ ՆԳՆ-ն բավական մեծ լիազորություններ ուներ հետագա գործողությունների հարցում:

ՀՀ կառավարությունն իր 2021թ. դեկտեմբերի 23-ի №2121-Ն որոշման հավելված 10-ով հաստատել է 2022թ. իրականացվող գնումների պլանը: ՀՀ ՆԳՆ 2022թ. գնումների պլանն ունեցել է 1103 տող և նախատեսել է 16.0 մլրդ դրամի գնում: Պլանի excel ֆայլի 12951 և 12952 տողերի համաձայն ՀՀ ոստիկանությունը պլանավորել է 2,153,900.0 հազար դրամով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգով ձեռք բերել 140 մեքենա (աղյուսակ Հ1):

Աղյուսակ Հ1. Ոստիկանական մեքենաների ձեռքբերումը ՀՀ կառավարության հաստատած գնումների պլանի համաձայն

Կոդը	Անվանումը	Գնման ձևը	Չափման միավորը	Միավորի գինը	Քանակը	Գումարը (հազար դրամ)
34111240-1	ոստիկանական մեքենաներ	ԷԱ	հատ	12,885,000.0	70.0	901,950.0
34111240-2	ոստիկանական մեքենաներ	ԷԱ	հատ	17,885,000.0	70.0	1,241,950.0

Աղբյուր. ՀՀ կառավարության 2021թ. դեկտեմբերի 23-ի №2121-Ն որոշման հավելված 10

Armeps համակարգում առկա 2022թ. գնումների պլանի համաձայն (աղյուսակ Հ2) ՆԳՆ-ն նախատեսել է ձեռք բերել 315 ոստիկանական մեքենա, որոնցից 140-ը ԷԱ, 175-ը՝ ՄԱ ընթացակարգով: 175 մեքենայի ձեռքբերումը գնումների պլան է մուտքագրվել 2022թ. հուլիսի 25-ին:

Աղյուսակ Հ2. Ոստիկանական մեքենաների ձեռքբերման համար վերանայված գնումների պլանով նախատեսված ցուցանիշները

	ԳՄԱ կոդ	Ընթացակարգ	Քանակը (հատ)	Միավորի գինը (դրամ)	Ընդամեն գումար (դրամ)	Պլանի փոփոխման ամսաթիվը
1	34111240/509	ԷԱ	70	-	1,314,005,000	Մարտի 18
2	34111240/510	ԷԱ	70	-	1,129,800,000	Մարտի 18
3	34111240/16	ՄԱ	130	18,400,000.0	2,392,000,000	Հուլիսի 25
4	34111240/15	ՄԱ	45	15,900,000.0	715,500,000	Հուլիսի 25

Աղբյուր. Armeps

2022թ. մարտի 18-ին և հուլիսի 25-ին գնումների պլանը ենթարկվել է փոփոխության: Եթե ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված պլանով նախատեսվում էր ձեռք բերել 70 մեքենա, յուրաքանչյուրը 12,885,000.0 դրամով, կամ ընդամենը 901,950,000.0 դրամով և 70 այլ մեքենա, յուրաքանչյուրը 17,885,000.0 դրամով, կամ ընդամենը 1,241,950,000.0 դրամ, ապա Armeps համակարգում այլևս միավորի գին նշված չէր, իսկ մեքենաների երկու խմբաքանակների ձեռքբերման համար նախատեսվում էր 1,314,005,000 և 1,129,800,000, կամ ՀՀ կառավարության որոշմամբ նախատեսվածից 289,905,000 դրամով ավել:

Մեքենաների առաջին խմբաքանակը ձեռք բերելու նպատակով, ինչպես և նախատեսվում էր, ՀՀ ՆԳՆ-ն 2022թ. հունվարի 11-ին կազմակերպել է «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-43-2022-ԱՎՏՈ» ծածկագրով ԷԱ:[67] ՀՀ ՆԳՆ-ն նախատեսում էր ձեռք բերել սեղան և ամենագնաց մեքենաներ (աղյուսակ Հ3): Երկու տեսակի մեքենաների փոխանցման տուփը պետք է լիներ ավտոմատ, ոչ պակաս 5 աստիճան: Մեքենաները պետք է երաշխավորված լինեին 36 ամիս կամ 150,000.0 կմ:

[67] «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-43-2022-ԱՎՏՈ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի տվյալները հասանելի են https://eauction.armeps.am/hy/public/tender_details/tid/16183/ հղումով:

Աղյուսակ Հ3. ԷԱ ընթացակարգով ձեռք բերվելիք մեքենաների տեխնիկական բնութագրերի մի քանի հիմնական տվյալները

	Սեդան	**Ամենագնաց**
Մեքենաների քանակը	70	70
Երկարություն (մմ)	4600-5050	4590-5105
Լայնություն (մմ)	1815-1910	1820-2175
Բարձրություն (մմ)	1425-1490	1650-1855
Քաշը (կգ)	1280	1650
Վառելիքի ծախսը 100կմ ոչ ավելի (լիտր)	15	18
Աշխատանքային ծավալը (լիտր)	1.6-3.6	2.0-3.6
Ձիաուժը, ոչ պակաս	145	145
Փոխանցման տուփը	Ավտոմատ, ոչ պակաս 5 աստիճան	
Արագացումը (կմ/ժ-վ)	7.5-12	8-12
Անվադողերի չափսերը	R 16-17	R 17-18
Բեռնատարողությունը, ոչ պակաս (կգ)	400	400
Բեռնախցիկի ծավալը (լիտր)	400	400
Բակի տարողությունը (լիտր)	45	50
Արտադրության տարեթիվը	2022	2022
Հրապարակման օր	24 դեկտեմբերի 2021թ.	
Հայտերի ընդունման վերջին օր	10 հունվարի 2022թ.	
Հակադարձ աճուրդ	11 հունվարի 2022թ.	
Մատակարարման ժամկետ	Ոչ ուշ քան 2022թ մարտի 1-ը	

Աղբյուր. ԷԱ փաստաթղթեր

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ չնայած համավարակի ընթացքում լոգիստիկ շղթաների խափանմամբ պայմանավորված մատակարարումների դժվարություններին, հայկական շուկայի համար նման մեծ քանակի՝ 140 մեքենաների մատակարարման համար ՀՀ ոստիկանությունը 49 օր էր նախատեսում: Հանրության մի մասի մոտ առկա է կարծիք, որ «Տոյոտա Երևան» ՍՊԸ-ն նախօրոք իմացել է, որ առաջիկայում ՀՀ ՆԳՆ-ն հայտարարելու է ավտոմեքենաների ձեռքբերման վերաբերյալ և նախապատրաստվելու համար ժամանակ է ունեցել:

Էլեկտրոնային աճուրդի ժամանակ հայտ է ներկայացրել միայն «Տոյոտա Երևան» ՍՊԸ-ն (պատկեր Հ1):

Պատկեր Հ1. ՀՀ ՆԳՆ կողմից 2022թ. հունվարի 11-ին կազմակերպված «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-43-2022-ԱՎՏՈ» ծածկագրով ԷԱ էջի տեսաներածումը





Աղբյուր. e-AUCTION

ԷԱ արդյունքներով ՀՀ ոստիկանությունը «Տոյոտա Երևան» ՍՊԸ-ի հետ կնքել է ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-43-2022-ԱՎՏՈ-1 պայմանագիր: Այդ պայմանագրի շրջանակներում 2022թ. փետրվարի 2-ին կնքած համաձայնագիր №1-ի հավելված 1-ով (պատկեր Հ2) նախատեսվել է, որ ՀՀ ոստիկանությունը 34111240/509 և 34111240/510 ծածկագրերով՝ համապատասխանաբար «Տոյոտա ՌԱՎ4» և «Տոյոտա Քեմրի» 50-ական մեքենաներից յուրաքանչյուրի համար «Տոյոտա Երևան» ՍՊԸ-ին կվճարի

համապատասխանաբար 18,771,428.57 և 16,140,000.0, կամ համապատասխանաբար 886,428.57 դրամով և 3,255,000.0 դրամով ավելի, քան նախատեսված էր ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված գնումների պլանով: Երկու խմբաքանակների դիմաց վճարվելիք գումարների մեծությունները համապատասխանաբար կազմել են 807,000,000.0 դրամ և 928,571,428.5 դրամ: Նույն համաձայնագրի հավելված 2-ով նախատեսվել է, որ ամբողջ գումարը ՀՀ ՆԳՆ-ն «Տոյոտա Երևան» ՍՊԸ-ին կփոխանցի 2022թ. փետրվարին: «Տոյոտա Երևան» ՍՊԸ-ն պարտավորվել է մեքենաները մատակարարել համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց 20 օր հետո, բայց ոչ ուշ քան մինչև 2022թ. մարտի 1-ը:

«Տոյոտա ՌԱՎ4» և «Տոյոտա Քեմրի» 50-ական մեքենաներից բաղկացած այս խմբաքանակը մատակարարելու համար համաձայնագիր №1-ը ստորագրելու օրվանից (փետրվարի 2) մինչև մատակարարման վերջնաժամկետը (մարտի 1) «Տոյոտա Երևան» ՍՊԸ-ն ուներ 27 օր :

Պատկեր Հ2. ՀՀ ՆԳՆ և «Տոյոտա Երևան» ՍՊԸ-ի միջև կնքված ԷԱՃԱՊՁԲ-43-2022-ԱՎՏՈ-1 պայմանագրի 2022թ. փետրվարի 2-ին կնքված համաձայնագիր №1-ի և հավելվածների պատճեները



ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

N ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-43-2022-ԱՎՏՈ-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան «02» 02 2022թ.

ՀՀ ոստիկանությունը, ի դեմս ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Վ. Մովսիսյանի, որը գործում է ոստիկանության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ "Գնորդ"), մի կողմից, և «Տոյոտա Երևան» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Գզիրայանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ «Ճանաչող»), հիմք ընդունելով 13.01.2022թ.-ին կնքված ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-43-2022-ԱՎՏՈ-1 գնման "Պայմանագրի /այսուհետև՝ "Պայմանագիր" 8.5 և 8.15 կետերը, փոխադարձ համաձայնության կնքեցին սույն Համաձայնագիրը /այսուհետև՝ Համաձայնագիր/ հետևյալ մասին.

1.Համաձայնագրի առարկան, գինը, վճարման կարգը և գործողության ժամկետը

1.1 Սույն Համաձայնագրով Կողմերը համաձայնության եկան և հաստատեցին ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-43-2022-ԱՎՏՈ-1 ծածկագրով գնման պայմանագրի 3.1 կետով սահմանված 2 443 800 000 /Երկու միլիարդ չորս հարյուր քառասուներեք միլիոնութ հարյուր հազար/ ՀՀ դրամ գումարից հատանուն 1 745 571 428.5 / մեկ միլիարդ յոթ հարյուր քառասունհինգ միլիոն հինգ հարյուր յոթսուն հազար չորս հարյուր քսանութ ամբողջ հինգ դրամ/ ՀՀ դրամը, որի մատակարարումը կիրականացվի վաճառողի կողմից ցուցակ 1-ում նշված Հավելված 1-ին համաձայնագրման, իսկ վճարումը Գնորդի կողմից կիրականացվի սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 2-ին համաձայնագրմամբ: Գումարը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը: Մնացած ավտոմեքենաների վճարումը կիրականացվի ֆինանսական միջոցներ նախատեսվելիս հետո՝ բացառյալ համաձայնագիր կնքելու միջոցով: ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-43-2022-ԱՎՏՈ-1 ծածկագրով գնման պայմանագրի 90001102947 հաշվեհամարը և 01840082 ՀՎՀՀ-ն փոփոխվել հետևյալ 90001037000 հաշվեհամարով և 01533334 ՀՎՀՀ-ով:

1.2 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չշրջված գնման "Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, ապրանքի մատակարարումը, հանձնումն-ընդունումն, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն հանձնաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնության ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է (3) էջից, կնքվում է հարթուն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարաբերավարժանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

2.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ԿԱՀ ոստիկանությունը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ
ՀՀ ոստիկանություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
հ/հ 900011037000
ՀՎՀՀ 01533334
հեռ. 59-68-57
էլ. փոստ: policety.gnumner@mail.ru
Վ. Մովսիսյան
/ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
«Տոյոտա Երևան» ՍՊԸ
ք. Երևան, Բաբրոնի փող. 3
«ՀՀԿԲ-ՀԱՅԱՍՏԱՆ, ԲԸԱԲ» ՓԲԸ
հ/հ 16062005562600
ՀՎՀՀ 01557589
հեռ. 010 77-70-10
էլ. փոստ: info@toyota.am
Վ. Գզիրայան
(ստորագրություն) տնօրեն
Կ.Տ.

Հավելված N 1
«02» 02 2022թ.
ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-43-2022-ԱՎՏՈ-1 ծածկագրով գնման պայմանագրի թիվ 1 համաձայնագրի

Ապրանքի								Մատակարարման		
Իրավիրով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջոցային ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշան, մակնիշը և արտադրողի անվանումը **	չափման միավորը	միավոր գինը/ ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը***
1	34111240/510	Ոստիկանական մեքենաներ	Տոյոտա Տոյոտա Քեմրի Տոյոտա Մոթորս	հատ	16 140 000	807 000 000	50	Ք. Երևան Իսակով թ 7	50	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց 20 օր հետո, բայց ոչ ուշ քան 01.03.2022թ.
2	34111240/509	Ոստիկանական մեքենաներ	Տոյոտա Տոյոտա ՌԱՎ4 Տոյոտա Մոթորս	հատ	18 771 428.57	938 571 428.5	50	Ք. Երևան Իսակով թ 7	50	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց 20 օր հետո, բայց ոչ ուշ քան 01.03.2022թ.

ԳՆՈՐԴ
ՀՀ ոստիկանություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
հ/հ 900011037000
ՀՎՀՀ 01533334
հեռ. 59-68-57
էլ. փոստ: policety.gnumner@mail.ru
Վ. Մովսիսյան
/ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
«Տոյոտա Երևան» ՍՊԸ
ք. Երևան, Բաբրոնի փող. 3
«ՀՀԿԲ-ՀԱՅԱՍՏԱՆ, ԲԸԱԲ» ՓԲԸ
հ/հ 16062005562600
ՀՎՀՀ 01557589
հեռ. 010 77-70-10
էլ. փոստ: info@toyota.am
Վ. Գզիրայան
(ստորագրություն) տնօրեն
Կ.Տ.

Հավելված N 2
«08» 08 2022թ.
ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-43-2022-ԱՎՏՈ-1 ծածկագրով գնման պայմանագրի թիվ 1 համաձայնագրի
Վճարման ժամանակացույց

հերթական համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՀՄ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, ՀՀ դրամ												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	34111240/510	Ոստիկանական մեքենաներ		807 000 000	807 000 000	807 000 000	807 000 000	807 000 000	807 000 000	807 000 000	807 000 000	807 000 000	807 000 000	807 000 000	807 000 000
2	34111240/509	Ոստիկանական մեքենաներ		938 571 428.5	938 571 428.5	938 571 428.5	938 571 428.5	938 571 428.5	938 571 428.5	938 571 428.5	938 571 428.5	938 571 428.5	938 571 428.5	938 571 428.5	938 571 428.5

ԳՆՈՐԴ
ՀՀ ոստիկանություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործընթացների վարչություն
հ/հ 90001037000
ՀՎՀՀ 01533334
հեռ. 59-68-57
էլ. փոստ: policetv.gnumner@mail.ru
Վ. Մուլինյան
/ՀՀ ոստիկանության տեսչի փոխտեղակալ/
(առորագրություն)

ՎԱՃԱՌՈՂ
«Տոյոտա Երևան» ՍՊԸ
ք. Երևան, Բաղրամյան փող. 3
«ԱՎՏՈ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ
հ/հ 16062005562600
ՀՎՀՀ 01557589
հեռ. 010 77-70-10
էլ. փոստ info@toyota.am
Ա. Գզրարյան
(առորագրություն) տնօրեն
Կ.Տ

ԷԱՃԱՊՁԲ-43-2022-ԱՎՏՈ-1 պայմանագրի 2022թ. մարտի 28-ին կնքած համաձայնագիր №2-ի հավելված 2-ի (պատկեր Հ3) համաձայն, ՀՀ ՆԳՆ-ն մեքենաների երկրորդ խմբաքանակի, 20-ական «Տոյոտա ՌԱՎ4»-երի և «Տոյոտա Քեմրի»-երի դիմաց համապատասխանաբար 322,800,000.0 դրամ և 375,428,571.4 դրամ «Տոյոտա Երևան» ՍՊԸ-ին պետք է փոխանցեր 2022թ. մարտին, իսկ «Տոյոտա Երևան» ՍՊԸ-ն պետք է մեքենաները մատակարարեր համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20 օրվա ընթացքում:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ համաձայնագիր №2-ով ՀՀ ՆԳՆ-ն փոխել է գնման հայտարարության մեջ իր կողմից նշված մատակարարման ժամկետը: ***Չպետք է բացառել, որ որոշ մատակարարներ չեն մասնակցել ԷԱ-ին, ենթադրելով որ չեն կարող այդպիսի կարճ ժամանակահատվածում մատակարարել մեքենաների այդպիսի մեծ խմբաքանակ: Եթե մնացած մատակարարներն իմանային, որ հնարավոր է փոխել մատակարարման ժամկետները և գրեթե երկու ամսով հետաձգել մեքենաների մի մասի մատակարարումը, կարող էին որոշել մասնակցել ԷԱ-ին***:

Պատկեր Հ3. ՀՀ ՆԳՆ և «Տոյոտա Երևան» ՍՊԸ-ի միջև կնքված ԷԱՃԱՊՁԲ-43-2022-ԱՎՏՈ-1 պայմանագրի 2022թ. մարտի 28-ին կնքված համաձայնագիր №2-ի և հավելվածների պատճենները



ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

N ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-43-2022-ԱՎՏՈ-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան «08» 03 2022թ.

ՀՀ ոստիկանությունը, ի դեմս ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Վ.Մոսիսյանի, որը գործում է ոստիկանության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվեր), մի կողմից, և «Տոյոտա Երևան» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Վ. Գզարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Վաճառող), հետը ընդունելով 13.01.2022թ.-ին կնքված ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-43-2022-ԱՎՏՈ-1 գնման Պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր՝ 8.5 և 8.10 կետերը, փոխադարձ համաձայնությամբ վերցնելու տալիս Համաձայնագիրը /այսուհետև՝ Համաձայնագիր՝ հետևյալի մասին.

1.Համաձայնագրի առարկան, գինը, վճարման կարգը և գործողության ժամկետը

1.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 17.03.2022 թվականի թիվ 337-Ն որոշումը՝ սույն Համաձայնագրով կողմերը համաձայնություն են տալիս, որ Պատվիրատուն **ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-43-2022-ԱՎՏՈ-1** հանձնագրով գնման պայմանագրով տրանսպորտային միջոցների մասնագիտացված ժամանակ սահմանված պայմանագրի կողմերի իրավունքների և պարտականությունների ուժի մեջ մտնելու մասին համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից հետո 20 օր, և **ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-43-2022-ԱՎՏՈ-1** հանձնագրով գնման պայմանագրի 3.1 կետով սահմանված **2 443 800 000** /երկու միլիարդ չորս հարյուր քառասուներեք միլիոն ութ հարյուր հազար/ ՀՀ դրամ գումարից հատուցել **698 226 571.40** /վեց հարյուր իննսունութ միլիոն երկու հարյուր քսանվեց հազար հինգ հարյուր յոթսունմեկ/ դրամ, որի մասնակցությամբ վիրավորված կողմերի վնասները կողմերի թիվ 1-ին հանձնաժողովան, իսկ վնասները Գնորդի կողմից վիրավորվածի տուն համաձայնագրի անհատների մասը կազմող Հավելված 2-ին հանձնաժողովան: Վճռանը նկարագրում է իրադարձը, տուժողը և ՀՀ ցամաքային տրանսպորտի սահմանված գնի վճարները, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը: **ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-43-2022-ԱՎՏՈ-1** հանձնագրով գնման պայմանագրի 1406200552600 հաշվեհամարով փոխանցվեն **157000366730010** հաշվեհամարով:

1.2 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չկրկնված գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, կողմերի իրավունքները ու պարտականությունները, առաքման ժամանակաշրջանը, հանձնման-ընդունման, կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերությունները թոշակում են անփոփոխ:

2.3 Սույն հանձնաժողովի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնության չեկը վեճերը դրանցում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է (3) երեք, մեկական էջերով թվով երկու բնօրինակից, որոնց ունեն հավասարաժեք իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

2.5 Սույն Համաձայնագրով նախատեսված Պետրդ իրավունքների ու պարտականությունները իրականացնում է ՀՀ ոստիկանությունը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ
ՀՀ ոստիկանություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 90001037000
ՀՎՀՀ 01533334
հեռ. 59-68-57
Էլ. Փոստ: policety.gnumner@mail.ru
Վ. Մոսիսյան
/ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/
(ստորագրություն)

ՎԱՃԱՌՈՂ
«Տոյոտա Երևան» ՍՊԸ
ք. Երևան, Բայրոնի փող. 3
«ԱԱԵՐԴԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 157000366730010
ՀՎՀՀ 01557589
հեռ. 010 77-70-10
Էլ. փոստ: info@toyota.am
Վ. Գզարյան
(ստորագրություն) տնօրեն



Հավելված N 1
«08» 03 2022թ.
ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-43-2022-ԱՎՏՈ-1 ծածկագրով գնման պայմանագրի թիվ 1 համաձայնագրի

Իրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը **	չափման միավորը	միավոր գին/ՀՀ դրամ	ընդհանուր գին/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
								հասցեն	ներկա քանակը	ժամկետը***
1	34111240/510	Ոստիկանական մեքենաներ	Տոյոտա Տոյոտա Քեմրի Տոյոտա Մորդոր	հատ	16 140 000	322 800 000	20	Ք. Երևան Իսակով թ 7	20	Համաձայնագրին ուժի մեջ մտնելուց 20 օր
2	34111240/509	Ոստիկանական մեքենաներ	Տոյոտա Տոյոտա ՌԱՎ4 Տոյոտա Մորդոր	հատ	18 771 428.57	375 428 571.4	20	Ք. Երևան Իսակով թ 7	20	Համաձայնագրին ուժի մեջ մտնելուց 20 օր

ԳՆՈՐԴ
ՀՀ ոստիկանություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 90001037000
ՀՎՀՀ 01533334
հեռ. 59-68-57
Էլ. Փոստ: policety.gnumner@mail.ru
Վ. Մոսիսյան
/ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/
(ստորագրություն)

ՎԱՃԱՌՈՂ
«Տոյոտա Երևան» ՍՊԸ
ք. Երևան, Բայրոնի փող. 3
«ԱԱԵՐԴԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 157000366730010
ՀՎՀՀ 01557589
հեռ. 010 77-70-10
Էլ. փոստ: info@toyota.am
Վ. Գզարյան
(ստորագրություն) տնօրեն

Հավելված N 2
«08» 03 2022թ.
ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-43-2022-ԱՎՏՈ-1 ծածկագրով գնման պայմանագրի թիվ 1 համաձայնագրի
Վճարման ժամանակացույց

Իրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքի ՀՀ դրամ												
			դինամիկ վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	34111240/510	Ոստիկանական մեքենաներ			322 800 000	322 800 000	322 800 000	322 800 000	322 800 000	322 800 000	322 800 000	322 800 000	322 800 000	322 800 000	322 800 000
2	34111240/509	Ոստիկանական մեքենաներ			375 428 571.4	375 428 571.4	375 428 571.4	375 428 571.4	375 428 571.4	375 428 571.4	375 428 571.4	375 428 571.4	375 428 571.4	375 428 571.4	375 428 571.4

ԳՆՈՐԴ
ՀՀ ոստիկանություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 90001037000
ՀՎՀՀ 01533334
հեռ. 59-68-57
Էլ. Փոստ: policety.gnumner@mail.ru
Վ. Մոսիսյան
/ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/
(ստորագրություն)

ՎԱՃԱՌՈՂ
«Տոյոտա Երևան» ՍՊԸ
ք. Երևան, Բայրոնի փող. 3
«ԱԱԵՐԴԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 157000366730010
ՀՎՀՀ 01557589
հեռ. 010 77-70-10
Էլ. փոստ: info@toyota.am
Վ. Գզարյան
(ստորագրություն) տնօրեն

2022թ. հունվարին կնքված պայմանագրի հիմնական ցուցանիշները ներկայացված են աղյուսակ Հ4-ում:

Աղյուսակ Հ4. «Տոյոտա Երևան» ՍՊԸ-ի հետ էԱ ընթացակարգի կիրառման արդյունքում ՀՀ ՆԳՆ կնքած ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-43-2022-ԱՎՏՈ-1 (11 հունվարի 2022թ.) պայմանագրով նախատեսված մեծություններ

	Քանակ	Միավորի գինը (դրամ)	Ընդհանուր գինը	ԳՄԱ կոդ
1	70	16,140,000.00	1,129,800,000.0	34111240/510
2	70	18,771,428.57	1,314,000,000.0	34111240/509

Աղբյուր. Armeps

«Տոյոտա Երևան» ՍՊԸ-ի հետ ՀՀ ՆԳՆ կնքած պայմանագրի փետրվարի 8-ի և մարտի 28 համաձայնագրերով ձեռք բերված խմբաքանակների ցուցանիշներն ամփոփված են համապատասխանաբար աղյուսակ Հ5-ում և աղյուսակ Հ6-ում:

Աղյուսակ Հ5. «Տոյոտա Երևան» ՍՊԸ-ի հետ ԷԱՃ ընթացակարգի կիրառման արդյունքում ՀՀ ՆԳՆ կնքած ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-43-2022-ԱՎՏՈ-1 պայմանագրի Համաձայնագիր 1-ով (8 փետրվարի 2022թ.) նախատեսված մեծություններ

	Քանակ	Միավորի գինը (դրամ)	Ընդհանուր գինը	ԳՄԱ կոդ
1	50	16,140,000.00	807,000,000.0	34111240/510
2	50	18,771,428.57	938,571,428.5	34111240/509

Աղբյուր. Armeps

Աղյուսակ Հ6. «Տոյոտա Երևան» ՍՊԸ-ի հետ ԷԱ ընթացակարգի կիրառման արդյունքում ՀՀ ՆԳՆ կնքած ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-43-2022-ԱՎՏՈ-1 պայմանագրի Համաձայնագիր 2-ով (28 մարտի 2022թ.) նախատեսված մեծություններ

	Քանակ	Միավորի գինը (դրամ)	Ընդհանուր գինը	ԳՄԱ կոդ
1	20	16,140,000.00	322,800,000.0	34111240/510
2	20	18,771,428.57	375,428,571.4	34111240/509

Աղբյուր. Armeps

Երկու համաձայնագրերի արդյունքում ՀՀ ՆԳՆ-ն 70 «Տոյոտա Քեմրի»-ի դիմաց «Տոյոտա Երևան» ՍՊԸ-ին վճարել է 1,129,800,000 դրամ (= 807,000,000.0 + 322,800,000.0), իսկ 70 «Տոյոտա ՌԱՎ4»-ի դիմաց 1,313,999,999.9 (= 938,571,428.5 + 375,428,571.4), կամ ընդամենը 2,443,799,999.9 դրամ: ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված գնումների պլանով նախատեսվել է 2,153,900,000.0 դրամ (տես աղյուսակ Հ1): Պետական բյուջեով նախատեսված միջոցները 289.9 մլն դրամով պակաս էին ԷԱ արդյունքում ձևավորված գնով մեքենաները ձեռք բերելու համար անհրաժեշտ գումարից:

2022թ. մարտի 17-ի իր №337-Ն որոշմամբ[68] ՀՀ կառավարությունն ի թիվս այլ միջոցների 289.9 մն դրամ է հատկացրել ՀՀ ՆԳՆ կողմից մեքենաները ձեռք բերելու

[68] ՀՀ կառավարության 2022թ. մարտի 17-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում և փոփոխություններ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի №2121-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը գումար հատկացնելու մասին» №337-Ն որոշում: Հասանելի է https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=161103 էջում: Որոշման հիմնավորումները

համար չբավարարող գումարը լրացնելու համար և թույլատրել է հետաձգել տրանսպորտային միջոցների մատակարարման ժամկետը՝ պայմանագրով սահմանված 2022թ. մարտի 1-ի փոխարեն՝ սահմանելով պայմանագրի կողմերի իրավունքները և պարտականությունները ուժի մեջ մտնելու մասին համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից հետո 20 օր:

Հաշվեքննիչ պալատն արձանագրել է, որ «Տոյոտա Երևան» ՍՊԸ-ի հետ ՀՀ ՆԳՆ ոստիկանության 2022թ. հունվարի 13-ին կնքած «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-43-2022–ԱՎՏՈ-1» պայմանագրի դեպքում «Տոյոտա Երևան» ՍՊԸ-ն ներկայացված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը լրացրել է ոչ լիարժեք [69]:

ՀՀ հաշվեքննիչ պալատն արձանագրել է, որ «Գնման վերաբերյալ հրապարակված հրավերում թե՛ Քեմրի և թե՛ Ռավ-4 ավտոմեքենաների համար զետեղված տեխնիկական բնութագրերում սահմանվել է պահանջ, որ մեքենաների շարժիչները չպետք է ունենան հավելումներ /TURBO, KOMPRESOR, GDI/, սակայն հաշվեքննությամբ ուսումնասիրված արտադրող գործարանի https://global.toyota/ պաշտոնական կայքում զետեղված տեղեկատվության համաձայն տվյալ մեքենաների վրա տեղադրված A25A-FKS տեսակի շարժիչները սնուցվում են Toyota D-4S համակարգի միջոցով, որը իր հերթին միաժամանակ ներառում է բենզինի ուղղակի ներարկում (Direct Injection), այսինքն մատակարարված թվով 140 մեքենաների շարժիչները ըստ էության չեն համապատասխանում գնման հրավերի պահանջին: Պայմանագրի կատարման արդյունքում մատակարարված թվով 70 Տոյոտա Ռավ-4 մեքենաների CMR փաստաթղթերում նշված յուրաքանչյուրի քաշը պակաս է գնման պայմանագրով սահմանված քաշից 146.25 կգ-ով, որի պատճառով թվով 70 Ռավ-4 մեքենաները չեն համապատասխանում գնման պայմանագրի տեխնիկական բնութագրի պահանջին:»

2022թ. եզրակացության մեջ Հաշվեքննիչ պալատն արձանագրել է, որ ՀՀ ոստիկանությունն ընդունել է տեխնիկական պահանջներին չհապատասխանող մեքենաներ. «Սակայն վերոնշված անհամապատասխանությունները չեն արձանագրվել Ոստիկանության համապատասխան պաշտոնատար անձանց կողմից, որի արդյունքում ընդունվել է պայմանագրի տեխնիկական բնութագրի որոշակի պահանջին չհամապատասխանող ապրանքներ, ինչի արդյունքում խախտվել են «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-43-2022–ԱՎՏՈ-1» պայմանագրի 1.1 կետի, 2.4.4 կետի, 5.3 կետի

հասանելի են ՀՀ կառավարության 2022թ. մարտի 17-ի նիստի օրակարգում, որը հասանելի է https://e-gov.am/sessions/archive/2022/03/17/ էջում:

[69] ՀՀ հաշվեքննիչ պալատի 2023թ. ապրիլի 26-ի թիվ 69-Ա որոշման հավելված. «Ընթացիկ եզրակացություն Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանությունում 2022 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ»: Հասանելի է https://armsai.am/hy/current-conclusions էջում:

պահանջները, որոնց վրա հասնելու հետևանքով պետք է պատասխանատվության միջոց կիրառվեր մատակարարի նկատմամբ պայմանագրի 6.3 կետով սահմանվածի համապատասխան, որը չի կատարվել: Տվյալ անհամապատասխանությունների արձանագրումից հետո Ոստիկանությունը հայտնել է Հաշվեքննիչ պալատին, որ ծառայողական քննությամբ ձեռք են բերվել առերևույթ հանցագործության վերաբերալ փաստական տվյալներ և փաստաթղթերը 16.02.2023թ.-ին ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազություն»:

2022թ. հունվարի 26-ին Ոստիկանության և ՝ ՍՕՍ Սիսթեմս՝ ՍՊԸ միջև կնքվել է 145,320.0 հազ.դրամ ընդհանուր արժեքով ոստիկանական մեքենաներում 150 հատ «Grundig-Security» արտադրողի GD-CI-AT2505B մոդելի համացանցային տեսահսկող տեսախցիկներ տեղադրելու վերաբերյալ «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-22-ՏԵՍԱԽՑԻԿ-2022/ԿԿՏՎ» պայմանագիրը: Պայմանագրի տեխնիկական բնութագրի համաձայն տեսախցիկները պետք է ունենան մեքենաների պետհամարանիշները 300կմ/ժ արագությամբ շարժվելու դեպքում ճանաչելու կարողություն: Մատակարարը գրություն է ներկայացրել Ոստիկանություն, որ տվյալ տեսակի տեսախցիկները կարող են տարբերակել և ճանաչել պետհամարանիշները մինչև 400կմ/ժ արագության դեպքում: Սակայն, հաշվեքննության շրջանակներում իրականացված զննում և վերահաշվարկ ընթացակարգերի կատարման արդյունքում ՀՀ հաշվեքննիչ պալատն արձանագրել է, որ «մատակարարված ու տեղադրված GD-GI-AT2505B մոդելի տեսախցիկների և դրանց ծրագրային ապահովման տվյալները, ըստ դրանք արտադրող «Abetechs GmbH» (Գերմանիայի դաշնություն) ընկերության պաշտոնական կայքի (https://grundig-security.com/), հնարավորություն չեն ընձեռում պետհամարանիշների ճանաչումն իրականացնել պայմանագրով պահանջված՝ 300կմ/ժ արագությամբ շարժվելիս, քանի որ ըստ «Abetechs GmbH» ընկերության կայքում առակա տվյալների «Grundig Security» ապրանքանիշի ներքո ներկայացված մի շարք LPR (License Plate Recognition) համակարգի ծրագրերը թույլ են տալիս ճանաչել պետհամարանիշները մինչև 150կմ/ժ արագությամբ շարժվելու դեպքում (License plate recognition in real time up to 150 kmh/90 mph @25 fps)»:

ՀՀ հաշվեքննիչ պալատի աշխատակիցները Ոստիկանության աշխատակիցների հետ միասին վերարտադրել են հաշվեքննության օբյեկտի հսկողության գործընթացները: Արդյունքում արձանագրվել է, որ ՀՀ Լոռու և Շիրակի մարզերի պարեկային ծառայության մեքենաների մեջ տեղադրված GD-CI-AT2505B մոդելի տեսախցիկները դիմացի մեքենայի պետհամարանիշը կարող են ճանաչել առավելագույը 220-230կմ/ժ (110-115կմ/ժ հանդիպակաց շարժվելիս) արագության դեպքում, ինչը պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանվածից պակաս է

շուրջ 70կմ/ժ: Ոստիկանությունից Հաշվեքննիչ պալատին հայտնել են, որ արձանագրված թերությունների մասով կատարված ծառայողական քննության արդյունքում կազմված փաստաթղթերը 2022թ. օգոստոսի 22-ին ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազություն, որի հիմքով ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում 2022թ. օգոստոսի 27-ին նախաձեռնվել է քրեական վարույթ:

2022թ. փետրվարի 8-ին 450 ավտոմեքենաների mobile համակարգ (տեղադրումով) ձեռք բերելու նպատակով Ոստիկանությունը հայտարարել է «ՀՀ Ո ՀՄԱԱՊՁԲ-47-ՄՈԲԱՅԼ/2021/ՊԾ» ծածկագրով «Հրատապ մեկ անձ մրցույթ», որն իրականացվել է մեկ փուլով՝ Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով: «Ալիկանտե» ՍՊԸ-ին 2022թ. մարտի 15-ին առաջարկվել է կնքել 755,940.0 հազ. դրամ արժեքով, համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց 20 օր հետո պարեկային ավտոմոբիլներում 450 հատ համակարգի տեղադրման N ՀՀ Ո ՀՄԱԱՊՁԲ-47-ՄՈԲԱՅԼ/2021/ՊԾ պայմանագիր:

2022թ. մարտի 24-ին կնքվել է հատը 1,679.9 հազ. դրամով, 251,980.0 հազ. դրամ ընդհանուր արժեքով 150 հատ mobile համակարգ մինչև 2022թ. մարտի 31-ը տեղադրելու N1 համաձայնագիրը: Այնուհետև, կազմվել են ապրանքների մատակարարման-տեղադրման հանձնման-ընդունման 3 արձանագրություն (աղյուսակ Հ7):

Աղյուսակ Հ7. ՀՀ ՆԳՆ և «Ալիկանտե» ՍՊԸ-ի միջև կնքված հանձնման ընդունման N1- N3 արձանագրությունների հիմնական տվյալները

Արձանա-գրություն	**Օրը**	**mobile համակարգի քանակը**	**Տեղադրված mobile համակարգի արժեքը (հազ. դրամ)**
N1	մարտի 28	85	142,788.7
N2	մարտի 30	15	25,198.0
N3	մարտի 31	50	83,993.3
ԸՆԴԱՄԵՆԸ		**150**	**251,970.0**[70]

2022թ. նոյեմբերի 14-ին կնքվել է հատը 1,679.9 հազ. դրամով, 503,960.0 հազ. դրամ արժեքով 300 հատ mobile համակարգ մինչև 2022թ. դեկտեմբերի 20 տեղադրելու N2 համաձայնագիրը: 300 հատ mobile համակարգերի տեղադրման հետ կապված ՀՀ հաշվեքննիչ պալատի բացահայտումները ներկայացված են աղյուսակ Հ14-ից հետո:

[70] ՀՀ հաշվեքննիչ պալատի եզրակացության մեջ թվերի գումարը չի համընկնում ընդամենը տողի հետ

2022թ. մարտի 25-ին Ոստիկանության և «Տոյոտա Երևան» ՍՊԸ միջև կնքվել է 21,700.0 հազ. դրամ արժեքով «ՀՀ Ո ՄԱԱՊՁԲ-ՎԱՆԴԱԿ/2022» պայմանագիր, որի տեխնիկական բնութագրի համաձայն «Տոյոտա Երևան» ՍՊԸ-ն 140 Տոյոտա (Քեմրի և Ռավ-4) ավտոմեքենաների սրահների հետնամասը պետք է կահավորեր ընդհանուր 700մ² ճաղավանդակներով, 1մ² արժեքը 31.0 հազ. դրամ: ՀՀ հաշվեքննիչ պալատը պարզել է, որ ավտոմեքենաների տվյալ խմբի սրահներում տեղադրված ճաղավանդակների փաստացի չափսերը (մակերեսը) չեն գերազանցում 399մ², սակայն «Տոյոտա Երևան» ՍՊԸ-ն տեղադրված ճաղավանդակների համար Ոստիկանությանը վճարման է ներկայացրել 700մ² արժեք ներառող հաշիվ, որը վերջինիս կողմից ամբողջությամբ վճարվել է: Փաստացի կատարված աշխատանքի և փաստաթղթերով ներկայացված աշխատանքների ծավալների միջև շեղումը կազմել է շուրջ 301մ² (յուրաքանչյուր 1մ² 31.0 հազ. դրամ) անապրանք գործարք:

Գնահատող հանձնաժողովի 2021թ. դեկտեմբերի 24-ի «№1» որոշմամբ հաստատված Էլեկտրոնային աճուրդի մասին հայտարարությամբ հաստատված մեքենաների տեխնիկական բնութագրի և «Տոյոտա Երևան» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրերին կից տեխնիկական բնութագրերի համաձայն ձեռք բերված մեքենաների որոշ ցուցանիշներ ներկայացված են աղյուսակ Հ8-ում:

Աղյուսակ Հ8. ԷԱ ընթացակարգով ձեռք բերվելիք և ձեռք բերված մեքենաների տեխնիկական բնութագրերից մի քանի հիմնական տվյալները

	Սեդան	**Տոյոտա Քեմրի**	**Ամենագնաց**	**Տոյոտ ՌԱՎ4**
Երկարություն	4600-5050	4885	4590-5105	4600
Լայնություն	1815-1910	1840	1820-2175	1855
Բարձրություն	1425-1490	1455	1650-1855	1685
Անվային բազա				
Քաշը, ոչ պակա (կգ)	1280	1555	1650	1715
Վառելիքի ծախսը 100կմ, ոչ ավելի (լ)	15	15	18	18
Աշխատանքային ծավալը (լիտր)	1.6-3.6	2.487	2.0-3.6	2.487
Ձիաուժը, ոչ պակաս	145	200	145	199
Արագացումը (կմ/ժ-վ)	7.5-12	9-10	8-12	9-10
Անվադողերի չափսերը	R 16-17	215/55 R17	R 17-18	225/60 R 18
Փոխանցման տուփը	ավտոմատ ոչ պակաս 5 աստիճան	ավտոմատ 8 աստիճան	ավտոմատ ոչ պակաս 5 աստիճան	ավտոմատ 8 աստիճան
Երաշխիք	36 ամիս կամ 150000կմ	36 ամիս կամ 150000կմ	36 ամիս կամ 150000կմ	36 ամիս կամ 150000կմ
Միավորի գինը (դրամ)		16,140,000.0		18,771,428.57
Քանակը		70		70
Ընդհանուր գինը (դրամ)		1,129,800,000.0		1,314,000,000.0

Աղբյուր. e-AUCTION

2022թ. գարնանը պարզվել է, որ Արագածոտնի, Գեղարքունիքի, Կոտայքի և Տավուշի մարզերում նոր ձևավորվող պարեկային ծառայության ստորաբաժանումների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել մեքենաների ևս մեկ խմբաքանակ: Ապրիլին «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ն Ոստիկանության բարեփոխումների խորհրդի նիստի ժամանակ առաջարկել է ոստիկանության կարիքների համար ձեռք բերել էլեկտրոմոբիլներ և ներկայացրել է իր հաշվարկները (աղյուսակ Հ9):

Աղյուսակ Հ9. Ոստիկանության բարեփոխումների խորհրդի նիստի ժամանակ «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ի ներկայացրած մեքենաների ձեռքբերման այլընտրանքային տարբերակների հաշվարկները

ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆ	**Toyota Camry**	**Tesla model 3**	**Toyota Rav 4**	**Tesla model Y**	**Skoda enyak**	**Hyundai Kona**	**Volvo CX recharge**	**Volkswagen id.4**
Թափքը	**Sedan**	**Sedan**	**Mid-SUV**	**Mid-SUV**	**Mid-SUV**	**Small-SUV**	**Mid-SUV**	**Mid-SUV**
Ձիաուժ	200	262	199	325	204	136	402	170
Վառելիքի տեսակ	բենզին	ev	բենզին	ev	ev	ev	ev	Ev
Արժեք[71]	$33,070	$55,000	$38,401	$57,000	$43,000	$42,000	$55,000	$43,000
Արագացում [72]	9.5	5.2	8.5	3.7	8.6	9.7	4.7	9
Միջինը (լ/100կմ կամ ԿՎտ/100կմ)	13	23	14	15	26	13	20	25
Վառելիքի արժեքը[73]	$11.65	$1.76	$12.54	$1.15	$1.99	$0.99	$1.53	$1.91
Բենզինի հետ այլ լրաց. ծախսեր (100 կմ)	$2.20		$2.40					
Տարբերությունը Toyota-ի հետ		$21,930		$18,599	$4,599	$8,930	$16,599	$4,599
Տարբերությունը 100 հազար կմ-ի վրա		$12,087		$13,795	$12,954	$13,948	$13,413	$13,030
Գնի տարբերությունը կոմպենսացնող վազքը (կմ)		181,427		134,819	35,501	64,021	123,752	35,292

[71] Արժեք, առանց ԱԱՀ (ԱՄՆ դոլար)
[72] Արագացումը՝ վայրկյան 0-100 կմ/ժ
[73] Առանց հարկերի՝ 100 կմ

Անվային բազա (մմ)	2825	2875	2690	2890	2765	2600	2702	2771
Մարտկոցի տարո-ղություն (Կվտ/ժ)		75		75	77	64	67	84
Մարտկոցի լիցքի նվազագույն վազք՝ բոլոր սարքավորում-ներով (կմ)		217		333	200	300	210	236

Սակայն ՀՀ ՆԳՆ-ն անտեսել է այս առաջարկությունը և մայիսի 23-ին ավտոմեքենաների նոր խմբաքանակի ձեռքբերման մրցույթ է հայտարարել:

Աղյուսակ Հ10. 2022թ. մայիսի 23-ին հայտարարված մրցույթ ընթացակարգով ձեռք բերվելիք մեքենաների տեխնիկական բնութագրերից մի քանի հիմնական տվյալները

	Սեդան	**Ամենագնաց**
Երկարություն	4250-5050	4350-5105
Լայնություն	1750-1950	1800-2175
Բարձրություն	1400-1600	1600-1855
Անվային բազա, ոչ պակաս	2800	2690
Քաշը, ոչ պակաս (կգ)	1250	1400
Վառելիքի ծախսը 100կմ ոչ ավելի (լ)	15	18
Աշխատանքային ծավալը (լիտր)	2.0-3.6	2.4-3.6
Ձիաուժը, ոչ պակաս	180	180
Արագացումը (կմ/ժ-վ)	9.0	12.0
Անվադողերի չափսերը	R 16-17	R 17-18
Փոխանցման տուփը	Հիդրոմեխանիկական	Հիդրոմեխանիկական
Բեռնատարողությունը, ոչ պակաս (կգ)	400	400
Բեռնախցիկի ծավալը (լիտր)	-	-
Բակի տարողությունը (լիտր)	45	50
Արտադրության տարեթիվը	2022	2022
Երաշխիք	36 ամիս կամ 150000կմ	36 ամիս կամ 150000կմ
Քանակ	85	90

Աղբյուր. ՀՀ ՆԳՆ գրություն

2022թ. հունիսի 8-ի նիստի ժամանակ գնահատող հանձնաժողովը 2022թ. մայիսի 23-ին հայտարարված գնման ընթացակարգը համարել է չկայացած (պատկեր Հ4):

ՀՀ կառավարության 2022թ. հուլիսի 21-ին ներկայացված որոշման նախագծին կից ամփոփաթերթի համաձայն, մատակարարվելիք տրանսպորտային միջոցների տեխնիկական բնութագրով սահմանված մատակարարման ժամկետները ՀՀ ոստիկանությունը 2022թ. հունիսի 13-ին ***ևս մեկ անգամ*** քննարկել է ավտոներկրող ընկերությունների ասոցիացիայի ղեկավարի, «Կապիտալ մոթորս /Կիա/», «Մեգնա /Ռենո, Միցուբիշի, Շևրոլետ/», «Տոյոտա Երևան/Տոյոտա, Լեքսուս/», «Մագաս Ինվեստ /Հյունդայի/», «Ֆորա /Ֆորդ, Լենդ Ռովեր, Յագուար/» , «Ֆայն Քարս /Դոջ/», «Չեխ Ավտո/Շկոդա/», «Ավանգարդ Մոթորս /Մերսեդես/», «Մուլտի Մոթորս /ԲՄՎ, Գազել, Օպել/» , «Սլավ Մոթորս /Աուդի/», «Սքայ Մոթորս /Մազդա, MG/», «ՋԱԿ Մոթորս», «Կարկոմ Ավտո» ընկերությունների ներկայացուցիչների հետ:

ՀՀ կառավարության 2022թ. հուլիսի 21-ին ներկայացված նախագծի որոշման հիմնավորումներում ՀՀ ոստիկանությունը նշել է, որ «Արագածոտնի, Գեղարքունիքի, Կոտայքի և Տավուշի մարզերում նոր ձևավորվող պարեկային ծառայության ստորաբաժանումների համար ավտոտրանսպորտային միջոցներ ձեռք բերելու համար դեռևս ընթացիկ տարվա մայիսի 23-ին հայտարարվել է ոստիկանական ավտոմեքենաների ձեռք բերման գնման մրցութային ընթացակարգ (ծածկագիր՝ ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-51-ԱՎՏՈ-2022)»: Պատկեր Հ4-ում ներկայացրած արձանագրության պատճենի համաձայն հայտարարվել է ոչ թե ***մրցույթ***, այլ էլեկտրոնային աճուրդ:

Պատկեր Հ4. Էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման 2022թ. հունիսի 8-ի նիստի արձանագրության պատճենը

Արձանագրություն N 2

ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-51-ԱՎՏՈ-2022 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

ք.Երևան ***« 08» «06» 2022թ.***

Մասնակցում էին՝

- ՀՀ ոստիկանության ՏՎ ավտոտնտեսության պետի տեղակալ, ոստիկանության մայոր Հ. Գալստյան (հանձնաժողովի նախագահ),
- ՀՀ ոստիկանության ՏՎ ավտոտնտեսության գլխավոր ճարտարագետ Մ. Վահրադյան (գնահատող անդամ),
- ՀՀ ոստիկանության ՏՎ ավտոտնտեսության առաջատար մասնագետ Գ. Եղիազարյան (գնահատող անդամ),
- ՀՀ ոստիկանության ՏՎ գնումների համակարգման բաժնի պետի տեղակալ, ոստիկանության ավագ լեյտենանտ Ա. Աբասյան (հանձնաժողովի քարտուղար):

ՀՀ ոստիկանության կարիքների համար ***ոստիկանական մեքենաների*** ձեռքբերման նպատակով հայտարարված ***ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-51-ԱՎՏՈ-2022*** ծածկագրով ընթացակարգի բացման նիստում արձանագրվեց, որ ընթացակարգին մասնակցության հայտեր չեն եղել: ''Գնումների մասին '' ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն, այն է, գնման ընթացակարգը համարվում է ***չկայացած***, քանի որ ոչ մի հայտ չի ներկայացվել:

Նախագահ՝

ոստ. մայոր Հ. Գալստյան

Հայտը գնահատող անդամներ՝

գլխավոր ճարտարագետ Մ. Վահրադյան

առաջատար մասնագետ Գ. Եղիազարյան

Քարտուղար՝

ոստ. ավագ լեյտենանտ Ա. Աբասյան

ՀՀ ՆԳՆ-ն հարցումներ է ուղարկել ավտոմոբիլների հայտնի ապրանքանիշեր ներմուծող հայկական 5 ընկերություններին:

5 ընկերություններից մեկը, Renault-ի ներկայացուցիչ «Մեգնա» ՍՊԸ-ն հայտնել է, որ «անհնար է նշված ժամկետում իրականացնել մատակարարումը» (պատկեր Հ5): Յագուար Լենդ Ռովերի ներկայացուցիչ Ֆօրա Պրեմիում-ը, հայտնել է, որ «այս պահին չի կարող առաջարկել տրված տեխնիկական չափորոշիչներին համապատասխանող տարբերակ, հաշվի առնելով մատակարարման անհրաժեշտ ժամկետը» (պատկեր Հ6): Audi ապրանքանիշի ներկայացուցիչ «Սլավ Մոթորս» ՓԲԸ-ն հայտնել է, որ Audi ապրանքանիշի մոդելային շարքում առկա չեն մոդելներ, որոնք համապատասխանում են ՀՀ ՆԳՆ կողմից ներկայացված տեխնիկական պահանջներին (պատկեր Հ7):

«Մագաս ինվեստ» ՓԲԸ-ն հայնել է, որ պահեստում նշված տեխնիկական բնութագրերով մեքենաներ առկա չեն (պատկեր Հ8):

Պատկեր Հ5. «Մեգնա» ՍՊԸ-ի 2022թ. հուլիսի 11-ի էլեկտրոնային հաղորդագրության տեսաներածված օրինակը


7/13/22, 10:43 AM Gmail - (без темы)

Gmail Mariam Hovhannisyan <mhovhannisyan430@gmail.com>

(без темы)
Писем: 2

Mariam Hovhannisyan <mhovhannisyan430@gmail.com> 11 июля 2022 г., 14:46
Кому: arman.tadevosyan@autogroup.am

Հարգելի գործընկեր, խնդրում եմ սեղմ ժամկետներում հայտնել՝ առկա են արդյոք Ձեզ մոտ տեխնիկական բնութագրերին համապատասխան տրանսպորտային միջոցներ, եթե այո ապա մատակարարումը կարող եք իրականացնել արդյոք մինչև. սույն թվականի նոյեմբերի 15-ը

Приложений: 2
հայերեն ամենագնաց ավտոմատ.docx 24K
հայերեն ամենագնաց մեխանիկա.docx 23K

Arman Tadevosyan <arman.tadevosyan@autogroup.am> 11 июля 2022 г., 15:59
Кому: Mariam Hovhannisyan <mhovhannisyan430@gmail.com>

Հարգելի գործընկեր

Շնորհակալ ենք նամակի համար , հայտնում ենք ,որ անհնար է նշված ժամկետում իրականացնել մատակարարումը

Հարգանքով | С уважением

RENAULT Արման Թադևոսյան | Арман Тадевосян
Գլխավոր մենեջեր | Главный менеджер

https://mail.google.com/mail/u/0/?ik=96ed32b259&view=pt&search=all&permthid=thread-a%3Ar5169738839729390764&simpl=msg-a%3Ar5565317963765067655&simpl=msg-f%3A1738057460334385722 1/2

Պատկեր Հ6. Ֆօրա Պրեմիում ընկերության 2022թ. հուլիսի 12-ի էլեկտրոնային հաղորդագրության տեսաներածված օրինակը[74]


7/13/22, 11:21 AM Gmail - ՀՀ ոստիկանություն

Gmail Mariam Hovhannisyan <mhovhannisyan430@gmail.com>

ՀՀ ոստիկանություն
Писем: 2

Mariam Hovhannisyan <mhovhannisyan430@gmail.com> 12 июля 2022 г., 16:09
Кому: forasales@autogroup.am

Հարգելի գործընկեր, խնդրում եմ 1 օրյա ժամկետում հայտնել՝ առկա են արդյոք Ձեզ մոտ տեխնիկական բնութագրերին համապատասխան տրանսպորտային միջոցներ, եթե այո ապա մատակարարումը կարող եք իրականացնել արդյոք մինչև. սույն թվականի նոյեմբերի 15-ը

Приложений: 2
հայերեն ամենագնաց ավտոմատ.docx 23K
հայերեն ամենագնաց մեխանիկա.docx 23K

Margarit Boyajyan <forasales@autogroup.am> 13 июля 2022 г., 10:39
Кому: Mariam Hovhannisyan <mhovhannisyan430@gmail.com>

Հարգելի Մարիամ,

Ի պատասխան Ձեր հարցման տեղեկացնում եմ, որ ՀՀ-ում Յագուար Լենդ Ռովերի պաշտոնական ներկայացուցիչը հանդիսացող Ֆօրա Պրեմիում ընկերություն այս պահին չի կարող առաջարկել տրված տեխնիկական չափորոշիչներին համապատասխանող տարբերակ, հաշվի առնելով մատակարարման անհրաժեշտ ժամկետը:

Այս պահին առկա և տեխնիկապես համապատասխանող ավտոմեքենան դա Discovery Sport մոդելն է, որի արտադրության տարեթիվը 2019 է, մեքենան մեր փորձնական վարման ավտոպարկից է, ունի 23 000 կմ վազք: Տեխնիկական վիճակը՝ անթերի, արժեքը՝ 33 900 000 ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ:

Շնորհակալություն,

Margarit Boyajyan
Head of Sales Department
Tel:+374 10 61 70 00
Mob: +374 91 21 65 70
E-mail: forasales@autogroup.am

https://mail.google.com/mail/u/0/?ik=96ed32b259&view=pt&search=all&permthid=thread-a%3Ar-2078079017004526218&simpl=msg-a%3Ar-2525263273933463110&simpl=msg-f%3A1738218536952746370 1/2

[74] Յագուար Լենդ Ռովերի պաշտոնական ներկայացուցիչը հանդիսացող Ֆօրա Պրեմիում ընկերություն այս պահին չի կարող առաջարկել տրված տեխնիկական չափորոշիչներին համապատասխանող տարբերակ, հաշվի առնելով մատակարարման անհրաժեշտ ժամկետը:
Այս պահին առկա և տեխնիկապես համապատասխանող ավտոմեքենան դա Discovery Sport մոդելն է, որի արտադրության տարեթիվը 2019 է, մեքենան մեր փորձնական վարման ավտոպարկից է, ունի 23 000 կմ վազք: Տեխնիկական վիճակը՝ անթերի, արժեքը՝ 33 900 000 ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ:

Պատկեր Հ7. «Սլավ Մոթորս» ՓԲԸ-ից 2022թ. հուլիսի 13-ի էլեկտրոնային հաղորդագրության տեսաներածված օրինակը[75]

RE:

info@audi.am

Երք 13.07.2022 10:17

Ում tv auto <tv_auto@police.am>;

Հարգելի գործընկեր,

Ի պատասխան Ձեր հարցմանը տեղեկացնում եմ, որ Audi ապրանքանիշի մոդելային շարքում առկա չեն մոդելներ, որոնք համապատասխանում են Ձեր կողմից ներկայացված տեխնիկական պահանջներին:

Շնորհակալ եմ Audi ապրանքանիշի նկատմամբ ցուցաբերած հետաքրքրության համար:

Մաղթում եմ Ձեզ լավ օր:

Հարգանքով՝

Daniel Sargsyan
Sales Consultant
Slav Motors CJSC
General Distributor for Audi AG in Armenia

Admiral Isakov Avenue 32/1
0004 Yerevan, Armenia

Tel: +374 10 739 400
Mob: +374 91 739 400

Պատկեր Հ8. «Մագաս Ինվեստ» ՓԲԸ-ից 2022թ. հուլիսի 12-ի էլեկտրոնային հաղորդագրության տեսաներածված օրինակը[76]

7/13/22, 10:42 AM Փոստ - tv_auto@police.am

Re: ՓԽ. Հարգելի գործընկեր, խնդրում եմ 1 օրյա ժամկետում հայտնել՝ առկա են արդյոք Ձեզ մոտ տեխնիկական բնութագրերին համապատասխան տրանսպորտային միջոցներ, եթե այո ապա մատակարարումը կարող եք իրականացնել արդյոք մինչև սույն թվականի նոյեմբերի 15-ը

Magas Invest <magasinvest@gmail.com>

Երք 12.07.2022 17:13

Ում tv auto <tv_auto@police.am>;

Հարգելի գործընկեր

Հայտնում ենք, որ Մագաս Ինվեստ ՓԲԸ-ի պահեստում նշված տեխնիկական բնութագրերով մեքենաներ առկա չեն

Հարգանքով
Մագաս Ինվեստ ՓԲԸ

вт, 12 июл. 2022 г. в 16:21, tv auto <tv_auto@police.am>:

Նյութ՝ Հարգելի գործընկեր, խնդրում եմ 1 օրյա ժամկետում հայտնել՝ առկա են արդյոք Ձեզ մոտ տեխնիկական բնութագրերին համապատասխան տրանսպորտային միջոցներ, եթե այո ապա մատակարարումը կարող եք իրականացնել արդյոք մինչև սույն թվականի նոյեմբերի 15-ը

[75] Audi աշրանքանիշի մոդելային շարքում առկա չեն մոդելներ, որոնք համապատասխանում են Ձեր կողմից ներկայացված տեխնիկական պահանջներին:
[76] Մագաս Ինվեստ ՓԲԸ-ի պահեստում նշված տեխնիկական բնութագրով մեքենաներ առկա չեն:

Համաձայն ՀՀ ոստիկանության հանրահայտ ապրանքանիշների հայաստանյան 5 պաշտոնական ներկայացուցիչներին կատարված հարցումների արդյունքում պարզվել է, որ նախատեսվող գումարն ամբողջությամբ 2 շաբաթվա ընթացքում հատկացնելու դեպքում (100% կանխավճար) հայտարարված տեխնիկական բնութագրով 175 մեքենա մինչև 2022թ. նոյեմբերի 15-ը մատակարարել կարող է «Տոյոտա Երևան» ՍՊԸ-ն:

ՀՀ ոստիկանության հիմնավորումների համաձայն «Տոյոտա Երևան»-ի պաշտոնական կայքում ոստիկանության կողմից ձեռք բերված տրանսպորտային միջոցների հրապարակված վաճառքի գները 2022թ. հուլիսի 13-ի դրությամբ կազմել են համապատասխանաբար 31.994,0 հազ. դրամ և 35.292,0 հազ. դրամ: Բանակցությունների արդյունքում պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ «Տոյոտա Երևան» ՍՊԸ-ն «Toyota Fortuner» մակնիշի 45 մեխանիկական և 130 ավտոմատ փոխանցման տուփով տրանսպորտային միջոց կմատակարարի համապատասխանաբար 15,900.0 հազ. և 18,400.0 հազ. դրամով:

Հանրահայտ ապրանքանիշների հայաստանյան ներկայացուցիչներից մեկը դիմել է «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ի ծրագրերի համակարգող Դանիել Իոաննիսյանին, փորձելով պարզել, թե ինչու են ՀԿ-ները կոնկրետ չափսեր առաջարկել ոստիկանության կողմից ձեռք բերվող ավտոմեքենաների համար, քանի որ իրենց կողմից առաջարկվող մեքենաները միայն 4սմ-ով չեն բավարարում տեխնիկական բնութագրում ներկայացրած պահանջները: Դանիել Իոաննիսյանը պատասխանել է, որ ՀԿ-ները որևէ կոնկրետ չափսեր ձեռք բերվող ավտոմեքենաների համար չեն առաջարկել և մեքենաների չափսերի վերաբերյալ որոշումը կայացրել է ՀՀ ՆԳՆ-ն: Հանրահայտ ապրանքանիշի հայաստանյան ներկայացուցիչը հայտնել է, որ ոստիկանությունից իրենց հայտնել են, որ չափսերի վերաբերյալ պահանջ ներկայացրել են ՀԿ-ները:

Ոստիկանության համար լրացուցիչ մեքենաներ ձեռք բերելու և գնումը մեկ անձից գնման ընթացակարգով կատարելու հարցը քննարկվել է ՀՀ կառավարության 2022թ. հուլիսի 21-ի նիստի ժամանակ: Նիստին ներկայացրած հիմնավորումներում ՀՀ ոստիկանությունը նշել է, որ մեքենաներ ձեռք բերելու անհրաժեշտությունը պայմանավորված է Արագածոտնի, Գեղարքունիքի, Կոտայքի և Տավուշի մարզերում 2023 թ.-ի հունվարից նոր պարեկային ծառայության գործարկմամբ և ՀՀ կառավարության 2021 թ.-ի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը

հաստատելու մասին» թիվ 1902-Լ որոշման 1-ին հավելվածի 3.3 ենթակետով սահմանված միջոցառմամբ:

ՀՀ կառավարության 2022թ. հուլիսի 21-ի նիստին ներկայացված հիմնավորումներում ՀՀ ոստիկանությունը նշել է, որ ավտոտրանսպորտային միջոցներ ձեռք բերելու համար 2022թ. մայիսի 23-ին հայտարարված մրցույթը (ծածկագիր՝ ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-51-ԱՎՏՈ-2022) մասնակից չլինելու պատճառով չի կայացել: ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի №526-Ն որոշման համաձայն գնման գործընթացն սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Մեքենաների այս խմբաքանակի ձեռքբերումը նախատեսված չի եղել ՀՀ կառավարությունն 2021թ. դեկտեմբերի 23-ի №2121-Ն որոշման հավելված 10-ով հաստատված 2022թ. իրականացվող գնումների պլանում և դրանում ներառվել է ՀՀ կառավարության 2022թ. հուլիսի 21-ին իր №1129-Ն որոշմամբ: Այս հետազոտության շրջանակներում չի հաջողվել գտնել որևէ իրավական ակտ, որով գնումների պլանում կատարվել է այնպիսի փոփոխություն, որի արդյունքում մեքենաները մինչև 2022թ. մայիսի 23-ը ներառվել են գնումների պլանում, ինչի հիման վրա ՆԳՆ-ն կարող էր մրցույթ հայտարարել: Armeps համակարգում առկա տեղեկատվությունը ևս վկայում է, որ գնումների պլանում մեքենաների այս խմբաքանակը ներառվել է 2022թ. հուլիսի 25-ին:

ՀՀ ՆԳՆ-ն պետք է պարզաբանի, թե ինչպե՞ս և ինչո՞ւ է առանց մեքենաների այս խմբաքանակը գնումների պլանում ներառված լինելու վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման պահանջը բավարարելու 2022թ. մայիսի 23-ին հայտարարել մեքենաների այս խմբաքանակի գնման մրցույթ:

ՀՀ կառավարության 2022թ. հուլիսի 21-ին ներկայացված որոշման նախագծին կից ամփոփաթերթում ՀՀ ոստիկանությունը նշել է, որ «Ընդհանուր տնտեսումը կկազմի՝ 52.000.000+27.000.000=79.000.000 ՀՀ դրամ»: Armeps համակարգի «Հաշվարկային տնտեսում» սյան «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2022-ԱՎՏՈ-ՊԱՐԵԿ» պայմանագրի տողում տնտեսումը կազմում է «0» դրամ:

ՀՀ ոստիկանության ներկայացրած հիմնավորումներին ՀՀ ֆինանսների նախարարությունն առարկել է (տես ամփոփաթերթը), կարծիք հայտնելով, որ «ՀՀ ոստիկանությանը դեռևս 08/06/2022թ. հայտնի է եղել նշված գնումները կատարելու անհրաժեշտությունը և վերջիններս ունեցել են բավարար ժամանակ ընթացակարգը կրկին մրցակցային ձևով կազմակերպելու ուղղությամբ, հաշվի առնելով նաև, որ հիշյալ ընթացակարգի արդյունքում ավտոմեքենաների մատակարարման ժամկետը

սահմանվել է 20 օր» և առաջարկել է «Նախագծի ընդունումը հիմնավորող տեղեկանքում բացահայտել գնման գործընթացը տարեսկզբից գնման մրցակցային ընթացակարգերով չկազմակերպելու խնդիրը, ինչպես նաև նույն փաստաթղթում ներկայացնել թվով 5 կազմակերպություններից իրականացված գնանշման հարցումների արդյունքները»:

ՀՀ կառավարությունը 2022թ. հուլիսի 21-ին իր №1129-Ն որոշմամբ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա ՀՀ ոստիկանությանը թույլատրել է «Տոյոտա Երևան» ՍՊԸ-ից մեքենաները ձեռք բերել մեկ անձից ընթացակարգով: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գնումը կարող է կատարվել մեկ անձից, եթե «արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հետևանքով ծագել է գնման անհետաձգելի պահանջ և, արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակից ելնելով, գնման այլ ձևերի կիրառումը ժամկետի առումով անհնար է, պայմանով, որ նման պահանջը հնարավոր չէր օբյեկտիվորեն կանխատեսել»:

Armeps համակարգի համաձայն 2022թ. ՆԳՆ-ն «Տոյոտա Երևան» ՍՊԸ-ի հետ կնքել է մեքենաներ ձեռք բերելու երկու պայմանագիր, որոնց վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակ աղյուսակ Հ11-ում:

Աղյուսակ Հ11. Ոստիկանական մեքենաների ձեռքբերման նպատակով ՀՀ ՆԳՆ կողմից «Տոյոտա Երևան» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 01557589) հետ 2022թ. կնքված պայմանագրերի հիմնական ցուցանիշները

	Ընթացա-կարգ	Պայմանագրի գումարը (դրամ)	Պայմանագրի ծածկագիրը	Պայմանագրի կնքման օրը
1	ՄԱ	3,107,500,000.0	ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2022-ԱՎՏՈ-ՊԱՐԵԿ	Հուլիսի 25
2	ԷԱ	1,745,571,428.5	ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-43-2022-ԱՎՏՈ-1	Հունվարի 13

Աղբյուր. Armeps

Մեքենաների երկրորդ խմբաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակ Հ12-ում:

Աղյուսակ Հ12. «Տոյոտա Երևան» ՍՊԸ-ի հետ մեկ անձից գնման ընթացակարգի կիրառման արդյունքում ՀՀ ՆԳՆ կնքած ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2022-ԱՎՏՈ-ՊԱՐԵԿ պայմանագրով նախատեսված մեծություններ

	Քանակ	Միավորի գինը (դրամ)	Ընդհանուր գինը
1	45	15,900,000	715,500,000
2	130	18,400,000	2,392,000,000

Աղբյուր. Armeps

Ձեռք բերված մեքենաների տեխնիկական բնութագրերը և 2022թ. մայիսի 23-ին հայտարարված էլեկտրոնային աճուրդի ժամանակ հայտարարված մեքենաների տեխնիկական բնութագրերը ներկայացված են աղյուսակ Հ13-ում: Եթե մայիսի 23-ին ՀՀ ՆԳՆ-ն ցանկանում էր ձեռք բերել հիդրոմեխանիկական փոխանցման տուփով 180 ձիաուժ շարժիչի հզորությամբ 85 սեդան, ապա հուլիսի վերջին ձեռք է բերել 166 ձիաուժ շարժիչի հզորությամբ, մեխանիկական տուփով 45 ամենագնաց:

Հարց է առաջանում, թե ***ինչպես է ՀՀ ՆԳՆ-ն գնահատում մեքենաների կարիքը, եթե մեքենաներին ներկայացվող տեխնիկական պահանջները կարող են էականորեն փոխվել 2 ամսվա ընթացքում***:

Ձեռք բերված մեքենաների երկու խմբաքանակների պայմանագերերի տեխնիկատնտեսական հիմնական ցուցանիշներն ամփոփված են Հ14 աղյուսակում:

ՀՀ կառավարության 2022թ. հուլիսի 21-ի նիստի հիմնավորումներում ՀՀ ոստիկանությունը նշել է, որ «Բանակցությունների արդյունքում ձեռք բերված փոխհամաձայնությամբ նախատեսվում է մատակարարել «Toyota Fortuner» մակնիշի 45 միավոր մեխանիկական և 130 միավոր ավտոմատ տուփով ավտոտրանսպորտային միջոց, համապատասխանաբար ըստ տեսակների 15.900,0 հազ, դրամ և 18.400,0 հազ. դրամ գնման գներով: Ընկերության պաշտոնական կայքում նշված ավտոտրանսպորտային միջոցների 13.07.2022 թ-ի դրությամբ հրապարակված վաճառքի գները, համապատասխանաբար ըստ տեսակների կազմում են՝ 31.994,0 հազ. դրամ և 35.292,0 հազ. դրամ»:

Ինչո՞ւ և ինչի՞ հիման վրա է ՀՀ ՆԳՆ-ն որոշել, որ ի տարբերություն մնացած պարեկային ծառայությունների, որոնց համար հունվարին ձեռք բերված մեքենաներն ունեցել են 199-200 ձիաուժ հզորությամբ շարժիչ, 1555-1715 կգ քաշ, Արագածոտնի, Գեղարքունիքի, Կոտայքի և Տավուշի մարզերում ստեղծվող պարեկային ծառայության համար գնվող մեքենաները կարող են ունենալ 166 ձիաուժ շարժիչ և 2065-2120 կգ քաշ:

ՀՀ հաշվեքննիչ պալատն արձանագրել է, որ ՀՀ կառավարությունը 2022թ. հուլիսի 21-ի №1129-Ն որոշմամբ 3,107,500.0 հազ. դրամի դիմաց մատակարարված 175 Տոյոտա Ֆորտուներ մոդելի մեքենաների ճանապարհային լուսածերպը (կլիռենս) պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանված 255մմ-ի փոխարեն 225մմ (պակաս է շուրջ 30մմ) լինելու փաստն անտեսվել է և Ոստիկանության կողմից ընդունվել է տեխնիկական բնութագրի պահանջներին չհամապատասխանող ապրանք: Չի կիրառվել գնման պայմանագրի 6.3 կետով նախատեսված պատասխանատվության միջոցը՝ պայմանագրի 3,107,500.0 հազ. դրամ գնի 0,5%-ի

չափով՝ 15,537.5 հազար դրամ: Ոստիկանությունը Հաշվեքննիչ պալատի դիտարկումն ընդունել է իր գիտություն և հայտնել, որ հաջորդիվ գնման գործընթացներում հաշվի կառնվի տեխնիկականն բնութագրերի հստակ նկարագրությունը:

Աղյուսակ Հ13. 2022թ. մայիսի 23-ին հայտարարված բաց մրցույթ ընթացակարգով ձեռք բերվելիք մեքենաների տեխնիկական բնութագրերից մի քանի հիմնական տվյալները և 2022թ. հուլիսի 25-ին մեկ անձ ընթացակարգով ձեռք բերված մեքենաների հիմնական ցուցանիշները

	Սեդան Մայիսի 23-ի մրցույթի տեխնիկական բնութագիր	**Ամենագնաց Հուլիսի 25-ին կնքված պայմանագիր**	**Ամենագնաց Մայիսի 23-ի մրցույթի տեխնիկական բնութագիր**	**Ամենագնաց Հուլիսի 25-ին կնքված պայմանագիր**
Երկարություն	4250-5050	4798	4350-5105	4795
Լայնություն	1750-1950	1855	1800-2175	1855
Բարձրություն	1400-1600	1835	1600-1855	1835
Անվային բազա, ոչ պակաս	2800	2745	2690	2745
Քաշը, ոչ պակաս (կգ)	1250	2065	1400	2120
Վառելիքի ծախսը 100կմ ոչ ավելի (լ)	15	18	18	18
Աշխատանքային ծավալը (լիտր)	2.0-3.6	2.7	2.4-3.6	2.7
Ձիաուժը, ոչ պակաս	180	166	180	166
Արագացումը (կմ/ժ-վ)	9.0	12.4	12.0	12.8
Անվադողերի չափսերը	R 16-17	R 17	R 17-18	R 17
Փոխանցման տուփը	Հիդրոմեխանիկական	Մեխանիկական 5 աստիճան	Հիդրոմեխանիկական	Հիդրոմեխանիկական 6 աստիճան
Երաշխիք	36 ամիս կամ 150000կմ	36 ամիս կամ 150000կմ	36 ամիս կամ 150000կմ	36 ամիս կամ 150000կմ
Քանակ	85	45	90	130
Միավորի գինը (դրամ)		15,900,000.0		18,400,000.0
Ընդհանուր գինը (դրամ)		715,500,000.0		2,392,000,000.0

Աղբյուր. ՀՀ ՆԳՆ գրություն, Armeps

Աղյուսակ Հ14. Երկու ընթացակարգով ձեռք բերված մեքենաների տեխնիկական բնութագրերից մի քանի հիմնական տվյալները

	Տոյոտա Քեմրի	Տոյոտ ՌԱՎ4		Ամենագնաց	Ամենագնաց
Երկարություն	4885	4600		4795	4795
Լայնություն	1840	1855		1855	1855
Բարձրություն	1455	1685		1835	1835
Անվային բազա				2745	2745
Քաշը (կգ)	1555	1715		2065	2120
Վառելիքի ծախսը 100կմ, ոչ ավելի քան (լ)	15	18		18	18
Շարժիչի աշխատանքային ծավալը (լիտր)	2.487	2.487		2.7	2.7
Ձիաուժը, ոչ պակաս	200	199		166	166
Արագացումը (կմ/ժ-վ)	9-10	9-10		12.4	12.8
Անվադողերի չափսերը	215/55 R17	225/60 R 18		R17	R17
Փոխանցման տուփը	ավտոմատ 8 աստիճան	ավտոմատ 8 աստիճան		Մեխանիկական 5 աստիճան	Հիդրոմեխանիկական 6 աստիճան
Երաշխիք	36 ամիս կամ 150000կմ	36 ամիս կամ 150000կմ		36 ամիս կամ 150000կմ	36 ամիս կամ 150000կմ
Միավորի գինը (դրամ)	16,140,000.0	18,771,428.57		15,900,000	18,400,000
Քանակը	70	70		45	130
Ընդհանուր գինը (դրամ)	1,129,800,000.0	1,314,000,000.0		715,500,000.0	2,392,000,000.0

Աղբյուր. Armeps

Հաշվեքննիչ պալատը չի ընդունել Ոստիկանության արձագանքը, քանի որ արձանագրված անհամապատասխանությունն առկա է արդեն իսկ կնքված պայմանագրի տեխնիկական բնութագրի ու մատակարարված ապրանքի տվյալների միջև և հայտնել է, որ ՀՀ ՆԳՆ-ն (ոստիկանությունը) պետք է կիրառի պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

ՄԱ ընթացակարգով Տոյոտա Ֆորտուներ մոդելի 175 մեքենա ձեռք բերելու համար ՀՀ ոստիկանությունը ՝Տոյոտա Երևան՝ ՍՊԸ-ին տրամադրել է 100% կանխավճար[77]: Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ ՝Տոյոտա Երևան՝ ՍՊԸ-ն պայմանագրի գործողության ողջ ընթացքում չի ներկայացրել պահանջվող բանկային երաշխիքը:

Վերևում արդեն նշվել էր, որ 2022թ. մարտին ՀՀ ոստիկանությունը «Ալիկանտե» ՍՊԸ-ի հետ կնքել է պարեկային ավտոմոբիլներում 450 հատ համակարգի տեղադրման N «ՀՀ Ո ՀՄԱԱՊՁԲ-47-ՄՈԲԱՅԼ/2021/ՊԾ» ծածկագրով 755,940.0 հազ. դրամ արժեքով պայմանագիր: 2022թ. մարտի 24-ին կնքվել է հատը 1,679.9 հազ. դրամով, 251,980.0 հազ. դրամ ընդհանուր արժեքով 150 հատ mobile համակարգ մինչև 2022թ. մարտի 31-ը տեղադրելու N1 համաձայնագիրը (տես աղյուսակ Հ7 վերևում):

2022թ. նոյեմբերի 14-ին կնքվել է հատը 1,679.9 հազ. դրամով, 503,960.0 հազ. դրամ արժեքով 300 հատ mobile համակարգ մինչև 2022թ. դեկտեմբերի 20 տեղադրելու N2 համաձայնագիրը: Այնուհետև, կազմվել են ապրանքների մատակարարման-տեղադրման հանձնման-ընդունման 3 արձանագրություն (աղյուսակ Հ15):

Աղյուսակ Հ15. ՀՀ ՆԳՆ և «Ալիկանտե» ՍՊԸ-ի միջև կնքված հանձնման ընդունման N3- N5 արձանագրությունների հիմնական տվյալները

Արձանագրություն	Օրը	mobile համակարգի քանակը	Տեղադրված mobile համակարգի արժեքը (հազ. դրամ)
N3[78]	14 դեկտեմբերի	110	184,785.3
N4	16 դեկտեմբերի	65	109,191.3
N5	20 դեկտեմբերի	125	209,983.3
ԸՆԴԱՄԵՆԸ		**300**	**503,959.9**

2022թ. հուլիսի 25-ին «Տոյոտա Երևան» ՍՊԸ հետ կնքած պայմանագրով Ոստիկանությունը ձեռք էր բերել 175 հատ ոստիկանական «Տոյոտա Ֆորտուներ» մեքենա, սակայն «Ալիկանտե» ՍՊԸ-ին N2 համաձայնագրով պատվիրվել է 300 հատ համակարգի մատակարարման և տեղադրման ծառայություն: 2022թ. դեկտեմբերի 14-

[77] ՀՀ կառավարությունը 2022թ. հուլիսի 21-ի №1129-Ն որոշում:
[78] ՀՀ հաշվեքննիչ պալատի եզրակացության մեջ առկա է 2 հատ №3 արձանագրություն, մեկն առաջին, մյուսը երկրորդ խմբաքանակում:

20 ընթացքում 3 հանձնման-ընդունման արձանագրություններով, պատասխանատու ստորաբաժանումն ընդունել է 300 լրակազմ «Mobile» համակարգ և դրանց տեղադրման ծառայություն:

ՀՀ հաշվեքննիչ պալատն արձանագրել է, որ փաստացի ոստիկանական մեքենաների վրա տեղադրվել է 175 լրակազմ համակարգ: Այսինքն, 125-ը հատ համակարգ չի տեղադրվել, սակայն ներկայացվել է որպես մատակարարված և տեղադրված ապրանք, կազմվել է հանձնման-ընդունման արձանագրություն ու վճարվել է ընդհանուր 209,983.4 հազ.դրամ գումար:

Ոստիկանությունը ՀՀ հաշվեքննիչ պալատին հայտնել է, որ 300 հատ «Mobile» համակարգից 175 հատը մատակարարի կողմից ժամանակին և պատշաճ կերպով մատակարվել և տեղադրվել է «Տոյոտա Ֆորտուներ» մակնիշի մեքենաների վրա, իսկ 125 հատը ժամանակին մատակարարվել և հանձնվել է ոստիկանության պահեստ, մինչև համապատասխան մեքենաների տրամադրումը: Մատակարարը տրամադրել է պարտավորագիր (ոստիկանությունը ՀՀ հաշվեքննիչ պալատին է տրամադրել պարտավորագրի պատճենը), որ մեքենաների տրամադրման դեպքում առանց որևէ հավելյալ վճարի կտեղադրի 125 համակարգերը: Հաշվեքննիչ պալատը մասամբ ընդունել է Ոստիկանության բացատրությունը/պարզաբնումը, ընդգծելով, որ խնդիրն առաջացել է Ոստիկանության կողմից պլանավորման թերությունների հետևանքով:

2022թ. հոկտեմբերի 24-ին Ոստիկանության և «Տոյոտա Երևան» ՍՊԸ միջև կնքվել է 59,535.0 հազ. դրամով 175 Տոյոտա Ֆորտուներ ավտոմեքենաների սրահների հետնամասը 1մ² 54.0 հազ. դրամ արժեքով 1102.5 մ² ճաղավանդակներով կահավորելու վերաբերյալ «ՀՀ Ո ՄԱԱՊՁԲ-2022-ՃԱՂԱՎԱՆԴԱԿ-Ա-7» պայմանագիր: ՀՀ հաշվեքննիչ պալատի համաձայն, ոստիկանությունը, որպես գնման ընթացակարգի հիմնավորում ընտրելով ՝ Գնումների մասին՝ ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը՝ այն է, գնումը կարող է կատարվել մեկ անձից, եթե գնման ենթակա ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, որը պայմանավորված է նրա հեղինակային և հարակից իրավունքներով, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությամբ և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի №526-Ն որոշման 23-րդ կետի, 4-րդ ենթակետի 15-րդ տողը, այն է՝ գնման ընթացակարգը կազմակերպելիս ... պետք է հաշվի առնել, որ հետևյալ գնումները կարող են կատարվել օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա՝ գնման առարկան արտադրած կամ վերջինիս միակ ներկայացուցիչը հանդիսացող անձից գնման առարկայի տեխնիկական սպասարկման ծառայությունների, այդ թվում՝ սպասարկման համար անհրաժեշտ պարագաների ձեռքբերում, արդեն 2022թ. հոկտեմբերի 19-ին «Տոյոտա Երևան» ՍՊԸ է ուղարկել «ՀՀ Ո ՄԱԱՊՁԲ-2022-

ՃԱՂԱՎԱՆԴԱԿ-Ա-7» ծածկագրով ընթացակարգի պայմանագրի նախագիծը և առաջարկել հինգ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել ստորագրված և կնքված պայմանագիրը:

ՀՀ հաշվեքննիչ պալատն արձանագրել է, որ «Չի պահպանվել «Գնումների մասին» օրենքի հոդված 23-ի 1-ին կետի 1-ին ենթակետի պահանջները, այն է՝ գնումը կարող է կատարվել մեկ անձից, եթե գնման ենթակա ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, որը պայմանավորված է նրա հեղինակային և հարակից իրավունքներով, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությամբ: Այս իրավունքները որոշակիացված են օրենքներով («Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետ՝ հատուկ կամ բացառիկ իրավունք՝ իրավունք, որը բխում է իրավական կամ վարչական ակտով իրավասու մարմնի տրամադրած իրավասություններից, որի նպատակն է որոշակի գործունեության իրականացման իրավունքը (ներառյալ՝ հանրային ծառայությունների ոլորտում) վերապահել մեկ կամ սահմանափակ թվով կազմակերպությունների, և որով էապես սահմանափակվում է նման գործունեություն իրականացնելու այլ կազմակերպությունների հնարավորությունը: «Տոյոտա Երևան» ՍՊ ընկերությանը նշված բացառիկ իրավունքներ՝ մասնավորապես ճաղավանդակի արտադրություն, ճաղավանդակի վաճառք կամ ճաղավանդակի տեղադրում, վերապահված լինելու փաստը հավաստող փաստաթղթեր առկա չեն գնման փաստաթղթերի փաթեթում, ինչպես նաև դրանց մասին չկա որևէ նշում նաև ընթացակարգի արձանագրություններում»:

ՀՀ հաշվեքննիչ պալատն արձանագրել է, որ ավտոմեքենաների այդ խմբաքանակի սրահներում փաստացի տեղադրվել է 577.5 մ² չգերազանցող մակերեսով ճաղավանդակներ, սակայն «Տոյոտա Երևան» ՍՊԸ-ն Ոստիկանությանը վճարման է ներկայացրել 1102.5 մ² տեղադրված ճաղավանդակների արժեքը, որը վերջինիս կողմից ամբողջությամբ վճարվել է: Արձանագրվել է պայմանագրով նախատեսված, փաստացի կատարված և փաստաթղթերով ներկայացված աշխատանքների ծավալների միջև շուրջ 525 մ² (1մ² 54.0 հազ. դրամ արժեքով) շեղում, կամ անապրանք գործարք:

Անհամապատասխանությունների արձանագրումից հետո Ոստիկանությունը Հաշվեքննիչ պալատին հայտնել է, որ փաստաթղթերը նախաքննական մարմին ուղարկելու պատճառաբանությամբ ՀՀ ՆԳՆ նախարարը ներքին անվտանգության վարչությանը հանձնարարել է կասեցնել իրականացվող ծառայողական քննությունը:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ 2022թ. մարտի 25-ից հոկտեմբերի 24-ն ընկած ժամանակահատվածում ճաղավանդակի 1մ² գինն աճել է

74%: Եթե 2022թ. մարտի 25-ին «Տոյոտա Երևան» ՍՊԸ հետ կնքած «ՀՀ Ո ՄԱԱՊՁԲ-ՎԱՆԴԱԿ/2022» պայմանագրով ավտոմեքենաների սրահների հետնամասում տեղադրվող ճաղավանդակի 1մ² արժեցել է 31.0 հազար դրամ, ապա 2022թ. հոկտեմբերի 24-ին կնքված «ՀՀ Ո ՄԱԱՊՁԲ-2022-ՃԱՂԱՎԱՆԴԱԿ-Ա-7» պայմանագրով ՀՀ ՆԳՆ-ն «Տոյոտա Երևան» ՍՊԸ-ին 1մ² դիմաց վճարել է 54.0 հազ. դրամ:

2022թ. նոյեմբերին Ոստիկանություն պատասխանատու ստորաբաժանումը որոշել է, որ անհրաժեշտ է Արագածոտնի, Կոտայքի, Տավուշի և Գեղարքունիքի մարզերում ձևավորվող նոր պարեկային ծառայության համար ձեռք բերված 175 միավոր Toyota Fortuner մակնիշի ավտոմեքենաների համար, ձեռք բերել «Ապակիների թաղանթապատման ծառայություններ» և ներկայացրել է Տեղեկանք-Հիմնավորում, որ «…ապակիների թաղանթապատման համար անհրաժեշտ է սահմանել «ՄԱ» գնման ձևը, հիմք ընդունելով 2022 թվականի հուլիսի 11-ին կայացած՝ ոստիկանության բարեփոխումները համակարգող խորհրդի նիստի Արձանագրությունը Վ/72-2022»: Կարիքի բավարարման համար Ոստիկանությունը կազմակերպել է «ՄԱ» գնման ընթացակարգ՝ կիրառելով մեկ անձ գնման ձևը, որի ընտրությունը հիմնավորվել է 2 օրենսդրական ակտերով («Գնումների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ կետ[79] և 23-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետ[80]), ինչպես նաև ոստիկանության բարեփոխումները համակարգող խորհրդի նիստի Վ/72-2022 արձանագրությունով:

2022թ. նոյեմբերի 23-ին Ոստիկանության և ՝ Արման Արզումանյան՝ ԱՁ-ի միջև կնքվել է 7.0 մլն դրամ արժեքով «ՄԱԾՁԲ-2022-ԱԹԾ-Ա-11» պայմանագիրը: Ըստ կնքված պայմանագրի տեխնիկական բնութագրի (Հավելված 1) մատակարարը պարտավորվում է թաղանթապատել թվով 175 Toyota Fortuner ավտոմեքենաների հետնամասի ապակիները: 2022թ. նոյեմբերի 28-ին կողմերի միջև կազմվել է պայմանագրի կատարման արդյունքների հանձնման-ընդունման արձանագրությունը, որի հիման վրա 2022թ. դեկտեմբերի 5-ին պայմանագրով նախատեսված գումարն ամբողջությամբ վճարվել է: ՀՀ հաշվեքննիչ պալատը եզրակացրել է, որ չեն պահպանվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ բաժնի պահանջները (գնում կատարելու ընթացակարգերը և դրանց պայմանները) և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի №526-Ն որոշման հավելված 1-ով սահմանված Կարգի 5-րդ գլխի պահանջները: Մասնավորապես, ՀՀ հաշվեքննիչ պալատն արձանագրել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ կետը (Մրցույթը սույն օրենքով նախատեսված դեպքերում կարող է կատարվել երկու փուլով), այս ընթացակարգի

[79] Մրցույթը սույն օրենքով նախատեսված դեպքերում կարող է կատարվել երկու փուլով:
[80] Գնումը կարող է կատարվել մեկ անձից, եթե գնման ենթակա ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, որը պայմանավորված է նրա հեղինակային և հարակից իրավունքներով, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությամբ

հետ առնչություն չունի և չի կարող հիմնավորել «ՄԱ» ձևով գնման ընթացակարգի ընտրությունը: ՀՀ ՆԳՆ Ոստիկանությունը չի պահպանել «Գնումների մասին» օրենքի հոդված 23-ի 1-ին կետի 1-ին ենթակետի պահանջը՝ «այն է՝ գնումը կարող է կատարվել մեկ անձից, եթե գնման ենթակա ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, որը պայմանավորված է նրա հեղինակային և հարակից իրավունքներով, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությամբ»: ՀՀ հաշվեքննիչ պալատը կարծիք է հայտնել, որ հատուկ կամ բացառիկ իրավունքը «բխում է իրավական կամ վարչական ակտով իրավասու մարմնի տրամադրած իրավասություններից, որի նպատակն է որոշակի գործունեության իրականացման իրավունքը (ներառյալ՝ հանրային ծառայությունների ոլորտում) վերապահել մեկ կամ սահմանափակ թվով կազմակերպությունների, և որով էապես սահմանափակվում է նման գործունեություն իրականացնելու այլ կազմակերպությունների հնարավորությունը»: ՀՀ հաշվեքննիչ պալատն արձանագրել է, որ «Արման Արզումանյան» ԱՁ-ն չի ներկայացրել բացառիկ իրավունքներ վերապահված լինելու փաստը հավաստող փաստաթղթեր և այդ մասին նշում չկա նաև ընթացակարգի արձանագրություններում: ՄԱ ընթացակարգ կիրառելու արդյունքում ՀՀ ՆԳՆ ոստիկանությունը մատակարար կազմակերպությանը հնարավորություն է տվել չներկայացնել գնման ընթացակարգի շրջանակներում, հայտի, ինչպես նաև որակավորման և պայմանագրի (կանխավճարի) ապահովումներ (ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 71-րդ կետի 3-րդ ենթակետ): ՀՀ հաշվեքննիչ պալատը նաև արձանագրել է, որ «Ոստիկանության բարեփոխումները համակարգող խորհրդի նիստի Արձանագրությունը, որպես գնման ընթացակարգի ձևի հիմնավորում չի կարող լինել, քանի որ ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշման հավելվածի 3-րդ կետի համաձայն, գնման գործընթացի առանձնահատկությունները սահմանվում է կառավարության որոշումներով»:

ՀՀ ՆԳՆ (ոստիկանության) կողմից մեքենաների ձեռք բերման գործարքներում վերը նշված կոռուպցիոն երևույթների շարքը ՀՀ ՆԳՆ-ում ներքին ֆինանսական հսկողության համակարգի բացակայության, «Գնումների մասին» ՀՀ օրենքի կարգավորումների անտեսման և կամայական մեկնաբանության, ռազմավարական պլանավորման և կարիքների գնահատման գործառույթի բացակայության, պայմանագրի կատարման փուլում ՀԿ-ներին և լրատվամիջոցների ներկայացուցիչներին ներգրավելուց խուսափելու, պետական ֆինանսական կառավարման համակարգում այլ բացերի ուղղակի հետևանքն է:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՀՀ ՆԳՆ-ԻՆ ՀՂՎԱԾ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ և ՍՏԱՑԱԾ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Հետազոտության շրջանակներում ստորև ներկայացվող հարցերի հետ կապված գրություններ են հղվել ՀՀ ՆԳՆ.

	Բովանդակությունը	
1	Մեքենաների ձեռքբերման վերաբերյալ 5 մատակարարներին հղված գրությունների վերաբերյալ	√
2	Գնում չհանդիսացող ծախսերի մասին	√
3	Առկա ֆինանսական միջոցների մասին	-
	Ձեռք բերվող մեքենաների տեխնիկական բնութագրերի փոփոխության պատճառների մասին	-
4	Գնումների պլանում կատարվող փոփոխությունների մասին	√
5	2022թ. լուծված պայմանագրերի մասին	√

ՀՔԱՎ 2023թ. հոկտեմբերի 9-ի Ե/2023-09.10/685 գրություն

2023թ. մայիսի 23-ի մրցույթի և 5 մատակարարներին հղված գրությունների մասին

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի
Հանրապետություն, Վանաձոր
Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of
Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: info@hcav.am

Ե/2023- 09.10/685
09.10.2023թ.

Ներքին գործերի նախարարություն

Վահե Ղազարյանին

Հարգելի՛ պարոն նախարար,

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը արդեն 15 տարի է իրականացնում է ՀՀ Ոստիկանության գործունեության, այդ թվում բարեփոխումներին ուղղված ծրագրերի մշտադիտարկում: Մասնավորապես, իրականացնում ենք ոստիկան-քաղաքացի հարբերություններում մարդու իրավունքների մշտադիտարկում, իրավապահ մարմինների նկատմամբ վստահության համաթվի գնահատում, ՀՀ Ոստիկանության բարեփոխումների ռազմավարությունների մշտադիտարկում և հանդես ենք գալիս օրենսդրական նախաձեռնություններով:

Ներկայումս իրականացնում ենք Ոստիկանության բարեփոխումների ծրագրի շրջանակներում կատարված գնումների մշտադիտարկում՝ ուսումնասիրելով բաց աղբյուրները և խնդրում ենք տեղեկատվություն տրամադրել ստորև ներկայացվող հարցերի վերաբերյալ:

2022թ. հուլիսի 21-ի ՀՀ կառավարության նիստի օրակարգի (https://e-gov.am/sessions/archive/2022/07/21/) 41-րդ հարցի վերաբերյալ ներկայացված հիմնավորումներում ՀՀ ոստիկանությունը նշել է, որ ավտոտրանսպորտային միջոցներ ձեռք բերելու համար 2022թ. մայիսի 23-ին հայտարարել է մրցույթ (ծածկագիր՝ ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-51-ԱՎՏՈ-2022): Հայտերի բացումը տեղի է ունեցել 2022թ. հունիսի 8-ին, սակայն մասնակից չինելու պատճառով ընթացակարգը հայտարարվել է չկայացած: Հիմնավորման համաձայն, այնուհետև ՀՀ ոստիկանությունը հարցում է կատարել հանրահայտ ավտոպրանքանիշների հայաստանյան 5 պաշտոնական ներկայացուցիչներին:

1. Խնդրում ենք տրամադրել 2022թ. մայիսի 23-ի մրցույթի հայտարարությունը և գնվող ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև այդ

ընթացակարգի հետ կապված նիստերի արձանագրությունների պատճենները: Խնդրում ենք նշել, թե որտեղ է հայտարարվել մրցույթի մասին և առկայության դեպքում տրամադրել (ինտերնետային) հղումը:

2. Խնդրում ենք տրամարդել ՀՀ ոստիկանության կողմից հանրահայտ 5 ավտոապրանքանիշների հայտաստանյան պաշտոնական ներկայացուցիչներին կատարված հարցումը, ներառյալ գնվող ամտոտրանսպորտային միջոցների տեխնիկական բնութագիրը, և վերջիններից ՀՀ ոստիկանության ստացած պատասխանները:

Խնդրում ենք գրության պատասխանը տրամադրել թղթային տարբերակով կամ ուղարկել հետևյալ էլեկտրոնային հասցեին՝ info@hcav.am:

Հարգանքով՝
կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Օ.Զալյան
էլ. փ. ozalyan@hcav.am

ՀՀ ոստիկանության 2023թ. հոկտեմբերի 11-ի 27/1123 գրությունը (առանց հավելվածների) 2022թ. մայիսի 23-ի մրցույթի և 5 մատակարարներին հղված գրությունների մասին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԳՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

0025, Երևան, Նալբանդյան 130, ընդունարան հեռ.՝ (011) 56 80 88, բարտուղարություն հեռ.՝ 59 61 88

№ 27/1123 «11» 10 2023թ.

Ձեր

ՀՀ քաղաքացի
Արթուր Սաքունցին

Հարգելի՛ պարոն Սաքունց

Ի պատասխան 09.10.2023 թվականի գրության Ձեզ է տրամադրվում ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԷԱՃԱՊՁԲ-51-ԱՎՏՈ-2022 ծածկագրով գնման ընթացակարգին առնչվող փաստաթղթերի պատճեները: Միաժամանակ հայտնում եմ, որ տվյալ գնման ընթացակարգի վերաբերյալ հրապարակված փաստաթղթերը կարող եք տեսնել հետյալ հղումով https://gnumner.minfin.am/ որոնման դաշտում գրելով ընթացակարգի ծածկագիրը:

Հարգանքով՝

Ոստիկանության գնդապետ ***Ա.Ներսիսյան***

Կատարող՝ Գնումների համակարգման բաժին
Բ.Փահլևանյան
Հեռ. 59-60-39

ՀՔԱՎ 2023թ. հոկտեմբերի 25-ի Ե/2023-25.10/730 գրություն

Գնում չհանդիսացող ծախս «ընթացակարգի» վերաբերյալ

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի
Հանրապետություն, Վանաձոր
Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of
Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: info@hcav.am

Ե/2023- 25.10/730
25.10.2023թ

Ներքին գործերի նախարարություն
Վահե Ղազարյանին

Հարգելի՛ պարոն նախարար,

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը արդեն 15 տարի է իրականացնում է ՀՀ Ոստիկանության գործունեության, այդ թվում բարեփոխումներին ուղղված ծրագրերի մշտադիտարկում: Մասնավորապես, իրականացնում ենք ոստիկան-քաղաքացի հարաբերություններում մարդու իրավունքների մշտադիտարկում, իրավապահ մարմինների նկատմամբ վստահության համաթվի գնահատում, ՀՀ Ոստիկանության բարեփոխումների ռազմավարությունների մշտադիտարկում և հանդես ենք գալիս օրենսդրական նախաձեռնություններով:

Ներկայումս իրականացնում ենք Ոստիկանության բարեփոխումների ծրագրի շրջանակներում կատարված գնումների մշտադիտարկում՝ ուսումնասիրելով բաց աղբյուրները և խնդրում ենք տեղեկատվություն տրամադրել ստորև ներկայացվող հարցերի վերաբերյալ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի հոդված 18-ի 1-րդ մասի համաձայն գնում կատարելու ընթացակարգերն են (1) էլեկտրոնային աճուրդը, (2) մրցույթը, (3) գնանշման հարցումը, (4) մեկ անձից գնումը:
Armeps համակարգի համաձայն 2022թ. ՀՀ ՆԳՆ-ն 61.2 մլն դրամ ծավալով 146 պայմանագիր է կնքել գնում չհանդիսացող ծախս «ընթացակարգի» արդյունքում:
«Գնումների մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին», «Գանձապետական համակարգի մասին» և պետական ֆինանսական կառավարման ոլորտը կարգավորող մնացած օրենքները չեն սահմանում և չեն օգտագործում «գնում չհանդիսացող ծախս» հասկացություն: Այդպիսի հասկացություն սահմանված չէ և չի օգտագործվում նաև ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի №526-Ն որոշմամբ, որով հաստատվել է գնումների գործընթացի կազմակերպման կարգը:
2022թ. նոյեմբերի 8-ին ՀՀ ՆԳՆ-ն «Երևան հյուրանոց» ՍՊԸ-ից և 2022թ. դեկտեմբերի 5-ին «Աստորիա ինվեստ» ՓԲԸ-ից մեկ անձ ընթացակարգի արդյունքում ձեռք է բերել

համապատասխանաբար 116,380 դրամ և 343,000 դրամ արժեքով սնունդ: 2022թ. դեկտեմբերի 13-ին ՀՀ ՆԳՆ-ն Էմմա Մխիթարի Հովհաննիսյանից գնում չհանդիսացող ծախս «ընթացակարգի» արդյունքում ձեռք է բերել 1,213,200 դրամի սնունդ:

ՀՀ ՆԳՆ-ն 2022թ. նոյեմբերի 28-ին գնանշման հարցում ընթացակարգի արդյունքում «ՄԵՆՔՈՆՍԹՐԱՔԹ» ՍՊԸ-ից 2,884,836 դրամ արժեքով ձեռք է բերել շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ: 2022թ. դեկտեմբերի 5-ին ՀՀ ՆԳՆ մեկ անձ ընթացակարգի արդյունքում «ՉԵԽ ԱՎՏՈ» ՍՊԸ-ից 30 մլն դրամով ձեռք է բերել մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում: 2022թ. փետրվարի 9-ին ՀՀ ՆԳՆ-ն գնում չհանդիսացող ծախս «ընթացակարգի» արդյունքում Սևադա Սաֆարյան Ա/Ձ-ից 2,567,450 դրամով ձեռք է բերել ընթացիկ նորոգման աշխատանքներ:

Խնդրում ենք տեղեկատվություն տրամադրել, այն մասին, թե ինչո՞ւ և ի՞նչ հիմնավորմամբ է ՀՀ ՆԳՆ սնունդ և / կամ ընթացիկ նորոգման աշխատանքներ ձեռք բերել «Գնումների մասին» օրենքով չնախատեսված գնում չհանդիսացող ծախս «ընթացակարգով», եթե դրանք հնարավոր էր ձեռք բերել «Գնումների մասին» օրենքով նախատեսված ընթացակարգերից մեկով:

Խնդրում ենք գրության պատասխանը տրամադրել թղթային տարբերակով կամ ուղարկել հետևյալ էլեկտրոնային հասցեին՝ info@hcav.am :

Հարգանքով՝
կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Օ.Զալյան
էլ. փ. ozalyan@hcav.am

ՀՔԱՎ 2023թ. նոյեմբերի 10-ի Ե/2023-10.11/762 գրություն

Գնումների պլաններում կատարվող մեծաքանակ և մեծածավալ փոփոխությունների պատճառների վերաբերյալ

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի
Հանրապետություն, Վանաձոր
Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of
Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: info@hcav.am

Ե/2023- 10.11/762
10.11.2023թ.

Ներքին գործերի նախարարություն
Վահե Ղազարյանին

Հարգելի՛ պարոն նախարար,

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը արդեն 15 տարի է իրականացնում է ՀՀ Ոստիկանության գործունեության, այդ թվում բարեփոխումներին ուղղված ծրագրերի մշտադիտարկում: Մասնավորապես, իրականացնում ենք ոստիկան-քաղաքացի հարաբերություններում մարդու իրավունքների մշտադիտարկում, իրավապահ մարմինների նկատմամբ վստահության համաթվի գնահատում, ՀՀ Ոստիկանության բարեփոխումների ռազմավարությունների մշտադիտարկում և հանդես ենք գալիս օրենսդրական նախաձեռնություններով:

Ներկայումս իրականացնում ենք Ոստիկանության բարեփոխումների ծրագրի շրջանակներում կատարված գնումների մշտադիտարկում՝ ուսումնասիրելով բաց աղբյուրները և խնդրում ենք տեղեկատվություն տրամադրել ստորև ներկայացվող հարցերի վերաբերյալ:

2022թ. գնումների պլանը հաստատվել է ՀՀ կառավարության 2021թ. դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» №2121-Ն որոշման հավելված 10-ով (հասանելի է https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=176607 հղմամբ):
Armeps համակարգի համաձայն ՀՀ ՆԳՆ-ն փոփոխության է ենթարկել 2022թ. գնումների պլանի իրեն վերաբերող գրեթե բոլոր տողերը: Կից ներկայացնում ենք Armeps համակարգից ներբեռնած գնումների պլանը ներառող excel ֆայլը, որի «J» սյունը վերնագրված է՝ «Փոփոխման ամսաթիվ»:

Ուսումնասիրության արդյունքում հաջողվել է ձեռք բերել ՀՀ կառավարության մեկ որոշում, որով փոփոխություն է կատարվել ՀՀ ՆԳՆ գնումների պլանում, տե՛ս ՀՀ կառավարության

2022թ. հուլիսի 21-ի №1129-Ն որոշման հավելված 5 (հասանելի է arlis.am/DocumentView.aspx?DocID=166483 հղմամբ)։

Խնդրում ենք տրամադրել տեղեկատվություն մեծածավալ և մեծաքանակ փոփոխությունների վերաբերյալ, ինչպես նաև փոփոխությունների հիմքերը (ՀՀ կառավարության որոշումներ, ՀՀ ՆԳՆ հրամաններ, այլ փաստաթղթեր, որոնք փոփոխության են ենթարկել ՀՀ ՆԳՆ գնումների պլանը)։

Խնդրում ենք գրության պատասխանը տրամադրել թղթային տարբերակով կամ ուղարկել հետևյալ էլեկտրոնային հասցեին՝ info@hcav.am :

Հարգանքով՝
կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Օ.Զալյան
էլ. փ. ozalyan@hcav.am

ՀՀ ՆԳՆ 2023թ. դեկտեմբերի 13-ի 27/1428 գրությունը գնում չհանդիսացող ծախս «ընթացակարգի» (ի պատասխան ՀՔԱՎ 2023թ. հոկտեմբերի 25-ի Ե/2023-25.10/730 գրության) և գնումների պլաններում կատարվող մեծածավալ և մեծաքանակ փոփոխությունների պատճառների վերաբերյալ (ի պատասխան ՀՔԱՎ 2023թ. նոյեմբերի 10-ի Ե/2023-10.11/762 գրության)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, գործավարություն, հեռ. 596-125

№ 27/1428 «13» 12 2023 թ.

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի
Վանաձորի գրասենյակի նախագահ Արթուր Սաքունցին
Հասցե՝ Լոռի, Վանաձոր, Տիգրան Մեծի փ. 59,
Էլ. Հասցե՝ info@hcav.am
Հեռ. +374 91200971

Հարգելի՛ պարոն Սաքունց,

Ի պատասխան Ձեր 25.10.2023թ. հ946935 և 10.11.2023թ հ961106 հարցումների վերաբերյալ հայտնում եմ հետևյալը.

- <<Գնում չհանդիսացող ծախս>> գնման ընթացակարգի հասկացությունը սահմանվում է 2017 թվականի ապրիլի 13-ի <<Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը հաստատելու մասին>> թիվ 390-Ն որոշմամբ հաստատված գնումների միասնական անվանացանկի կառուցվածքի 2-րդ կետի աղյուսակի, ինչպես նաև 2018 թվականի 15 հունիսի <<Բյուջեների կատարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 706-Ն որոշմամբ հաստատված կարգի 38.1 կետով:
- ՀՀ ոստիկանության 2022թ. պահպանման ծախսերի համար սահմանված տարեկան ընդհանուր գումարների անփոփոխության պայմաններում կատարվել են

գնումների պլանի փոփոխություններ՝ հիմք ՀՀ կառավարության 2022թ. թիվ 337-Ն, 418-Ն, 598-Ն,883-Ն, 1088-Ն, 1129-Ն, 1567-Ն, 1598-Ն, 1667-Ն, 1700-Ն, 1814-Ն որոշումներ, ինչպես նաև մի շարք վերաբաշխումներ և գնումների պլանի փոփոխություններ (գնման առարկաների միավոր գների, քանակների, գնման ձևերի փոփոխություններ, որոնք իրականացվել են PPCM էլեկտրոնային համակարգով):

Վերոնշյալ փոփոխությունները հիմնականում պայմանավորված են ՀՀ կառավարության 2021թ-ի նոյեմբերի 18-ի թիվ 1902-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրային դրույթներից՝ ՆԳ նախարարության և պարեկային ծառայության և ՕԿԿ -ի ստեղծման ինչպես նաև ՀՀ ոստիկանության առջև ծառացած առաջնահերթ խնդիրների լուծման նպատակով:

Հարգանքով՝

Արա Ֆիդանյան

ՀՔԱՎ 2023թ. նոյեմբերի 15-ի Ե/2023-15.11/767 գրություն

Գնումների պայմանագրերը լուծելու և գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատվիրատուների ղեկավարների պատճառաբանված որոշումների վերաբերյալ

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն, Վանաձոր
Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: info@hcav.am

Ե/2023- 15.11/767
15.11.2023թ.

Ներքին գործերի նախարարություն
Վահե Ղազարյանին

Հարգելի՛ պարոն նախարար,

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը արդեն 15 տարի է իրականացնում է ՀՀ Ոստիկանության գործունեության, այդ թվում բարեփոխումներին ուղղված ծրագրերի մշտադիտարկում: Մասնավորապես, իրականացնում ենք ոստիկան-քաղաքացի հարաբերություններում մարդու իրավունքների մշտադիտարկում, իրավապահ մարմինների նկատմամբ վստահության համաթվի գնահատում, ՀՀ Ոստիկանության բարեփոխումների ռազմավարությունների մշտադիտարկում և հանդես ենք գալիս օրենսդրական նախաձեռնություններով:

Ներկայումս իրականացնում ենք Ոստիկանության բարեփոխումների ծրագրի շրջանակներում կատարված գնումների մշտադիտարկում՝ ուսումնասիրելով բաց աղբյուրները և խնդրում ենք տեղեկատվություն տրամադրել գնման պայմանագիրը լուծելու և գնումներին գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատվիրատուների ղեկավարների պատճառաբանված որոշումների վերաբերյալ.

Հարց 1. Գնումների պայմանագրերը լուծելու վերաբերյալ ծանուցումների վերաբերյալ.

- ՀՀ ֆինանսների նախարարության գնումների https://gnumner.minfin.am/ ինտերնետային էջի համապատասխան հատվածում առկա են գնումների պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումները:
- 2021թ. ընթացքում լուծված պայմանագրերին վերաբերող էջում (https://gnumner.minfin.am/hy/page/2021_tvakan_0hy/) ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության կողմից լուծված գնումների պայմանագրերի վերաբերյալ տվյալներ չեն հայտնաբերվել:
- 2022թ. ընթացքում լուծված պայմանագրերին վերաբերող էջում (https://gnumner.minfin.am/hy/page/2022_tvakan_0hy/) հայտնաբերվել է ՀՀ ՆԳՆ

կողմից լուծված գնումների մեկ պայմանագիր. «Անգա-Տրանս» ՍՊԸ-ի հետ 2021թ. օգոստոսի 7-ին կնքված թիվ «ՀՀ ՈԶ ԷԱՃԱՊՁԲ-21/10/Բ/8/ԻԾ-1» ծածկագրով հանդերձանքի գնման պայմանագիրը լուծելու մասին (կցվում է)։

- 2023թ. ընթացքում լուծված պայմանագրերին վերաբերող էջում (https://gnumner.minfin.am/hy/page/2023_tvakan_0hy/) ՀՀ ՆԳՆ կողմից լուծված գնումների պայմանագրեր չեն հայտնաբերվել։

Խնդրում ենք հավաստել, որ 2021-23թթ. լուծված պայմանագրերի վերաբերյալ https://gnumner.minfin.am/ կայքից ստացված վերը նշված տեղեկատվությունը ճիշտ է։

Եթե լուծված պայմանագրերի վերաբերյալ https://gnumner.minfin.am/ կայքում առկա տեղեկատվությունն ամբողջական չէ, խնդրում ենք տրամադրել ամբողջական տեղեկատվություն և համապատասխան փաստաթղթերի պատճենները։

Հարց 2. Գնումներին գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատվիրատուների ղեկավարների պատճառաբանված որոշումների վերաբերյալ

2023թ. գնումներին գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատվիրատուների ղեկավարների պատճառաբանված որոշումների էջում առկա է ՀՀ ՆԳՆ երեք որոշում։

1	*Օգոստոսի 16*
	«Բիզնես դեպո» ՍՊԸ
	Հրավերի ծածկագիր ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-23/75
	Օրենքի 6-րդ հոդված առաջին մասի 6-րդ կետի բ ենթակետ
	Մասնակիցը հրաժարվել է պայմանգիր կնքելու իրավունքից
2	*Սեպտեմբերի 6*
	«ԹԱԹՎԱ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ և «Խալդ Շին» ՍՊԸ
	ՀՀ ՆԳՆ ԳՀԱՇՁԲ-ՇԻՆ/2023/Հ-66 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցներ
	Օրենքի 6-րդ հոդված առաջին մասի 6-րդ կետի
	Օրենքով սահմանված ժամկետում ներկայացրել են շտկված հայտ, որը չի համապատասխանել հրավերով սահմանված պահանջներին։
3	*Հոկտեմբերի 2*
	«Վեբեքս Թեքնոլոջիս» ՍՊԸ
	ՀՀ Ո ԷԱՃՇՁԲ-ՃՈ-2023/Գ/ԷԼՌԵԳ ծածկագրով ընտրված ճանաչված մասնակից
	Օրենքի 6-րդ հոդված առաջին մասի 6-րդ կետի և 2017թ. մայիսի 4-ի №526-Ն որոշման 42 կետի

	Պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանված պահանջների անընդունելի թերություններ և բացթողումներ։

Խնդրում ենք հավաստել, որ գնումներին գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ 2023թ. ՀՀ ՆԳՆ կայացրած պատճառաբանված որոշումների վերաբերյալ տեղեկատվությունն ամբողջական է։

Խնդրում ենք տրամադրել 2021-2022թթ. գնումներին գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ ՀՀ ՆԳՆ և ՀՀ կառավարության առընթեր ոստիկանության պատճառաբանված որոշումների պատճենները, քանի որ դրանք հասանելի չեն https://gnumner.minfin.am/ կայքի միջոցով։

Խնդրում ենք գրության պատասխանը տրամադրել թղթային տարբերակով կամ ուղարկել հետևյալ էլեկտրոնային հասցեին՝ info@hcav.am ։

Հարգանքով՝
կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Օ.Զալյան
էլ. փ. ozalyan@hcav.am

ՀՀ ոստիկանության 2023թ. նոյեմբերի 17-ի 27/1304 գրությունը

Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումների վերաբերյալ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԳՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

0025, Երևան, Նալբանդյան 130, ընդունարան հեռ.՝ (011) 56 80 88, բարտուղարություն հեռ.՝ 59 61 88

№ 27/1304 «17» 11 2023թ.

Ձեր

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի
Վանաձորի գրասենյակի նախագահ
Արթուր Սաքունցին

Հարգելի՛ պարոն Սաքունց,

Ի պատասխան Ձեր կողմից ստացված 15.11.2023 թվականի թիվ Ե/2023-15.11/767 գրության հայտնում ենք, որ ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության կողմից՝ պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումները հրապարակված են gnumner.minfin.am կայքում: Կայքի որոնման դաշտում անհրաժեշտ է գրել համապատասխանաբար հետևյալ ծածկագրերը ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՃՈ/ԳՐԵՆԱԿԱՆ/Ա-65, ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2022-ԱՎ/ՀԱԿԱՍԱՌԻՉ/Ա-105, ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՃՈ/ՌԵՏ/Ա-110, ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՔՈԳՎ/ՀՆ/Ա-139, ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-ՇԻՆ/ՊԾ/2022/Հ-66, ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ/ՏԱՎՈՒՇ/2022/Հ-68, ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՍԱՐՔ/ԿՏՏՎ/2022/Հ-57, ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑՆԵՐ/2023/Հ-10, ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՎԿԱՅԱԿԱՆ/2023/Հ-17, ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-ՍԵՐՎԵՐ/2023/Հ-70, ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-ՆՈՐՈԳՈՒՄ/2021/Հ-37, ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՎԿԱՅԱԿԱՆ/2022/36-ՃՈ, ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՎԿԱՅԱԿԱՆ-2022, ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-60-ԷԼ-2022/ԱՎՏՈ և ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ-ՃՈ

2023/ԷԼՌԵԳ2, որից հետո անմիջապես երևում են համապատասխան ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ նշված բոլոր ծածկագրերով պայմանագրերը միակողմանի լուծվել են ՀՀ ՆԳՆ կողմից 2021-2023 թվականների ընթացքում:

Հարգանքով՝

Պետ, ոստիկանության գնդապետ **Ա.Ներսիսյան**

Գնումների համակարգման բաժին
Կատարող՝ Ա.Սարգսյան
Հեռ. 51-52

ՀՔԱՎ 2023թ. դեկտեմբերի 5-ի Ե/2023-05.12/808 գրություն

Տարբեր տեխնիկական բնութագրերով մեքենաներ գնելու հիմնավորումների մասին

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի
Հանրապետություն, Վանաձոր
Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of
Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: info@hcav.am

Ե/2023- 05.12/808
05.12.2023թ.

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն
Վահե Հովհաննիսյանին

Հարգելի՛ պարոն նախարար,

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը արդեն 15 տարի է իրականացնում է ՀՀ Ոստիկանության գործունեության, այդ թվում բարեփոխումներին ուղղված ծրագրերի մշտադիտարկում: Մասնավորապես, իրականացնում ենք ոստիկան-քաղաքացի հարաբերություններում մարդու իրավունքների մշտադիտարկում, իրավապահ մարմինների նկատմամբ վստահության համաթվի գնահատում, ՀՀ Ոստիկանության բարեփոխումների ռազմավարությունների մշտադիտարկում և հանդես ենք գալիս օրենսդրական նախաձեռնություններով:

Ներկայումս իրականացնում ենք Ոստիկանության բարեփոխումների ծրագրի շրջանակներում կատարված գնումների մշտադիտարկում՝ ուսումնասիրելով բաց աղբյուրները և խնդրում ենք տեղեկատվություն տրամադրել ստորև ներկայացվող հարցերի վերաբերյալ:

ՀՀ կառավարության 2017թ մայիսի 4-ի №526-Ն որոշմամբ հաստատված կարգի 16-րդ կետի համաձայն «Գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:»

2022թ. հոկտեմբերի 13-ին ՀՀ ոստիկանության և «Մուրան» ՍՊԸ միջև կնքվել է «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-60-ԷԼ-2022/ԱՎՏՈ» ծածկագրով գնման պայմանագիր, որով ընկերությունը պարտավորվել է 6 մարդատար մեքենա մատակարարել ՀՀ ոստիկանությանը: 2023թ. փետրվարի 6-ին ՀՀ ոստիկանությունը միակողմանի լուծել է պայմանագիրը, քանի որ «2022

թվականի գնումների պլանով չհաստատվեց ֆինանսական միջոցներ պայմանագրով նախատեսված թվով 6 հատ մարդատար մեքենաները ձեռք բերելու համար» «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի հոդված 42-ի և ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 9-ի №1159-Ն որոշման հավելվածով հաստատված ցանկի 3-րդ կետի (1) ենթակետի համաձայն խնդրում ենք պարզաբանել, արդյոք ՀՀ ոստիկանությունն իրավունք ունե՞ր սկսել գնման գործընթաց և կնքել պայմանագիր, եթե գնման առարկան ներառված չէր գնումների պլանում:

Խնդրում ենք տրամադրել տեղեկատվություն մեծածավալ և մեծաքանակ փոփոխությունների վերաբերյալ, ինչպես նաև փոփոխությունների հիմքերը (ՀՀ կառավարության որոշումներ, ՀՀ ՆԳՆ հրամաններ, այլ փաստաթղթեր, որոնք փոփոխության են ենթարկել ՀՀ ՆԳՆ գնումների պլանը):

Խնդրում ենք գրության պատասխանը տրամադրել թղթային տարբերակով կամ ուղարկել հետևյալ էլեկտրոնային հասցեին՝ info@hcav.am :

Հարգանքով՝
կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Օ.Զալյան
էլ. փ. ozalyan@hcav.am

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

ՀՀ Ազգային ժողով: 2022թ.: «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենք: Ընդունվել է 2022թ. դեկտեմբերի 16-ին: Հասանելի է https://www.arlis.am/documentview.aspx?docid=171927 էջում:
ՀՀ Ազգային ժողով: 2016թ.: «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք: Ընդունվել է 2016թ. դեկտեմբերի 16-ին: Հասանելի է https://www.arlis.am/documentview.aspx?docid=165080 էջում:
ՀՀ Ազգային ժողով: 2003թ.: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք: Ընդունվել է 2003թ. սեպտեմբերի 23-ին: Հասանելի է https://www.arlis.am/documentview.aspx?docid=175858 էջում:
ՀՀ Ազգային ժողով: 2010թ.: «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք: Ընդունվել է 2010թ. դեկտեմբերի 22-ին: Հասանելի է https://www.arlis.am/documentview.aspx?docid=138980 էջում:
ՀՀ Ազգային ժողով: 2018թ. «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք: Ընդունվել է 2018թ. հունվարի 16-ին: Հասանելի է https://www.arlis.am/documentview.aspx?docid=165069 էջում:
ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի №168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» №526-Ն որոշում: Հասանելի է https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=177283 էջում:
ՀՀ կառավարության 2017թ. ապրիլի 13-ի «գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը հաստատելու մասին» №390-Ն որոշում: Հասանելի է https://www.arlis.am/documentview.aspx?docID=112889 :
ՀՀ կառավարության 2017թ. ապրիլի 6-ի «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի №1370-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» №386-Ն որոշում: Հասանելի է arlis.am/DocumentView.aspx?DocID=182210 էջում:
ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի №168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին №526-Ն որոշում: Հասանելի է https://www.arlis.am/documentview.aspx?docid=185108 էջում:
ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 18-ի «Էլեկտրոնային աճուրդների իրականացման կարգը և էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակը հաստատելու մասին» №534-Ն որոշում: Հասանելի է https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=138560 էջում:
ՀՀ կառավարության 2020թ. ապրիլի 23-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության բարեփոխումների ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» №638-L որոշում: Հասանելի է https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=153121 էջում:
ՀՀ կառավարության 2022թ. հուլիսի 21-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում

վերաբաշխում և փոփոխություններ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի №2121-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու, Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը գումար հատկացնելու և մեկ անձից գնման ընթացակարգով գնման գործընթաց կազմակերպելու մասին» №1129-Ն որոշում: Հասանելի է https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=166483 էջում:
ՀՀ կառավարության 2021թ. «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» №2121-Ն որոշում, հասանելի է https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=176607 էջում:
ՀՀ կառավարության 2022թ. հուլիսի 21-ի նիստի օրակարգ: Հասանելի է https://e-gov.am/sessions/archive/2022/07/21/ էջում:

ՀՀ վարչապետի 2021թ. դեկտեմբերի 30-ի «Պետական եկամուտների և ծախսերի վրա ազդեցություն ունեցող ռազմավարական փաստաթղթերի մշակման, ներկայացման և հսկողության իրականացման մեթոդական հրահանգը հաստատելու մասին» №1508-Լ որոշում:Հասանելի է https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=159201 էջում:
ՀՀ կառավարության 2017թ. հոկտեմբերի 5 նիստի №42 արձանագրության քաղվածքի համաձայն հավանության արժանացած պետական եկամուտների և ծախսերի վրա ազդեցություն ունեցող ռազմավարական փաստաթղթերի մշակման, ներկայացման և հսկողության իրականացման մեթոդական հրահանգ: Հասանելի է https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=116402 էջում:

ՀՀ ֆինանսների նախարարի 2017թ. մայիսի 20-ի «Գնումների պլանում փոփոխություններ և լրացումներ կատարելու ծանուցման օրինակելի ձև, դրա լրացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2013 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 896-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» №231-Ն հրաման: Հասանելի է https://www.arlis.am/documentview.aspx?docID=114006 էջում:
ՏՀՁԿ և SIGMA. (2019թ): Հանրային կառավարման սկզբունքները. Հայաստան: Ելակետային գնահատման զեկույց: 2019թ. մարտ: Հասանելի է https://www.sigmaweb.org/publications/Baseline-Measurement-Armenia-2019-ARM.pdf էջում:
ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի №168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» №526-Ն որոշում: Հասանելի է https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=177283 էջում:
ՀՀ կառավարության 2019թ. դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» №1919-Ն որոշում: Հասանելի է https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=150328 էջում:
ՀՀ կառավարության 2020թ. դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» №2215-Ն որոշում: Հասանելի է https://www.arlis.am/documentview.aspx?docid=160186 էջում:

ՀՀ կառավարության 2021թ. դեկտեմբերի 23-ի «այաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» №2121-Ն որոշում: Հասանելի է https://www.arlis.am/documentview.aspx?docid=176607 էջում:
ՀՀ կառավարության 2022թ. դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» №2111-Ն որոշում: Հասանելի է https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=183476 էջում:
ՀՀ հաշվեքննիչ պալատի 2023թ. ապրիլի 26-ի թիվ 69-Ա որոշման հավելված. «Ընթացիկ եզրակացություն Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանությունում 2022 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ»: Հասանելի է https://armsai.am/hy/current-conclusions էջում:
SIGMA և ՏՀԶԿ: (2019թ.) Հանրային կառավարման սկզբունքները. Հայաստան. ելակետային գնահատման զեկույց: 2019թ. մարտ: Հասանելի է https://www.sigmaweb.org/publications/Baseline-Measurement-Armenia-2019-ARM.pdf էջում: